

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	2
Մակրոտնտեսական ցուցանիշներ	3
Ֆինանսական միջոցներ	4
Աուդիտ	15
Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր	16
Արդյունաբերություն	21
Քաղաքաշինություն	26
Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բնագավառ	31
Ջրամատակարարում	33
Տրանսպորտ, ճանապարհաշինություն	34
Գազամատակարարում	36
Էներգամատակարարում, Կապ	37
Գյուղատնտեսություն	38
Բնապահպանություն	43
Հողաշինություն և հողօգտագործում	48
Առևտուր և սպասարկում	50
Տեղական ինքնակառավարում	51
Տարածքային կառավարում	56
Կրթություն	57
Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր	63
Առողջապահություն	66
Սոցիալական ապահովություն	73
Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն	82
Արտաքին կապեր, միջազգային կազմակերպություններ	84
Փոխհարաբերություններ մարզպետարանի և պետական մարմինների միջև	90
Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր	90
Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակներ	93
Զորակոչ և զորհավաքային նախապատրաստություն	96
Օրինականության պահպանում	97
Աշխատանք կադրերի հետ և աշխատանքային կարգապահություն	98
Մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները	99
Մարզպետարան մուտք գործած գրությունների ընթացքը	101

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ընդհանուր տեղեկություններ	
Աշխարհագրական դիրքը՝	Հայաստանի Հանրապետության հյուսիս
Բնակավայրերը՝	ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա
Պետական սահմանը՝	Վրաստանի Հանրապետության հետ՝ 110 կմ
Տարածությունը՝	3798 քառ. կմ
Բնակչության թիվը՝	224,5 հազար մարդ, այդ թվում՝
➤ քաղաքային	132,6 հազար մարդ, կամ 59,1 %,
➤ գյուղական	91.9 հազար մարդ, կամ 40.9 %:

Մարզի համայնքների թիվը՝	113, որից
➤ քաղաքային	8,
➤ գյուղական	105:
➤ Մարզկենտրոնը	ք. Վանաձոր
➤ Կառավարման ձևը	տարածքային կառավարում

Ազգային կազմը	
➤ հայեր	97.0 %,
➤ ռուսներ	1.5 %,
➤ հույներ	1.0 %,
➤ այլ ազգություններ	0.5 %:

Սահմանամերձ բնակավայրերը՝ 5 (Զիլիգա, Պաղաղբյուր, Ապավեն, Արծնի, Ձորամուտ)

2015 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեության համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի պահանջների, Աղքատության Հաղթահարման Ռ-ազմավարական Ծրագրի գերակայությունների և 2014թ. հոկտեմբերի 6-ի ՀՀ կառավարության արտագնա նիստի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Լոռու մարզի 2014-2017թ.թ. սոցիալ – տնտեսական զարգացման ծրագրի» հիմնարար դրույթների ու զարգացման գերակա ուղղությունների համադրումն ու հիմնական դրույթների հետևողական իրականացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2015թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի տարածքային կառավարման իրականացման հիմնական նպատակային դրույթներ են եղել՝

- Պետական և տեղական բյուջեների միջոցների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը:
- Կրթական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը և հանրակրթական դպրոցների ջեռուցման համակարգերի գազաֆիկացումը:
- Արտադրական հզորությունների վերագործարկումը և նորերի շահագործումը՝ առաջնահերթությունը տալով լեռնամետալուրգիային, հանքարդյունաբերությանը և սննդի արդյունաբերություններին:
- Փոքր և միջին ձեռներեցության զարգացման խթանում և աջակցումը:
- Տրանսպորտային փոխադրումների կանոնակարգումը և ընդլայնումը:
- Կապի նոր ծառայությունների բացմանը աջակցումը և սպասարկման որակի բարելավման խթանումը:
- Մասնավոր գյուղացիական տնտեսություններին վարկերի հատկացման աջակցումը:

- Բնական աղետների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:
- Առողջապահության բնագավառի աշխատանքների բարելավումը:
- ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը:
- Նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության մակարդակի իջեցումը:
- «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Աջակցություն ցուցաբերել թիվ 31, 32 ԸԸՀ-երին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ ՀՀ Սահմանադրության բարեփոխումների, մարզի համայնքների ՏԻՄ-երի ընտրությունների նախապատրաստման և անցկացման կազմակերպման աշխատանքներում:
- Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել են 119 մրցույթներ, որից կայացել են 45-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 54 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 51-ը:
- ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ իրականացվել է մարզի 33 համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստում: Վերապատրաստվել են 11 համայնքների ղեկավարներ և 31 համայնքների ավագանու՝ 85 անդամներ: Վերապատրաստումը իրականացվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ համայնքների ղեկավարներից ստացված հայտերի հիման վրա:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


Լոռու մարզի 2015թ. սոցիալ-տնտեսական վիճակի մասին

	<i>Չափման միավորը</i>	2015թ.	2014թ.	Աճը, %
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն դրամ	120307.2	69938.1	202.2
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը	մլն դրամ	73300.0	73800.0	99.3
Շինարարության ծավալը	մլն դրամ	26751.5	42292.3	60.1
Առևտրի շրջանառությունը	մլն դրամ	50090.8	22607.1	221.6
Ծառայությունների ծավալը	մլն դրամ	17720.4	15746.2	112.5
Ընդամենը մարզում	մլն դրամ	288169.9	224383.7	128.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն կվտ/ժ	207.3	165.0	125.6
Միջին ամսական անվանական աշխատավարձը (նոյեմբեր)	դրամ	145302	146243	99.4

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում արդյունաբերության տեսակարար կշիռը 2015թ. կազմում է 41.7%, գյուղատնտեսությանը՝ 25.4%, շինարարությանը՝ 9.3%, առևտրինը՝ 17.4% և ծառայություններինը՝ 6.2%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 31.2%, 32.9%, 18.8%, 10.1% և 7.0%-ի դիմաց:

Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում, ընթացիկ գներով, կազմել է 9.1%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը՝ 7.3%, շինարարության ծավալի տեսակարար կշիռը՝ 5.9%, առևտրի շրջանառությանը՝ 3.7% և ծառայությունների ծավալինը՝ 1.5%: Լոռու մարզի տնտեսության ընդհանուր ծավալը միջին հաշվով կազմում է հանրապետական ցուցանիշի 4.6%-ը:

Լոռու մարզի տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռների համեմատականը ՀՀ տնտեսության մեջ, %



Առաջիկա տարիներին մարզի համար որպես զարգացման գերակա ուղղություններ կմնան հանքագործական արդյունաբերությունը (որպես արտահանման հիմնական աղբյուր), թեթև արդյունաբերությունը (հաշվի առնելով ԵՏՄ-ի մեծ շուկան), գյուղմթերքների վերամշակման փոքր և միջին բիզնեսի ընդլայնումը (հաշվի առնելով տեղական շուկան և արտահանման հնարավորությունները), տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտը (մեծ հեռանկարներ և շուկա), տուրիզմը (հաշվի առնելով մարզի պատմամշակութային արժեքները և բնությունը) և այլն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
2015Թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

2015 թվականի համայնքային բյուջեների եկամուտների կատարման վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել նախորդ տարվա համեմատությամբ եկամուտների աճ: Մարզի համայնքների բյուջեներով 2015թ կտրվածքով նախատեսված մուտքերը ապահովվել են 100.0%-ով կամ նախատեսված 6418.5 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 6415.5 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 6164.7 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 1661.6 մլն. դրամ:

(հազար դրամ)


h/h	Եկամուտների անվանումը	2014թ. Բյուջե			2015թ. Բյուջե			2015թ-ի աճը 2014թ-ի նկատ.	2015թ-ի փաստ. նկատ. (%)
		պլան	փաստ.	կատ %	պլան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	377348.7	337064.5	89.3	362828.6	335963.3	92.6	-1101.3	99.7
2	Գույքահարկ	547073.3	599324.2	109.6	629179.4	664149.6	105.6	64825.5	110.8
3	Պետական տուրք	49684.5	51855.8	104.4	46770.0	42522.9	90.9	-9332.9	82.0
4	Տեղական տուրք	111075.0	111212.3	100.1	105166.3	108460.0	103.1	-2752.4	97.5
5	Գույքի վարձ. վճար	221285.0	229576.0	103.7	222044.6	229694.5	103.4	118.5	100.1

6	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	5170.0	4968.6	96.1	8278.8	5596.8	67.6	628.2	112.6
7	Տեղական վճարներ	259143.5	233832.3	90.2	243460.1	220279.6	90.5	-13552.6	94.2
8	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	2611.0	2859.0	109.5	2586.0	2966.1	114.7	107.0	103.7
9	Մուտքեր տույժերից, տուգանքներից	5070.0	3489.9	68.8	4800.0	4187.8	87.2	698.0	120.0
10	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	400.0	400.0	100.0	0.0	1500.0		1100.0	375.0
11	Այլ եկամուտներ	40920.6	45528.3	111.3	40417.4	47769.4	118.2	2241.1	104.9
12	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, այլ դոտացիաներ	3918262.0	3918249.1	100.0	4293507.1	4286398.6	99.8	368149.5	109.4
13	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	64628.9	64584.7	99.9	80606.0	80586.5	100.0	16001.8	124.8
14	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	115714.3	113247.4	97.9	137853.9	136220.3	98.8	22972.9	120.3
	ԴԱՀԿ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից					-1609.0		-1609.0	
	Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ	5718386.9	5716192.1	100.0	6177498.2	6164686.4	99.8	448494.3	107.8
15	Տարեսկզբի ազատ մնացորդ	6931.9	6931.9	100.0	28308.9	28308.9	100.0	21377.0	408.4
	Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր	5725318.8	5723124.0	100.0	6205807.1	6192995.3	99.8	469871.3	108.2
1	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	175710.1	170944.1	97.3	222867.5	233231.6	104.7	62287.5	136.4
2	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	123777.1	106399.6	86.0	119288.0	83241.4	69.8	-23158.2	78.2
3	Այլ մուտքեր	4000.0	4000.0	100.0	18131.0	17600.7	97.1	13600.7	440.0
	ԴԱՀԿ-ով տարված գումարներ բյուջեի ֆոնդային մասից							0.0	#DIV/0!

	Ֆոնդային բյուջեի եկամուտներ	303487.2	281343.7	92.7	360286.5	334073.7	92.7	52730.0	118.7
4	Տարեսկզբի ազատ մնացորդ	469808.6	469808.6	100.0	550468.1	550468.1	100.0	80659.5	117.2
	Ֆոնդային բյուջեի մուտքեր	773295.7	751152.3	97.1	910754.6	884541.8	97.1	133389.5	117.8
	Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ	1619381.6	1619710.9	100.0	1665531.2	1661590.0	99.8	41879.1	102.6
	Ընդամենը բյուջեի եկամուտներ	5898097.0	5891136.2	99.9	6418496.7	6415518.7	100.0	524382.5	108.9
	Ընդամենը բյուջեի մուտքեր	6374837.4	6367876.7	99.9	6997273.7	6994295.7	100.0	626419.0	109.8


Համայնքների սեփական եկամուտները 2015թ. կտրվածքով կազմել է 1661.6 մլն դրամ, 2014թ.-ի 1619.7 մլն դրամի դիմաց կամ եկամուտների ինդեքսի աճը 2014թ-ի նկատմամբ կազմել է 102.6%, բացարձակ աճը 2014-ի նկատմամբ՝ 41.9 մլն. դրամ: Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 99.8%-ով՝ նախորդ տարվա 100.0%-ի դիմաց: Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 92.7%-ով՝ կրկնելով նախորդ տարվա ցուցանիշը:

« Լոռու մարզի համայնքների բյուջեների կատարողականը 2014-2015թթ.. կտրվածքով



Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների աճ են գրանցել Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ 105.6%, Սպիտակի տարածաշրջանի համայնքներում՝ 104.2%, Թումանյանի տարածաշրջանի համայնքներում՝ 105.7%, Ստեփանավանի տարածաշրջանի համայնքներում՝ 103.8%, իսկ Գուգարքի տարածաշրջանում պահպանվել է նախորդ տարվա ցուցանիշը:

Եթե դիտարկենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարածաշրջանների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Գուգարքի տարածաշրջանը 45.8%, ապա Թումանյանի տարածաշրջանը 19.5%, Սպիտակի տարածաշրջանը՝ 13.2%, Ստեփանավանի տարածաշրջանը՝ 11.4%, Տաշիրի տարածաշրջանը՝ 10.1%:



2015թ.ին նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրումը նվազել է մարզի 50 համայնքներում (համայնքների 44.3%-ը, այդ թվում՝ Թումանյանում՝ 14 համայնք, Ստեփանավանում՝ 9 համայնք, Գուգարքում՝ 12 համայնք, Տաշիրում՝ 9 համայնք, Սպիտակում՝ 6 համայնք:

Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների կատարումը 01.01.2016թ. դրությամբ

Համայնքի անվանումը	մինչև 60%	Համայնքի անվանումը	մինչև 80%	Համայնքի անվանումը	մինչև 100%	Համայնքի անվանումը	100% և ավելի
Անտառամուտ	43.2	Նովոսելցովո	67.8	Գուգարք	97.0	ք.Վանաձոր	100.4
1		Պաղարքյուր	62.2	Շահումյան	91.9	Լեռնապատ	104.3
		Ապավեն	69.5	Զորագյուղ	91.6	Արջուտ	100.4
		ք.Շամլուղ	76.6	Վահագնի	89.9	Բազում	105.8
		Դսեղ	69.1	Վահագնաձոր	84.5	Մարգահովիտ	101.5
		Մարց	79.1	Ազնվաձոր	87.5	Լեյրմոնտովո	102.6
		Ուռուտ	78.4	Անտառաշեն	83.4	Ֆիոլետովո	101.4
	7			Հալլավար	80.4	Դարպաս	101.3
				Լուսաղբյուր	94.6	Զորագետական	100.0
				Շիրակամուտ	89.5	Եղեգնուտ	100.2
				Նոր Խաչակապ	93.4	Դեբետ	104.1
				Սարալանջ	90.4	Փամբակ	102.5
				Գուգարան	85.0	Քարաբերդ	106.6
				Ղուրսայի	96.9	ք.Սպիտակ	105.9
				Սարչապետ	98.9	Հարթագյուղ	100.0
				Նորաշեն	99.6	Լեռնանցք	109.3
				Լեռնահովիտ	96.4	Կաթնաջուր	134.3
				Կաթնառատ	97.7	Ծաղկաբեր	117.6
				Բլազդոդարնոյե	81.6	Մեծ Պարնի	101.2
				Մեղովկա	85.5	Արևաշող	112.3
				Զյունաշող	80.1	Սարամեջ	100.0
				Պետրովկա	82.8	Սարահարթ	105.2
				Դաշտաղեն	94.4	Գեղասար	103.9
				Մեղվահովիտ	85.4	Քարաձոր	101.7
				Արծնի	83.5	Շենավան	118.8
				Պրիվոլնոյե	86.3	Լեռնավան	104.5
				Սարատովկա	87.8	Ինկոյան	104.7
				ք.Ախթալա	91.8	Զրաշեն	101.0
				Անիծոր	99.7	ք.Տաշիր	111.7
				Այգեհատ	94.2	Մեծավան	118.6
				Արդվի	88.3	Միխայելովկա	100.3
				Արևածագ	92.6	Զորամուտ	101.5
				Լորուտ	86.9	Ապվերդի	101.1

Ծաթեր	90.8	ք.Թումանյան	101.5
Կարմիր Աղեզի	99.0	Աթան	102.5
Կաճաճկուտ	94.3	Աքորի	104.4
Հաղպատ	85.3	Թեղուտ	113.1
Մղարթ	84.8	Ծաղկաշատ	102.2
Շամուտ	94.7	Հազվի	114.9
Շնող	91.2	Ճոճկան	126.0
Քարինջ	89.2	Մեծ Այրում	120.3
Օձուն	99.7	Նեղոց	129.0
Կուրթան	99.1	Չկալով	117.2
Վարդաբլուր	92.2	Զիլիզա	104.4
Հոբարձի	83.0	Քարկոփ	124.7
Գյուլագարակ	84.2	ք.Ստեփանավան	100.4
Պուշկինո	87.2	Գարգառ	100.0
Ամրակից	93.7	Բովաձոր	118.3
Ուրասար	90.0	Լոռի Բերդ	109.8
Կաթնաղբյուր	82.2	Կողես	100.0
Սվերդլով	83.5	50	
Լեջան	93.2		
Ագարակ	99.7		
Յաղդան	96.0		
Հովնանաձոր	87.2		



55

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015 թ-ի հունվարի 1-ի դրությամբ սեփական եկամուտները մինչև 60% կատարել էին 2 համայնքներ, 2016թ-ի հունվարի 1-ի դրությամբ՝ 1 համայնք, նույն ժամանակաշրջանում 60-80% կատարում են ապահովել համապատասխանաբար 14 և 7 համայնքներ, 80-100% համապատասխանաբար 48 և 55 համայնքներ, 100%-ից ավել՝ 49 և 50 համայնքներ, այսինքն մինչև 80% սեփական եկամուտներ ունեցող համայնքների թիվը նվազել է 8-ով, իսկ 80-100%-ից ավել աճել՝ 7-ով, 100%-ից ավել աճել՝ 1-ով: Առանձնապես մտահոգիչ է այն փաստը, որ ըստ վերջին տարիների վերլուծությունների, ցածր կատարողական ապահովող համայնքները հիմնականում անփոփոխ են մնում: Ցածր հավաքագրման պատճառաբանություններում կան բազմաթիվ սյուբեկտիվ գործոններ, որոնցից որպես հիմնականը կարելի է համարել համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ավագանու շատ պասիվ և անհետևողական աշխատանքը սեփական եկամուտների հավաքագրման գործում:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետ մեկտեղ նաև անտարբեր և անբավարար աշխատանքի հետևանքով 2015թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ զուտ սեփական եկամուտների մուտքերը զգալիորեն պակասել են հատկապես հետևյալ համայնքներում.

(հազար դրամ)

h/h	Համայնքի անվանումը	Փաստացի մուտքեր		2015թ.փաստացի կատ.% 2014թ-ի նկատմամբ
		01.01.2015թ.	01.01.2016թ.	
1	Դսեղ	14,685.1	11,011.0	75.0
2	Շահումյան	10,685.2	8,166.5	76.4
3	Անտառամուտ	1,198.4	895.9	74.8
4	Ահնիձոր	2,959.8	2,104.1	71.1
5	Մարց	3,103.0	2,266.9	73.1
6	Նովոսելցովո	2,358.2	1,682.7	71.4
7	Պաղաղբյուր	1,245.7	974.9	78.3
8	Ապավեն	684.2	534.7	78.2



01.01.16թ. դրությամբ մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 20.2%, գույքահարկինը՝ 40.0%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 13.8%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 21.3%, 34.6% և 14.7%-ի դիմաց:

01.01.2016թ. դրությամբ հողի հարկի 362.8 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 336.0 մլն դրամ, կամ 92.6%, (2014թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 99.7%) որը նախորդ տարվա փաստացի մուտքերից պակաս է 1.1 մլն. դրամով: Հողի հարկի հավաքագրումը հատկապես ցածր է հետևյալ համայնքներում (մինչև 70%).

հազար դրամ

Հ/Հ	Համայնքի անվանումը	01.01.16թ.		
		պլան	փաստ	%
1	2	3	4	5
1	Անտառամուտ	1,105.5	264.1	23.9
2	Դսեղ	7,915.5	4,809.2	60.8
3	Կաճաճկուտ	358.4	212.7	59.3
4	Մղարթ	2,297.5	1,544.5	67.2
5	Ձյունաշող	2,507.8	1,572.5	62.7

6	Պաղարքյուր	961.6	410.1	42.6
7	Դաշտադեն	1,720.7	1,080.3	62.8
8	Պրիվոլնոյե	2,944.2	1,838.2	62.4
9	Շիրականուս	4,413.6	2884.4	65.4
10	Ուռուս	8,755.6	5,486.9	62.7


Հողի հարկի հավաքագրումը հատկապես վատ է Տաշիրի տարածաշրջանում՝ 85.7%, 70%-ից ցածր մուտքագրում ունեն Տաշիրի տարածաշրջանում 4 համայնք, Թումանյանի տարածաշրջանում 3 համայնք, Գուգարքի, Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջաններում 1-ական համայնք,:

Նույն ժամանակահատվածում հողի հարկի հավաքագրումը նախատեսվածի 80%-ը գերազանցում է 93 համայնքներում, որից 100%-ը 52 համայնքներում:

Գ/Գ	Համայնքների անվանումը	01.01.16թ.			Գ/Գ	Համայնքների անվանումը	01.01.16թ.		
		պլան	փաստ	Կատ%			պլան	փաստ	Կատ%
1	Ստեփանավան	9,851.3	11,530.9	117.0	27	Թեղուս	1,614.3	1,895.6	117.4
2	Կուրթան	6,225.5	6,227.8	100.0	28	Ծաղկաշատ	885.0	887.3	100.3
3	Լոռի Բերդ	949.8	969.5	102.1	29	Կարմիր Աղեգի	1,190.2	1,193.3	100.3
4	Լեջան	3,739.0	3,766.3	100.7	30	Հազվի	870.8	871.6	100.1
5	Ագարակ	4,178.2	4,178.2	100.0	31	Հաղպատ	912.6	945.5	103.6
6	Յաղդան	2,500.3	2,500.7	100.0	32	Մեծ Այրում	5,468.7	5,498.8	100.6
7	Հովնանաձոր	352.0	356.8	101.4	33	Նեղոց	199.6	221.7	111.1
8	Լեռնապատ	4,000.0	4,002.4	100.1	34	Շնող	8,470.4	9,915.4	117.1
9	Բազում	1,247.9	1,334.9	107.0	35	Չկալով	1,043.5	1,062.7	101.8
10	Մարգահովիտ	7,263.6	7,298.4	100.5	36	Ջիլիգա	346.5	360.3	104.0
11	Լերմոնտովո	3,353.1	3,446.3	102.8	37	Քարկոփ	50.0	119.4	238.9
12	Ֆիդլետովո	4,622.1	4,717.7	102.1	38	Օձուն	15,026.0	15,026.8	100.0
13	Ձորագետավան	63.9	64.4	100.8	39	Կաթնառատ	245.3	267.4	109.0
14	Եղեգնուս	1,470.5	1,471.2	100.0	40	Ձորամուս	2,179.9	2,205.5	101.2
15	Դեբետ	1,537.4	1,541.0	100.2	41	Ապավեն	282.1	283.0	100.3
16	Փամբակ	181.4	186.1	102.6	42	Սպիտակ	4,200.0	4,355.6	103.7
17	Վահագնաձոր	316.0	331.0	104.7	43	Լեռնանցք	1,559.2	1,704.7	109.3
18	Հալլավար	514.6	535.7	104.1	44	Կաթնաջուր	5,504.6	5506.0	100.0
19	Ալավերդի	4,613.5	4,624.4	100.2	45	Մեծ Պարնի	15,542.0	15,560.9	100.1
20	Ախթալա	523.3	637.5	121.8	46	Սարահարթ	2,111.3	2,113.2	100.1
21	Թումանյան	862.5	867.8	100.6	47	Գեղասար	2,230.0	2,241.0	100.5
22	Շամլուղ	241.4	324.2	134.3	48	Նոր Խաչակապ	1,433.5	1,477.1	103.0
23	Աթան	1,975.5	2,061.5	104.4	49	Շենավան	1,075.6	1,174.0	109.2
24	Ահնիձոր	989.9	990.8	100.1	50	Լեռնավան	1,203.1	1,205.8	100.2
25	Արևածագ	4,626.7	4,642.3	100.3	51	Ջրաշեն	5,098.3	5,142.1	100.9
26	Աքրի	1,486.4	1,507.7	101.4	52	Ղուրսալի	1,137.3	1,218.6	107.2

Հողի հարկի հավաքագրումը 2014թ. համեմատությամբ նվազել է 63 համայնքներում, կամ համայնքների 55.8%, այդ թվում՝ Գուգարքի տարածաշրջանում՝ 13, Սպիտակի տարածաշրջանում՝ 13, Տաշիրի տարածաշրջանում՝ 9, Թումանյանի տարածաշրջանում՝ 15, Ստեփանավանի տարածաշրջանում՝ 13 համայնքներ:

Վերջին 5 տարիների ընթացքում հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



ՀՀ Լոռու մարզի համայնքների հողի հարկի հավաքագրումը 2011-2015թթ. (մլն. դրամ)

Գույքահարկի 629.2 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 664.2 մլն դրամ, կամ 105.6%, (2014թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 110.8%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 64.8 մլն. դրամ:

Գույքահարկի հավաքագման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 105.6%, Սպիտակի տարածաշրջանում՝ 116.5%, Տաշիրի տարածաշրջանում՝ 118.2%, Գուգարքի տարածաշրջանում՝ 105.2%, իսկ Թումանյանի տարածաշրջանում՝ 98.1% և Ստեփանավանի տարածաշրջանում՝ 96.3%:

Գույքահարկի գանձման բարձր մակարդակ է գրանցվել (ավելի քան 80%) մարզի 95 համայնքներում, 100%-ի սահմանագիծը հատել են 57 համայնքներ.

Գ/Գ	Համայնքների անվանումը	01.01.16թ.			ՀՀ	Համայնքների անվանումը	01.01.16թ.		
		պլան	փաստ	Կատ%			պլան	փաստ	Կատ%
1	Ստեփանավան	38,899.8	39,069.1	100.4	30	Մարց	579.4	586.1	101.2
2	Գար-գար	1,975.2	1,996.9	101.1	31	Մեծ Այրում	690.0	705.3	102.2
3	Ուրասար	285.0	288.5	101.2	32	Շամուտ	343.9	357.3	103.9
4	Լոռի Բերդ	352.8	385.7	109.3	33	Քիլիգա	257.3	292.9	113.8
5	Ագարակ	1,773.1	1,778.9	100.3	34	Քարկոփ	600.8	666.8	111.0
6	Յաղդան	58.8	65.0	110.6	35	Օձուն	8,965.9	8,966.5	100.0
7	Կողես	673.5	773.2	114.8	36	Տաշիր	21,493.7	28,734.6	133.7
8	Վանաձոր	320,000.0	340,032.7	106.3	37	Մեծավան	6,623.3	9,356.9	141.3
9	Լեռնապատ	1,951.2	1,952.1	100.0	38	Սարչապետ	4,084.5	4,157.0	101.8
10	Բազում	2,519.5	2,542.1	100.9	39	Միխայլովկա	555.9	716.8	128.9
11	Մարգահովիտ	5,833.6	5,848.3	100.3	40	Նովոսեյցովո	143.4	157.5	109.8
12	Լեռնոնտովո	787.1	787.9	100.1	41	Արձնի	279.2	427.9	153.3
13	Ֆիդեոտովո	1,631.2	1,632.0	100.0	42	Պրիվոլնոյե	976.2	1,193.8	122.3
14	Դարպաս	2,757.8	3,035.7	110.1	43	Սպիտակ	38,770.0	44,501.6	114.8
15	Ձորագյուղ	232.0	256.9	110.7	44	Լեռնանցք	2,134.4	2,349.5	110.1
16	Ձորագետական	654.7	654.8	100.0	45	Կաթնաջուր	2,603.9	5,720.2	219.7
17	Եղեգնուտ	802.2	806.2	100.5	46	Ծաղկաբեր	1,875.0	2,295.0	122.4
18	Դեբետ	549.6	577.1	105.0	47	Մեծ Պարնի	3,248.7	3,373.7	103.8
19	Փամբակ	684.9	684.9	100.0	48	Շիրակամուտ	2,263.7	2,730.1	120.6
20	Ալավերդի	38,333.4	38,638.9	100.8	49	Արևաշող	2,321.4	3,351.4	144.4
21	Թումանյան	2,659.9	2,735.6	102.8	50	Սարամեջ	1,746.4	1,882.6	107.8
22	Շամլուղ	972.4	991.2	101.9	51	Սարահարթ	2,050.5	2,326.6	113.5
23	Աինիձոր	329.6	343.1	104.1	52	Գեղասար	1,418.7	1,608.2	113.4
24	Արդվի	152.6	155.7	102.0	53	Քարաձոր	400.0	730.9	182.7
25	Աքորի	1,644.5	1,937.7	117.8	54	Շենավան	712.7	1,013.8	142.2
26	Թերուտ	2,341.8	2,641.3	112.8	55	Լեռնավան	1,900.3	1,909.9	100.5

27	Ծաղկաշատ	206.8	249.3	120.5	56	Խնկոյան	355.4	404.7	113.9
28	Հազվի	312.2	562.5	180.2	57	Ջրաշեն	2,955.0	2,996.6	101.4
29	Հաղպատ	1,475.4	1,895.1	128.4					


Գույքահարկի հավաքագրումը հատկապես ցածր է հետևյալ համայնքներում (մինչև 60%).

Ձ/Ձ	Համայնքների անվանումը	01.01.16թ.		
		պլան	փաստ	Կտոս%
1	Անտառամուտ	392.8	125.8	32.0
2	Ազնվածոր	459.3	179.5	39.1
3	Կաճաճկուտ	400.0	226.9	56.7
4	Ապավեն	192.4	104.7	54.4
5	Հովնանածոր	286.2	167.5	58.5

Գույքահարկի հավաքագրման ծավալները 2014թ. համեմատությամբ նվազել է 34 համայնքներում, այդ թվում նվազումը հատկապես մեծ է Փամբակ, Քարաբերդ, Նովոսելցովո, Ղուրսալի համայնքներում:

Նախորդ տարվա համեմատությամբ գույքահարկի ծավալները աճել են բոլոր տարածաշրջաններում՝ Տաշիրում՝ 108.2%, Գուգարքում՝ 106.5%, Ստեփանավանում՝ 120.1%, Սպիտակում՝ 116.4%, Թումանյանում՝ 121.7%:

Վերջին 5 տարիների ընթացքում գույքահարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



ՀՀ Լոռու մարզի համայնքների գույքահարկի հավաքագրումը 2011-15թթ. (մլն. դրամ)

2015թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 222.0 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է 229.7 մլն. դրամ կամ 103.4%, (2014թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 100.1%, որը նախորդ տարվանից ավել է հավաքագրված 118.5 հազ. դրամ:

Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 103.1%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 100.1%-ի դիմաց, սակայն փաստացի հավաքագրումը նվազել է 2.8 մլն. դրամով: 2015թ. ընթացքում տեղական տուրքերի գծով մուտք չեն ունեցել 10 համայնք:

Պետական տուրքի գանձումը կազմել է ընդամենը 90.9%, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 9.3 մլն. դրամով:

2015թ. պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 3,900,826,5 հազ.դրամ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով: 2015թ. ընթացքում պետական բյուջեից համայնքների

բյուջեներին, Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին, հողվածով հատկացվել է 283,102.1 հազար դրամ:

2015թ. նոյեմբերի 12-14 ուժեղ քամիներից տուժած Լոռու մարզի համայնքներին պետական բյուջեից հատկացվել է 102 725.0 հազ. դրամ, որը բաշխվել է 46 համայնքների անհատական տների և բազմաբնակարան շենքերի վնասները փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև 17 համայնքների համայնքային ենթակայության շինությունների վնասները փոխհատուցելու նպատակով հատկացվել է 58532.0 հազ. դրամ:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2015թ-ի համար նախատեսվել են 6205.8 մլն. դրամ, 01.01.2016թ. դրությամբ փաստացի վճարվել է 5913.9 մլն. դրամ, կամ 95.3 %, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել է 910.8 մլն. դրամ, որից վճարվել է 494.1 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 54.2%-ով:

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2321041.5	2206049.1	95.0	37.3
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱԻՀ)	540.0	356.4	66.0	0.0
3	ՀԱՍՏՈՒՄԱԿԱՆ ԿԱՐԳ,ԱՆՎՏԱՆԳ. ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ				
4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	183684.6	175248.1	95.4	3.0
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	621008.1	608632.7	98.0	10.3
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	305414.8	293925.1	96.2	5.0
7	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	5904.1	5604.0	94.9	0.1
8	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	548052.8	529804.1	96.7	9.0
9	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1766986.1	1728909.8	97.8	29.2
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	289887.7	275749.8	95.1	4.7
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	163287.5	89620.7	54.9	1.5
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	119288.0	83241.4	69.8	1.4
	Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր	6205807.2	5913899.9	95.3	93.5
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	284721.3	168373.9	59.1	34.1
2	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	56840.6	-53288.3	-93.8	-10.8
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	165660.1	130109.4	78.5	26.3
4	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	261514.5	173530.0	66.4	35.1
5	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	625.0	0.0	0.0	0.0
6	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	76353.1	33177.8	43.5	6.7
7	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	52275.2	42176.0	80.7	8.5

8	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	12765.0	0.0	0.0	0.0
Ընդամենը ֆոնդային բյուջե		910754.7	494078.7	54.2	7.8
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		6997274.0	6324737.2	90.4	

Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 49890.9 հազար դրամ, որը ամբողջությամբ Վանաձոր համայնքի պարտքն է:

Ստորև ներկայացված են 2014-2015թթ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին ֆինանսավորված գումարները.

(հազ. դրամ)

	2014թ. ֆինանսավորում	2015թ. նախատեսված	2015թ. ֆինանսավորում	2015թ.-ի կատարման տոկոս	2015թ.-ը 2014թ.-ի նկատմամբ /%-ով/
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	454063.7	580414.7	571620.4	98.5	125.9
Հանրակրթական ուսուցում	5881762.6	6235952.4	6235951.4	100.0	106.0
Ներառական կրթություն	166395.8	281184.0	281184.0	100.0	169.0
Հատուկ կրթություն	109017.7	115149.8	115149.8	100.0	105.6
Արտադպրոցական դաստիարակություն	0	0	0		
Նախադպրոցական (կրթություն)	32930.7	41128.6	41128.6	100.0	124.9
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	7947.1	8311.8	8311.8	100.0	104.5
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	28357.8	38943.5	38943.5	100.0	137.3
Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	278.1	278.1	278.1	100.0	100.0
Կրթական հիմնարկների եւ օբյեկտների շինարարություն	213903.8	179840	144290.3	80.2	67.5
Թանգարանային ծառայություններ	13195.1	16157.6	16157.6	100.0	122.5
Թատերական ներկայացումներ					
Մշակութային միջոցառումների իրականացում	3542.3	3542.3	3542.3	100.0	100.0
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	114664.0	861249.1	848128.5	98.5	739.7
Մարզային նշանակության ա/ճ-ների ընթացիկ ձմեռային պահպանում և շահագործում	69043.7	71400.0	71400.0	100.0	103.4
Պետական նշանակության ա/ճ-ների և) հիմնանորոգում	435892.5	291000.0	270262.6	92.9	62.0
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում	520434.2	303264.0	291616.3	96.2	56.0

Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում	0	3600.0	3600.0	100.0	
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	396181.2	283102.1	283102.1	100.0	71.5
Սուբվենցիաներ	0	0	0		
Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	0	0	0		
Ընդամենը	8447610.3	9314518.0	9224667.3	99.0	109.2
Դոտացիա	3522096.5	3900826.5	3900826.5	100.0	110.7
Ընդամենը	11969706.8	13215344.5	13125493.8	99.3	109.6

2015թ. առողջապահության ոլորտում նախատեսված է եղել պետական պատվերի կատարողական աշխատանքների բազային ծավալ 3749977.6 հազար դրամ, ընդունվել է կատարողական՝ 3717816.2 հազար դրամ, որը ֆինանսավորվել է 100 %-ով: Աճը 2014թ. նկատմամբ կազմել է 108.3%:

Հիվանդանոցային ծրագրի նախահաշվով նախատեսված է եղել որպես պետական պատվերի կատարողական աշխատանքների բազային ծավալը 1562382.1 հազար դրամ, որի դիմաց ընդունված կատարողականը կազմել է 1552718.2 հազար դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Պոլիկլինիկական, դիսպանսերային, ամբուլատորական ծրագրերով նախահաշվով նախատեսված բազային ծավալը կազմել է 2187595.5 հազար դրամ, ընդունվել է կատարողական 2165098.0 հազար դրամ, որն էլ ֆինանսավորվել է 100%-ով:

2015թ. վճարովի ծառայության մուտքերը կազմել են ընդամենը՝ 570895.3 հազար դրամ, որից պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանականերում համավճարային հիմունքով իրականացված ազգաբնակչությունից ստացված եկամուտներ կազմել են 31625.1 հազար դրամ: Վճարովի ծառայություններից մուտքերը 2014թ. նկատմամբ աճել են 105.1%-ով:

ԱՌՒԴԻՏ

2015թ. տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է 91 աուդիտ, որից 3 քաղաքային համայնքներում, մարզային ենթակայության «Լոռի Փամբակի երկրագիտական թանգարան» և 49 կրթական ՊՈԱԿ-ներում (ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում) և առողջապահական 31 ընկերություններում («Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման օրինականություն) և ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառման անձանակազմի կառավարման և գյուղատնտեսության, բաժիններում, ինչպես նաև 4 ՍԱՏԳ-ներում (ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանն առնչվող գործառույթներ):

Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի վեց նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա խախտում թույլ տրված մի շարք ՊՈԱԿ-ների տնօրեններ ենթարկվել են կարգապահական տույժերի՝ մեկն ազատվել է աշխատանքից, 4-ը՝ ստացել են «նկատողություն»: Արձանագրվել է ավելի քան 47.1 մլն դրամի տարաբնույթ խախտումներ, որից 20.34 մլն դրամը վերականգնման կամ վերաձևակերպման գումար է, որից 6.4 մլն դրամը ենթակա է

պետքույցե վերադարձման: Մնացածը օրենսդրության պահանջների խախտումներ են, հատկապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի:

Մարզպետի կողմից գրություններ են հասցեագրվել աուդիտի ենթարկված համայնքների ղեկավարներին և կազմակերպությունների տնօրեններին: Կատարված աուդիտի հիման վրա Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի բոլոր տարածաշրջանների մարզային ենթակայության կրթական հաստատությունների ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ կազմակերպվել են խորհրդակցություններ, որոնց ընթացքում վեր են հանվել թերությունները, տրվել համապատասխան հանձնարարականներ և հսկողություն սահմանվել ՊՈԱԿ-ների կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ: Ներքին աուդիտի բաժնի կողմից պարբերաբար ցուցաբերվել է մեթոդական օգնություն, իսկ արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթեր: Վերականգնման ենթակա գումարը հիմնականում վերականգնվել են:

Քանի որ անցած տարիների աուդիտի գործունեությունը փաստել է, որ 2013թ. համեմատ 2015թ. պատկերը կտրուկ փոխվել է, նախկին խախտումները և թերությունները համարյա չեն արձանագրվում, որը հնարավորություն է տալիս աուդիտի ուսումնասիրման շրջանակները ավելի ընդլայնել, նրանում ներառելով այնպիսի գործառույթներ, որոնք մարզի կազմակերպություններին առաջադրում են վերադաս ստուգող կառույցները:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2015 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեության համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի պահանջների, Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի գերակայությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. փետրվարի 6-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Լոռու մարզի 2014-2017թ.թ. սոցիալ – տնտեսական զարգացման ծրագրի» հիմնարար դրույթների ու զարգացման գերակա ուղղությունների համադրումը:

ՄԶԾ-ի հիմնական նպատակը ՀՀ երկարատև կայուն տնտեսական աճին նպաստող խնդիրների առաջադրումն ու մարզի համաչափ զարգացման ապահովումն է: Առաջնահերթ ենթակարգերի շարքում է աղքատության հաղթահարումը և տարածքային համաչափ զարգացումը: Մարզպետարանում, որպես մարզային զարգացման որակյալ ու հիմնավորված ծրագրեր կազմելու գործընթացների համակարգող ու դրանց իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներն ապահովող մարմնում, 2015թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ըստ ոլորտային աշխատանքային խմբերի (Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն, Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում, Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր, Առողջապահություն և սոցիալական ապահովություն, Քաղաքաշինություն, ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում), Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն) մշակվել է ՄԶԾ-ի 2015թ. Տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ),
- Մարզպետարանի ռեսուրս կենտրոնում թարմացվել են ՄԶԾ-ի կազմման համար կարևորագույն էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանները (մարզի ՏԻՄ-երի կողմից կազմված և հաստատված համայնքների քառամյա զարգացման ծրագրերի, համայնքային բյուջեների հիման վրա):

- Ընթացիկ տարում ՄԶԾ-ով նախատեսված աշխատանքները ենթարկվել են վերլուծության մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, կազմվել է ՄԶԾ-ով 2015թ նախատեսված միջոցառումների մոնիտորինգի և գնահատման հաշվետվություններ կիսամյակային և տարեկան կտրվածքներով
- Իրականացվել է հանրային իրազեկում մարզային լրատվամիջոցների միջոցով, ինչպես նաև 2015թ. ՏԱՊ-ն ու ՄԳ հաշվետվությունները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում

Համայնքների զարգացման ոլորտ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2015թ.-ին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա:

Փոքր և միջին ձեռներեցության զարգացման ոլորտ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2015թ. ՄԶԾ-ով առաջարկվել է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

2015թ. Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Լոռու մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2015թ. ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ թիրախային աջակցությունները՝

- ✓ Ուսուցողական աջակցության ծրագրեր
- ✓ Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրեր
- ✓ Տեղեկատվական աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին
- ✓ Միջազգային համագործակցության ծրագրեր
- ✓ Արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտների ոլորտային շտեմարանի համալրում, աշխատանքներ «MarketPlace» կայքի հետ:

Ստորև բերված են 2015թ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի գործունեության շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը՝ ըստ աջակցության ծրագրերի

1	Անհատական և/կամ խմբային խորհրդատվության տրամադրում (թեժ գիծ) գործարարներին հարկային և մաքսային օրենսդրության վերաբերյալ:	2162
2	Խորհրդատվական սեմինար	125
3	Տեղեկատվական նյութերի տրամադրում ՓՄՁ սուբյեկտներին	578
4	Աջակցություն սկսնակ գործարարներին /ԱՍԳ/	54
5	Ֆինանսական աջակցություն սկսնակ գործարարներին	6
6	Կանանց ձեռներեցության զարգացման ծրագիր - «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության անցկացում	3
7	Գյուղտեխնիկայի տրամադրում	2
8	ՀԴՄ-ների փոխհատուցում	88
9	ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	34,8 մլն.դրամ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտ

ՀՀ ՏԿԱԻ նախարարության նախաձեռնությամբ հաջողությամբ շահագործվել է ՏԿԱԻՆ էլեկտրոնային կառավարման տեղեկատվական բաց համակարգը, բաղկացած ՀՀ ՏԿԱԻ նախարարության եւ 10 մարզերի ինտերնետային կայք-էջերից: Այն օժտված է ինովացիոն տեխնոլոգիաների բոլոր հնարավորություններով: Այս կայքերը թույլ են տալիս ազգաբնակչությանը համացանցի միջոցով ուղիղ կապ հաստատել մարզպետարանի հետ: Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքն է՝ www.lori.mtaes.am:

Էլեկտրոնային փաստաթղթաշարժի «Mulberry» համակարգի շահագործումը եղել է մարզպետարանի ներքին փաստաթղթաշրջանառության ամենօրյա, ինչպես նաեւ էլեկտրոնային ինֆորմացիայի փոխանակման աշխատանքների իրականացման արդյունք՝ մարզպետարանի և ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչական մարմինների աշխատակազմերի միջև, որտեղ տեղադրված է նմանատիպ համակարգ:

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, մարզպետարանը համագործակցում է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, ինչպես նաև ՏՏ ոլորտի և իրենց զործունեության մեջ ՏՏ ոլորտը կիրառող մարզի առաջատար ձեռնարկությունների («Ինստիդեյթ» ՓԲԸ-ի Վանաձորի մասնաճյուղ, «Ա2» ՍՊԸ, «Գործարարության զարգացման և օժանդակման կենտրոն» և այլն) հետ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում որպես հաջողված արդյունք կարելի է նշել ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Համաշխարհային բանկի շուրջ 5.0 մլն դոլար ֆինանսական աջակցությամբ 2014թ-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) հիմնումը, որի գլխավոր օպերատոր է նշանակվել Հայաստանի Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամը (ՁԻՀ): 2015թ-ին մեկնարկվեց կենտրոնի շինարարությունը: Շինարարական աշխատանքներն ընթանում են արագ տեմպերով եւ նախատեսվում է ավարտել 2016թ-ին: Կենտրոնի կառուցումից հետո այն 20 տարի ժամկետով անհատույց կհանձնվի շահագործման ՁԻՀ-ին: Հիմնադրամի կողմից պլանավորվում է 20 թիմի եւ ընկերությունների վարձում, որոնք Վանաձոր քաղաքում կստեղծեն 200 նոր աշխատատեղեր:

Վանաձորի Տեխնոլոգիական Կենտրոնը մարզկենտրոնի և մարզի դպրոցականների համար նախաձեռնել էր «Ամառային դպրոց» ծրագիրը: Ամառային դպրոցի շրջանակներում մոտ 200 աշակերտներ սովորել են Web ծրագրավորում, խաղերի պատրաստում KoDU միջավայրում:

Համաշխարհային Բանկի և Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի կողմից 2014-2015թթ անցկացվեցին Նորարարության Համաֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթներ, որին ակտիվորեն մասնակցել են Վանաձորյան 16 թիմեր, նրանցից 3-ը հաղթող են ճանաչվել մրցույթում՝ ներգրավելով մոտ 100,0 հազ. ԱՄՆ դոլար համախառն ներդրում: Արդյունքում ստեղծվել են 3 նոր ընկերություն, ստեղծվել են նոր 14 աշխատատեղեր:

Մարզի երիտասարդության մոտ ՏՏ կրթության և նորարարության ուղղությամբ հետաքրքրության մեծացմանը ու ընդհանուր տեխնոլոգիական զարգացման խթանմանը նպաստելու ակնկալիքով 2015թ-ին տարվա Հեքըթոն[ՅԱՆ]-ի մրցույթի անցկացման վայրը էր ընտրվել Վանաձոր քաղաքը: Հինգերորդ տարին անընդմեջ նորարարության և տեխնոլոգիական Հեքըթոն[ՅԱՆ] մրցույթը միավորում է բազմաթիվ երիտասարդ և փորձառու ծրագրավորողների: 250-ից ավելի երիտասարդների՝ ծրագրավորողներ և 'չծրագրավորողներ' 24 ժամվա ընթացքում մշակել են տարբեր ոլորտում առկա խնդիրների լուծումների նախատիպեր (ցուցադրական տարբերակը) և ներկայացրել ժյուրիի դատին: Մրցույթին մասնակցել են 15 թիմեր Վանաձորից, 15 թիմ՝ Գյումրուց և 40-ից ավել թիմեր Երևանից, Գավառից, Իջևանից և Հայաստանի այլ քաղաքներից:

Ծավալուն աշխատանքներ են տարվել մարզի երիտասարդների եւ դպրոցականների ներգավաճությունը ապահովելու ինչպես հանրապետությունում եւ այնպես էլ նրա սահմաններից դուրս կազմակերպվող տարբեր տիպի նորարարական դրամաշնորհային մրցույթներին եւ ֆորումներին, ուսուցողական դասընթացներին: Գիտություն եւ Ինովացիա՝

միջազգային երիտասարդական ֆորումին մասնակցել են Վանաձորից 2 երիտասարդներ, որոնք 'Լավագույն իննովացիոն գաղափար' նոմինացիայով ստացել են մրցանակներ՝ 2-րդ կարգի դիպլոմներ եւ սերտիֆիկատներ 'Նոր գաղափար' Համառուաստանյան մրցույթին մասնակցելու հնարավորություն:

Լոռու մարզի համար նոր ձեռքբերում նշենք Հայաստանի Մանուկներ Հիմնադրամի (COAF) կողմից նախաձեռնված Սմարթ կենտրոնի ստեղծումը հանրապետական մայրուղուց ոչ այնքան հեռու, գեղատեսիլ Դեբեդի հովտում: Այս կենտրոնն իր բովանդակությամբ եւ տեսակով Հայաստանում առաջինն է, որը նոր հնարավորություններ կստեղծի մարզի գյուղական միջհամայնքային կապի ամրապնդման, փորձի փոխանակման, դպրոցականների կրթությունը նորարարական տեխնոլոգիաներով կազմակերպելու համար:

Զարգացման ծրագրեր

Ըստ Լոռու մարզի 2014-2017թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015թ. ՏԱՊ-ով նախատեսված (տես աղյուսակ 1) իրատեսական բյուջեն կազմել է **23,496,767.3** հազար դրամ, այդ թվում՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **5,884,165.0** հազ. դրամ, այդ թվում՝
 - ✓ Սեփական միջոցներ՝ 2,691,465.0 հազար դրամ,
 - ✓ Վարկային միջոցներ՝ 3,192,700.0 հազար դրամ,
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ **0.00** հազար դրամ,
- Համայնքային բյուջեների ներդրումներ՝ **387,606.3** հազար դրամ,
- Մասնավոր հատվածի ներդրումներ՝ **17,225,000.00** հազար դրամ,
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ **0.00** հազար դրամ:

2015թ. փաստացի իրականացվել է **19,503,186.6** մլն դրամի աշխատանքներ, որից՝

- ❖ **9,772,786.1** մլն-ը ՀՀ պետ. բյուջեի հատկացումներով, այդ թվում՝ **3,839,364.1** մլն դրամը վարկային միջոցներից **5,933,422.0** մլն դրամը սեփական միջոցներից (485.0մլն դրամը՝ հրատապ ծրագրի շրջանակներում)
- ❖ **5,238.6** մլն դրամը՝ մասնավոր ներդրողների միջոցներից,
- ❖ **2,373.0**մլն դրամը՝ ֆինանսավորման այլ աղբյուրներով,
- ❖ **1,604,691.0** մլն դրամը՝ Միջազգային կազմակերպությունների և դոնորների միջոցներով,
- ❖ **415.123** մլն դրամը՝ համայնքային ֆոնդային բյուջեների միջոցներով:

Կատարողականը փաստացի պլանավորված ՏԱՊ-ի նկատմամբ կազմել է **83.0 %**


ՀՀ Լոռու մարզի 2015 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների

Աղյուսակ 1
մլն. դրամ

Հ/Հ	Ոլորտի անվանումը	2015թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում			Իրականացված է 2015թ., այդ թվում		
		Ընդամենը	2015թ. Պետական բյուջեից		Ընդամենը	2015թ. Պետական բյուջեի ֆինանս.	
			Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագր		Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրերով
1.	Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված	17,225.00	0.00	0.00	6,324.4	978.8	0.00
2.	Սոցիալական ոլորտներ	1,964.7	1,964.7	0.00	2,958.50	2,415.3	229,634.0

2.1.	Կրթություն	560.0	560.0	0.00.	1,409.1	898.4	66,062.0
2.2.	Մշակույթ և սպորտ	454.7	454.7	0.00	443.34	443.34	163,572.0
2.3.	Առողջապահություն	950.00	950.00	0.00	1,035.21	1,009.00	0.00
2.4.	Սոցիալական ապահովություն	0.00	0.00	0.00	70.86	64.51	0.00
3.	Գյուղատնտեսություն և բնապահպանություն	150.52	0.00	0.00	401,70	240.34	0.00
3.1.	Գյուղատնտեսություն	0.00	0.00	0.00	252.94	240.34	0.00
3.2.	Բնապահպանություն	150.52	0.00	0.00	148.76	0.00	0.00
4.	Քաղաքաշինություն	174.84	174.84	0.00	694.46	497.97	255.37
4.1.	Բնակարանաշինություն	174.84	174.84	0.00	308.32	308.32	0.00
4.2.	Բնակարանային տնտես. և բարեկարգում	0.00	0.00	0.00	386.15	386.15	255.37
5.	Ենթակառուցվածքներ	3,981.00	3,744.62	0.00	9,124.25	5,696.32	0.00
5.1.	Ճանապարհաշին.	736.68	551.92	0.00	5,890.22	4,241.70	0.00
5.2.	Զրամատակարարում	3,245.03	3,192.7	0.00	2,771.73	1,427.52	0.00
5.3.	Գազամատակարարում	0.00	0.00	0.00	462.30	27.10	0.00
6.	Արտակարգ իրավիճակներ	5,000.0	0.00	0.00	7,800.0	2,340.00	0.00
	Ընդամենը	23,496.77	5,884.17	0.00	19,503,186.6	9,828.68	485.00


2015թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ (ընդամենը՝ 19,503,186.6 մլն.դրամ)



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ (գործող) գներով թողարկել են 120307.2 մլն դրամի արդյունաբերական արտադրանք 2014թ. 69826.5 մլն դրամի դիմաց: Աճի տեմպը համադրելի գներով կազմում է 202.2%, բացարձակ աճը՝ 71369.0 մլն դրամ: Պատրաստի արտադրանքի իրացումը կազմել է 137313.5 մլն դրամ (2014թ.՝ 69177.3 մլն դրամ), որից ԱՊՀ երկրներ՝ 997.9 մլն դրամ (2014թ. 1136.8 մլն դրամ) և այլ երկրներ՝ 79212.1 մլն դրամ (2014թ. 41376.7 մլն դրամ):

Արդյունաբերական արտադրանքի ծավալների դինամիկան ընթացիկ գներով (մլն. դրամ)




Անցած տարվա արդյունքներով մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը 1999թ. մակարդակը գերազանցել է 54.2 անգամ:

2015թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում (ընթացիկ գներով) տարվա արդյունքներով կազմել է 9.1% (5-րդ ցուցանիշ) նախորդ տարվա 5.4%-ի դիմաց:

2015թ. մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռներն ունեն այսպիսի տեսք՝

- հանքարդյունաբերություն՝ 55013.2 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 6.7 անգամ և տեսակարար կշիռը՝ 45.7%;
- մշակող արդյունաբերություն՝ համապատասխանաբար՝ 52692.2 մլն դրամ, 112.2% և 43.8%;
- էլեկտրգիայի արտադրություն՝ համապատասխանաբար՝ 11519.5 մլն դրամ, 142.4% և 9.6%;
- ջրամատակարարում, կոյուղի, թափոնների վերամշակում՝ համապատասխանաբար՝ 1082.3 մլն դրամ, 104.6% և 0.9%:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները 2015թ.



2015թ. նախորդ տարվա համեմատությամբ թողարկվող արտադրանքի ծավալի աճ են ունեցել մարզի արդյունաբերական բոլոր ճյուղերը:

Մարզի հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալի ավելի քան 2.0 անգամ աճը հիմնականում ապահովել է «Թեղուտ» ՓԲԸ-ն, որի աշխատանքների մեկնարկը 2014թ. դեկտեմբերին տվել է ՀՀ Նախագահ Ս.Սարգսյանը: Ընկերությունը 2015թ. թողարկել է 46.4 մլրդ դրամի արտադրանք, չնայած պղնձի գինը համաշխարհային շուկայում զգալիորեն իջել է և կազմում է 4000-4500 ԱՄՆ դոլար:


2015թ. ընթացքում մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

Հ / հ	Ճյուղի անվանումը	2015թ.	2014թ.	հազ. դրամ	
				Աճը, %	Տեսակարար կշիռը մշակող արդյունաբերության մեջ, %
1	Քիմիական արդյունաբերություն	541928.0	342397.0	170.4	1.0
2	Թեթև արդյունաբերություն	2688083.0	2438178.0	103.1	5.1
3	Սննդի արդյունաբերություն	16879330.0	16619366.0	100.0	32.0
4	Մեքենաշինություն և սարքաշինություն	435359.0	786373.0	55.4	0.8
5	Փայտամշակում և կահույքի արտադրություն	14477.0	19603.0	73.8	0.03
6	Մետալուրգիա	30691536.0	29656670.0	119.6	58.2
7	Այլ ճյուղեր	1441525.0	896274.0	160.8	2.9
	Ընդամենը	52692238.0	50758861.0	112.2	100.0

2015թ. թողարկվող արտադրանքի ծավալի աճ են ունեցել մշակող արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը, բացառությամբ մեքենաշինության և սարքաշինության (55.4%) ու փայտամշակման և կահույքի արտադրության (73.8%) ոլորտները:

Մեքենաշինության ոլորտում ծավալների նվազումը հիմնականում արդյունք է «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի ոչ ռիթմիկ աշխատանքի, որն իր հերթին բացատրվում է Ռուսական տնտեսության վիճակով և ռուբլու ցածր կուրսով: Արտադրության ծավալն ընկերությունում նվազել է 51.2 տոկոսով կամ 366.5 մլն դրամով:

Մարզի մշակող արդյունաբերության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները 2015թ.



Ըստ մարզի զարգացման ծրագրի 2015թ. ՏԱՊ-ի մոնիտորինգի գնահատման և հաշվետվության, մարզի արդյունաբերության ոլորտում ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է շուրջ 6.3 մլրդ դրամ:

Անցած տարի մարզում շահագործման են հանձնվել ևս 6 փոքր ՀԷԿ-եր, որոնք սկսել են էլեկտրաէներգիայի կանոնավոր թողարկումը («Ձորագետ-5», «Ձորագետ-6», «Կաճաճկուտ», «Մարցիգետ-1», «Սպիտակ ջուր», «Հաղպատ-1»): Նոր փոքր ՀԷԿ-երի շահագործումը հնարավորություն է տվել էլեկտրաէներգիայի արտադրությունը մարզում 2015թ. հասցնել 207.3 մլն ԿՎտ/ժամի, 2014թ. 165.0 մլն ԿՎտ/ժամի փոխարեն կամ աճը կազմել է 125.6%, բացարձակ աճը՝ 42.3 մլն ԿՎտ/ժամ: Դրա հետ մեկտեղ 1 փոքր ՀԷԿ («Ազարակ ՀԷԿ» ԱԿ) և «Լոռի-1» հողմակայանը նախորդ տարվա համեմատությամբ իջեցրել են արտադրվող էներգիայի ծավալները:

2015թ. մարզի 15 արտադրական ձեռնարկություններ արտադրանք չեն թողարկել՝ 2014թ. 14-ի դիմաց: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության հաշվետվությամբ ներկայացրած մարզի 116 արտադրական ձեռնարկություններից 46-ը (ձեռնարկությունների 39.6%-ը), ընթացիկ գներով, ունեցել են արտադրության ծավալի նվազում, առավել մեծ նվազում ունեն Վանաձորի «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ն՝ 51.2%, «ՉինՎան» ՍՊԸ-ն՝ 34.5%, «Քարաբերդ» ՍՊԸ-ն՝ 38.5%, Ստեփանավանի «ԲՀԵՍ Պլազմա» ԲԲԸ-ն՝ 82.8%, «Կաբինետ» ՍՊԸ-ն՝ 50.8%, Տաշիրի «Սեդրակ և Տիգրան» ՍՊԸ-ն՝ 61.2%, «Թումանյանի հրակայուն նյութերի գործարան» ԲԲԸ-ն՝ 45.1%, Սպիտակի «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 36.6% և այլն:

2015թ. արդյունքներով մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեն «Թեղուտ» ՓԲԸ-ն՝ 38.6%, «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 25.5%, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 5.0%, «Սազամար» ՓԲԸ-ն՝ 2.0%, Սպիտակի «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն և Վանաձորի «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ 1.7%, «Ձորագետ հիդրո» ՍՊԸ-ն 1.6%, Գուգարքի «Բետոն» ԱԿ-ն՝ 0.9% և այլն:

Մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի շուրջ 73.3%-ը բաժին է ընկնում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններին, փոքր և միջին բիզնեսին՝ ընդամենը 26.7%-ը, երբ դա պետք է լինի 40÷50%: Հետաքրքիր է, որ խոշոր բիզնեսի 7 ձեռնարկություններում աշխատում են 3943 մարդ (արդյունաբերության ոլորտում աշխատողների 53.6%-ը), այն դեպքում, երբ գերփոքր (միկրո՝ մինչև 5 մարդ) 36

ձեռնարկություններում աշխատողների թիվը կազմում է 117 (1.6%) մարդ, իսկ թողարկած արտադրանքի ծավալը 674.0 մլն դրամ (տեսակարար կշիռը՝ 0.6%):

Ըստ տարածաշրջանների 2015թ. թողարկած արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ունի այսպիսի տեսք.

(հազ. դրամ)

Տարածաշրջան	2015թ.	2014թ.	Աճը, %	Քացարձակ աճը, ±	Տեսակարար կշիռը, %
Սպիտակի	3655581.0	4390734.0	83.2	-735153.0	3.0
Տաշիրի	1312565.0	1252222.0	104.8	+60343.0	1.1
Գուգարքի	4265376.0	3334244.0	127.9	+931132.0	3.5
Ստեփանավանի	3660674.0	5988132.0	61.1	-2327458.0	3.0
Թումանյանի	101799820.0	48770324.0	208.7	+53029496.0	84.6
ք.Վանաձոր	5613184.0	6201744.0	90.5	-588560.0	4.8
Ընդամենը մարզում	120307200.0	69938100.0	202.2	+50369100.0	100.0

Ինչպես երևում է, արտադրության ծավալի աճ են ապահովել Տաշիրի, Գուգարքի և Թումանյանի տարածաշրջանները, նվազում է արձանագրվել Սպիտակի (83.1%), Ստեփանավանի (61.1%) տարածաշրջաններում և Վանաձոր քաղաքի (90.5%) արտադրական ձեռնարկություններում:

Ըստ վերը բերված աղյուսակի, անցյալ տարվա արդյունքներով ևս շարունակվում է արտադրանքի տեսակարար կշիռների փոփոխությունները ըստ տարածաշրջանների: Ի շնորհիվ «Թեղուտ» ՓԲԸ-ի շահագործման, կտրուկ բարձրացել է Թումանյանի տարածաշրջանի տեսակարար կշիռը՝ 84.6%, նախորդ տարվա 69.5%-ի դիմաց կամ աճել է 15.1 տոկոսային նիշով:

Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը 2015թ. արդյունքներով կազմել է 7356 մարդ, անցյալ տարվա 6280 մարդու դիմաց կամ աշխատողների միջին ցուցակային թիվը ավելացել է 1076 մարդով կամ 117.1%-ով: Աշխատողների միջին թիվը հանքագործական արդյունաբերությունում ավելացել է 1055 մարդով, որն արդյունք է «Թեղուտ» ՓԲԸ-ի շահագործման: Այն ավելացել է նաև էլեկտրաէներգիայի արտադրության բնագավառում՝ 31 մարդով:

Աշխատանքի արտադրողականությունը 2015թ. մարզի արդյունաբերությունում կազմել է 16355.0 հազ. դրամ 2014թ. 11118.9 հազ. դրամի դիմաց կամ աճը՝ 147.1% և միջին հանրապետական 16210.5 հազ. դրամի դիմաց:

Աշխատանքի արտադրողականության նման բարձր ցուցանիշը գրանցվել է հիմնականում հանքագործական արդյունաբերության հաշվին, որտեղ արտադրողականությունը կազմում է 25051.6 հազ. դրամ:

2015թ. մարզի արդյունաբերության հիմնական արտադրատեսակների ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ

Հ/հ	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2015թ.	2014թ.	Քացարձակ աճը, ±
1	Էլեկտրաէներգիա (փոքր ՀԷԿ)	մլն ԿՎտ/ժամ	203.8	160.1	+43.7
2	Էլեկտրաշարժիչներ	հատ	147.0	2010.0	-1993.0
3	Ավտոգենային սարքավորումներ	հազ. հատ	23.9	64.3	-40.4
4	Պղինձ կոնվերտորային (սև պղինձ)	տոննա	11601.0	9814.0	+1787
5	Պղնձի խտանյութ	տոննա	113126.0	16550.0	+96576
6	Ցինկի խտանյութ	տոննա	2398.0	5626.0	-3228
7	Լաքաներկանյութեր	տոննա	186.7	77.4	+109.3
8	Երկաթբետոնյա իրեր և կոնստրուկցիաներ	տոննա	16571.0	10493.0	+6078

9	Ոչ հանքային շինանյութեր	տոննա	15990.3	26710.0	-10719.7
10	Ալյումինե մետաղապլաստե դռներ և պատուհաններ	տոննա	1187.0	1965.0	-778
11	Բաճկոններ	հազ. հատ	416.4	456.3	-39.9
12	Պանիր	տոննա	446.7	408.6	+38.1
13	Կաթ	հազ. լիտր	66.8	54.5	+12.3
14	Ալյուր	տոննա	9964.3	16019.0	-6054.7
15	Հաց	տոննա	2738.0	2066.7	+671.3
16	Համակցված կերեր	տոննա	3598.1	5909.0	-2310.9

«Թեղուտ» ՓԲԸ

Ձեռնարկությունը շահագործման առաջին օրից, չնայած պղնձի ցածր գնին, աշխատել է կայուն և 2015թ. արտադրել է 46416.1 մլն դրամի 97609 տոննա պղնձի խտանյութ: Ընկերության արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության հանքագործական արդյունաբերության ընդհանուր ծավալում կազմում է 21.0 %, մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում՝ 38.6%: Ընկերության կողմից արտադրված խղնձի խտանյութի տեսակարար կշիռը հանրապետականի ծավալում կազմում է 30.9%, որը հիմնականում արտահանվում է:

Ընկերությունը 2015թ. ՀՀ պետական բյուջե հարկերի ձևով վճարել է շուրջ 4.7 մլրդ դրամի հարկ, որը 1.4 մլրդ դրամով ավելի է քան 2014 թվականին: Ընկերությունն իր հարկային պարտավորությունները բարեխղճորեն կատարել է նաև մարզի համայնքների նկատմամբ (Շնող, Թեղուտ, Մեծ Այրում և Ախթալա):

Ընկերությունում 2015թ. իրականացվել է 8.5 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ծախսեր: Ներդրումների շնորհիվ իրականացվել է հարստացուցիչ ֆաբրիկայի սարքավորումների և ավտոմատ համակարգերի մոնտաժումը, հանքի սարքավորումների կապիտալ վերականգնումը, ավարտվել են հարստացուցիչ ֆաբրիկայի տեխնոլոգիական խողովակաշարերի և էներգասպասարկման աշխատանքները, շարունակվել են պոչային տնտեսության և օժանդակ կառույցների շինարարական և այլ աշխատանքներ:

Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 1275 մարդ, միջին ամսական աշխատավարձը՝ 356.7 հազ. դրամ:

2016թ. ընկերությունում նախատեսվում է իրականացնել շուրջ 4.9 մլն. ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրում, որը կնպատակաուղղվի հանքային տեխնիկայի վերանորոգմանը, անհրաժեշտ գործիքների համալրմանը, հարստացուցիչ ֆաբրիկայի սարքավորումների նորոգմանը:

«Էյ-Սի-Փի» ՓԲԸ

Ընկերության կապիտալ ծախսերը 2015թ. կազմել են շուրջ 0.8 մլն ԱՄՆ դոլար, որը հիմնականում ծախսվել է արտացույց վառարանի և կոնվերտորների վերանորոգման աշխատանքներում: Դա հնարավորություն է տվել, չնայած պղնձի գնի նվազմանը, կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունը 2015թ. հասցնել 11600.7 տոննայի, որը վերջին տարիների ամենաբարձր ցուցանիշն է և 2014թ. մակարդակը գերազանցում է 1787.1 տոննայով կամ 118.2%-ով:

Չնայած աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 641 մարդ, սակայն վերջին ամիսներին ընկերությունում նկատվում է աշխատողների թվի նվազում:

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ

Ընկերությունը հանքաքարի վերամշակման և աշխատանքների կարգաբերման համար տեխնիկայի ձեռքբերման նպատակով ներ է դրել շուրջ 321.0 մլն դրամ: Կոմբինատում նախորդ տարվա համեմատությամբ արտադրության ծավալը նվազել է 8.8%-ով: Նախատեսվում է 2016թ. արտադրության վերազինման համար ներդնել ևս 150.0 մլն դրամ գումար:

«Սագամար» ՓԲԸ

Արտադրության վերականգնման, նոր սարքավորումների ձեռքբերման նպատակով ընկերությունը 2015թ. կատարել է 547.0 մլն դրամի ներդրում: Սակայն, կախված

համաշխարհային շուկայում պղնձի ցածր գնից և խտանյութում պղնձի քանակության ցածր աստիճանից, դեռևս 2015թ. հուլիսից ընկերությունը դադարեցրել է աշխատանքները և աշխատակիցներին ուղարկել է հարկադիր պարապուրդի մինչև իրավիճակի կարգավորումը: Ընկերությունը ներկայումս ևս չի աշխատում և հնարավոր է հետագա կոնսերվացումը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր շինարարության ծավալները ըստ տնտեսական գործունեության մարզում 2015թ կազմել է 26751.5 մլն.դրամ (տեսակարար կշիռը հանրապետականի նկատմամբ՝ 5.9%), որը կազմում է նախորդ տարվա շինարարական աշխատանքների 60,1%-ը: Մարզում 2015թ բոլոր ֆինանսական աղբյուրներով շահագործման է հանձնվել 3764 մ2 բնակելի շենքեր, որը կազմում է հանրապետականի 1,7%-ը:

2015թ. քաղաքաշինության ոլորտում մարզում իրականացվել են շուրջ **11438.5** մլն դրամի շինարարական աշխատանքներ, այդ թվում ըստ ֆինանսավորման աղբյուրների՝


ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ – 3637.2 մլն դրամի, որից

- ՀՀ քաղաքաշինության նախարարություն – 1646.8 մլն դրամ
- ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարություն – 400.0 մլն դրամ
- ՀՀ առողջապահության նախարարություն – 59.0 մլն դրամ
- ՀՀ մշակույթի նախարարություն – 61.126մլն դրամ
- ՀՀ պաշտպանության նախարարություն – 174.8 մլն դրամ
- Լոռու մարզպետարան – 1195.8 մլն դրամ
- Դպրոցների միջոցներով - 99,6մլն դրամ

Այլ ֆինանսական միջոցներով- 7801.3 մլն դրամ

Նշված աշխատանքներն ըստ ոլորտների բաշխվել են հետեւյալ կերպ՝

	Ըստ ոլորտների	Ընդամենը մարզում	ՀՀ պետական բյուջե	Այլ ֆինանս.
1	Բնակարանաշինություն	308.3	308.3	0.0
2	Կրթական օբյեկտներ	2472.2	998.4	1473.8
3	Մշակութային եւ սպորտային օբյեկտներ	343.3	343.3	
4	Առողջապահական օբյեկտներ	1009.0	1009.0	
5	Ճանապարհաշինություն	5591.0	691.0	4900.0
6	Այլ օբյեկտներ	1714.6	287.1	1427.5
	Ընդամենը	11438.5	3637.2	7801.3



2014թ. սկսվել է 2500մ² ընդհանուր մակերեսով, 150 մահճակալ տեղով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր շենքի կառուցուման աշխատանքները, որի շին-մոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը 3,430,800.0հազ.դրամ է: Շենքի կառուցուման աշխատանքներին ՀՀ պետական բյուջեից 2014թ. հատկացվել է 600.0մլն.դրամ, 2015թ.՝ 950.0մլն.դրամ, 2016թ.՝ 1100.00մլն.դրամ: Աշխատանքները նախատեսված է ավարտել 2017թ.:

ՀՀ կառավարության 02.07.2015 թիվ 766-Ն որոշմամբ Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների իրականացման համար մարզպետարանին հատկացվել է 485,0մլն դրամ:

Նշված միջոցներով իրականացվել է.

Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում - 5 համայնքներում, 133.474 մլն դրամի, 13 շենք, այդ թվում Վանաձոր համայնքում՝ 50,55 մլն դրամի - 5 շենք, Ստեփանավան համայնքում՝ 10,16 մլն դրամի - 1 շենք, Ալավերդի համայնքում՝ 43,3 մլն դրամի - 3 շենք, Տաշիր համայնքում՝ 24,384 մլն դրամի - 3 շենք, Ձորագետ համայնքում՝ 5,08 մլն դրամի - 1 շենք:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ - 3 մանկապարտեզ, 66,062 մլն դրամի, այդ թվում՝ 1 մանկապարտեզ՝ 43.71 մլն դրամի նոր շենքի կառուցում Լեռնապատ համայնքում: Ալավերդի համայնքի թիվ 6 մանկապարտեզում կառուցվել է ջեռուցման համակարգ՝ 11,176 մլն դրամի: Մեծավան համայնքի մանկապարտեզում կատարվել են սան.հանգույցների վերանորոգում, արտաքին հարդարում և բարեկարգում՝ 11,176 մլն դրամի:

Համայնքային կենտրոններ - 7 համայնքներում, 102,344 մլն դրամի, այդ թվում՝ 1 համայնք 42,4 մլն դրամի նոր շենքի կառուցում Լեռնանցք համայնքում: Հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել՝ Բովաձոր, Յաղդան, Արևածագ, Չկալով, Աքորի և Դեբեդ համայնքների համայնքային կենտրոններում:

Փողոցների լուսավորություն - 3 համայնք, 19.312 մլն դրամի՝ Գարգառ, Շնող և Մղարթ համայնքներում:

Մշակութային օբյեկտներ - 5 համայնք, 55.928 մլն դրամի, այդ թվում՝ Ահնիձոր և Գոգարան համայնքների հանդիսությունների սրահների կառուցում՝ 15,248 մլն դրամի, Օձուն համայնքի արվեստի դպրոցի վերանորոգում՝ 22,9 մլն դրամի, Կարմիր Աղեկ համայնքի

ակումբի վերանորոգում՝ 4,572մլն դրամի, Ծաթեր համայնքի հանդիսությունների սրահի վերանորոգում՝ 13,208 մլն դրամի:

Մարզական օբյեկտներ - 1 համայնք, 5.3մլն դրամի՝ Վանաձոր համայնքի «Հայաստան» մարզապալատի հատակների վերանորոգում:

Այլ օբյեկտներ - 1 օբյեկտ, 5.0մլն դրամի՝ Սպիտակ համայնքում հենապատի վերանորոգում:

Սուբվենցիաներ համայնքներին - 13 համայնք, 97.5մլն դրամի:

6-րդ հրատապ ծրագրի օբյեկտների նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրականացրել են 5 նախագծային կազմակերպություններ, շինարարական աշխատանքները՝ 17 շինարարական կազմակերպություն, շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունը՝ 4 կազմակերպություն: Օբյեկտների նախապատրաստական եւ շինարարական աշխատանքների կատարմանը ներգրավվել է շուրջ 360 աշխատող:

«ՀՀ պետական բյուջեով 2015թ. ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվել է 470,84մլն դրամ, որով իրականացվել է՝

1	Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի մարզադահլիճի վերակառուցում	75,04
2	Վանաձորի Ներսիսյան թաղամասի թիվ 31 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի շենքի կապիտալ հիմնանորոգում	60,0
3	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի հիմնանորոգում	25,0
4	ՀՀ գեղագիտական ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի հիմնանորոգում	19,8
5	Վանաձոր քաղաքի Խնձորուտ-Բազում թաղամասի գերեզմանոց տանող ճանապարհի և գերեզմանոցի նախահրապարակի ասֆալտապատում	61,0
6	Լոռու մարզի Կաթնաջուր-Շիրականուտ 4կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում	150,0
7	Սպիտակ քաղաքի Տեր-Սիմոնյան փողոցի ասֆալտապատում	80,0

«ՀՀ պետական բյուջեով 2015թ. ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացված 470,84մլն դրամ շինարարական աշխատանքների գնման գործընթացը իրականացնելու արդյունքում խնայվել է 54.8մլն դրամ:

2015թ. տարեվերջին Վանաձոր համայնքին 10.0մլն դրամ սուբվենցիա է հատկացվել Խնձորուտ-Բազում ճանապարհի ավարտման համար:

Հաշվի առնելով, որ մարզի հանրակրթական դպրոցներում առաջ են եկել ֆինանսական միջոցների խնայողություններ, Լոռու մարզպետի հանձնարարությամբ առաջարկվել է նշված գումարները նպատակային օգտագործելու համար առաջնահերթության կարգով դպրոցներում իրականացնել նեքոհիշյալ շինարարական աշխատանքները՝

- շենքերի տանիքների վերանորոգում
- սանհանգույցների վերանորոգում
- պատուհանների փոխում՝ ջերմության կորուստը նվազեցնելու համար

Խնայված միջոցներով իրականացվող ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, շինարարական աշխատանքների մրցույթների իրականացման և վերահսկողության հարցերում մարզպետի հանձնարարականի համաձայն քաղաքաշինության վարչության կողմից աջակցություն է ցուցաբերվել դպրոցներին:

Դպրոցների ֆինանսական միջոցների խնայողության հաշվին՝ ինչը կազմել է շուրջ 99,6մլն դրամ, կատարվել են առաջնահերթ վերանորոգման աշխատանքներ խնայված

Ֆինանսական միջոցների սահմաններում՝ Վանաձորի թիվ 3, 4, 16, 20, 25, 30, Ստեփանավանի թիվ 2, 3, Ալավերդու թիվ 2, 12, Տաշիրի թիվ 1, 2, Աքորու, Զրաշենի, Դսեղի դպրոցներում:

2015թ. նոյեմբերի 12-14-ը ուժեղ քամիներից տուժած Լոռու մարզի համայնքների կրած վնասների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կառավարության 19.11.2015 թիվ 1361-Ն որոշումով Լոռու մարզպետարանին հատկացվել է 240.0 մլն. դրամ, որից

- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում՝ 74.7 մլն դրամ
- Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին՝ 58.5 մլն դրամ
- Այլ նպաստներ բյուջեից՝ 102.7 մլն դրամ
- Նախագծահետազոտական ծախսեր՝ 4.0 մլն դրամ

2015թ. ընթացքում մարզի համայնքներից համաձայնեցման նպատակով ՀՀ Լոռու մարզպետարան են ներկայացվել հողհատկացման, տարածքների գործառնական նշանակության փոփոխման, ՃՀԱ-ների ու նախագծերի համաձայնեցման 27 առաջարկ, այդ թվում՝ Վանաձորից՝ 22, Տաշիրից՝ 4 և Ստեփանավանից՝ 1, որոնցից 1 առաջարկություն Լոռու մարզպետարանի կողմից վերադարձվել է լրամշակման, 4-ը համաձայնեցվել է, 22 առաջարկություն ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ համապատասխան եզրակացություն ստանալու համար:

Քաղաքաշինության վարչություն են մուտքագրվել բնակիչներից ստացված քաղաքաշինական բնագավառին առնչվող դիմում բողոքներ, որոնք ուսումնասիրվել են տեղում, վիճաբանող կողմերին բացատրվել են իրենց իրավունքներն ու պարտականությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարգավորել վիճահարույց հարցերը:

2015թ. 6-րդ հրատապ ծրագրի իրականացման ժամանակ շինարարական աշխատանքների վերահսկողության կատարման մեջ տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ: Լոռու մարզպետի հետ քննարկելով նախորդ 5 փուլերի ժամանակ ի հայտ եկած թերությունները, որոշվել էր բացի կապալառու, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպություններից, քաղաքաշինության վարչության աշխատակիցների կողմից ևս կատարել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, շինարարական աշխատանքների իրականացման վերահսկողություն: 6-րդ հրատապ ծրագրի օբյեկտների վերահսկողությունն իրականացվել է վարչության յուրաքանչյուր աշխատակցին ամրակցված օբյեկտների նախապես կազմված ցանկի և գրաֆիկի համաձայն: Նշված միջոցառումների իրականացման շնորհիվ արձանագրվել է շինարարական աշխատանքների կատարման որակի բարձրացում:

Քաղաքաշինության վարչության կողմից արձանագրված թերությունները և վերացման ուղիները.


Քաղաքաշինության բնագավառի գործունեության վարչական հսկողություն է իրականացվել մարզի 26 համայնքներում և կազմվել համապատասխան արձանագրություններ:

Համայնքներում իրականացված վարչական ստուգումների ժամանակ արձանագրվել են թերություններ, որոնք բնորոշ են համայնքների մեծամասնության համար, մասնավորապես մարզի 102 գյուղական և 1 քաղաքային համայնքներ չունեն գլխավոր հատակագծեր, համայնքներում չի վարվում քաղաքաշինական կադաստր, համայնքները չունեն քաղաքաշինական կանոնադրություն, շինարարության թույլտվությունները սահմանված ժամկետներում չեն ներկայացվում իրավասու մարմիններին:


Նախագծային կազմակերպությունների հետ խորհրդակցությունների ժամանակ քննարկվել են թերությունների առաջացման պատճառները և հանձնարարվել հատուկ ուշադրություն դարձնել բաց թողնվող նախագծերի որակին:


Մարզպետարանի կողմից պետական գնումներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար նպատակահարմար է ստեղծել մասնագիտացված խումբ:

ՀՀ Պետական բյուջեի ներդրումներն ըստ բնագավառների



2015թ. Իրականացված աշխատանքների ծավալները ըստ ոլորտների (առանց արդյունաբերության)





ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Բնակչության կենսապահովման կարևոր բնագավառ է հանդիսանում բնակարանային եւ ենթակառուցվածքների գործունեության ոլորտը, որը համակարգում է մարզի բազմաբնակարան շենքերի կառավարումը և կոմունալ գործունեությունը, ապահովում կապը բնակչության, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև, ինչպես նաև մասնակցում է պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման գործընթացին, ինչի առնչությամբ ներկայացվում են մարզպետի որոշման նախագծեր (այս տարի՝ 2 հատ):

«Լոռու մարզում առկա է 1566 բազմաբնակարան շենք՝ 37140 բնակարանով, որոնց կառավարումն իրականացվում է համատիրությունների եւ թաղամասային հիմնարկների միջոցով: Ներկա դրությամբ շարունակվում է թաղամասային հիմնարկների լուծարման եւ համատիրությունների ձեւավորման գործընթացը:

Անկախ սպասարկման վարձավճարների հավաքագրման համեմատական ցուցանիշից, Լոռու մարզի քաղաքային համայնքների համատիրությունների աշխատանքից ստացվում են տարբեր բողոքներ, որոնք հիմնականում կազմակերպչական բնույթի են՝ աղբահանության, սանիտարական մաքրման, բազմաբնակարան շենքերում ջրամատակարարման և կոյուղու համակարգերում, ինչպես նաև համասեփականության այլ տեսակներին (տանիք, նկուղ, աստիճանավանդակ, շքամուտքի պատուհան, դուռ) առնչվող առկա խնդիրների ոչ ժամանակին լուծման վերաբերյալ:

Մեր կողմից արձանագրվել են թերություններ, դրանք են՝

- Տաշիր, Ստեփանավան, Ախթալա, Շամլուղ քաղաքներում բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի պահպանման համար սպասարկման վարձավճարներ չեն գանձվել, ինչով խախտվել է բազմաբնակարան շենքի կառավարման մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդված 2-րդ կետի պահանջները:

Հարցը քննարկվել է քաղաքապետարանների համապատասխան կառույցների հետ և առաջարկվել 2016 թվականին ապահովել նշված օրենքի պահանջները:

Բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում առկա խնդիրների կարգավորումը կրում է շարունակական բնույթ: Բնակիչներից ստացված բողոքները քննարկվել են համայնքների և համատիրությունների ղեկավարներից ստացված տեղեկատվության, իսկ երբեմն նաեւ մարզպետարանի համապատասխան մասնագետների ուսումնասիրության

արդյունքում տրված եզրակացությունների հիման վրա եւ հնարավորության դեպքում տրվել են լուծումներ:

- Վանաձորի քաղաքապետարանի հետ համատեղ կատարվել է բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից իրականացված աշխատանքների ուսումնասիրություն, քննարկվել են առկա խնդիրների լուծմանն առնչվող առաջարկությունները:

- Շարունակվում է Վանաձոր համայնքի մնացած բազմաբնակարան բնակելի շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ տվյալների (տեխնիկական անձնագրերի) հավաքագրումը:

Աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի ընթացքի մասին

Ծրագրի շահառու են ճանաչվել 1650 ընտանիք, որից Վանաձոր քաղաքում 22-ը, Սպիտակում՝ 249-ը, Ստեփանավանում՝ 47, 33 գյուղական բնակավայրերում՝ 1332 ընտանիք:

2008-15թ.թ. իրականացված ծրագրերի շրջանակներում ծրագրի շահառու ճանաչված 1650 ընտանիքներից լուծվել է 1268 ընտանիքի բնակարանային խնդիրները, որոնցից Վանաձորում 8, Սպիտակում 199, Ստեփանավանում 47, 33 գյուղական բնակավայրերում՝ 1014:

ՀՀ Լոռու մարզի բնակավայրերում դեռեւս լուծված չեն ծրագրի շահառու ճանաչված 382 ընտանիքների բնակ.ապահովման խնդիրները, այդ թվում Վանաձորում 14, Սպիտակում 50/ 1 սենյակի հավակնող ընտանիքներ/, 33 գյուղական բնակավայրերում 318 ընտանիք:

Լոռու մարզի 33 գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 318 ընտանիքներին ֆինանսական աջակցության տրամադրմանը ՀՀ Կառավարությունը կանդիդատառնա 2016թ. ընթացքում:

ՀՀ Կառավարության 19.11.2015թ. թիվ 1363-Ն որոշմամբ մարզպետարանին հատկացվել է 99մլն. դրամ, որից 39,0մլն.-ը՝ գյուղական բնակավայրերում 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած եւ դատարանի վճռով իրենց իրավունքները վերականգնած 1 սենյակի շահառու ճանաչված 13 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավմանն ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրման եղանակով: Նշված 13 շահառու ընտանիքների հետ Լոռու մարզպետը կնքել է համապատասխան պայմանագրեր եւ ս.թ. դեկտեմբերի 18-ի դրությամբ բոլոր շահառուները ստացել են 3-ական մլն. դրամ՝ ընդհանուրը՝ 39,0 մլն. դրամ:

Վերը նշված որոշմամբ հատկացված գումարից 60,0մլն. դրամը նախատեսված է Վանաձոր քաղաքում բազմաբնակարանային շենքերում բնակարան կորցրած 14 ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման համար բնակարանների գնման վկայագրերի /ԲԳՎ/ միջոցով: Գործընթացն սկսված է, արդեն 10 ընտանիքի հետ կնքվել է պայմանագիր եւ հատկացվել ԲԳՎ-ներ, 4 ընտանիքի հետ աշխատանքները ընթացքի մեջ են:

Աղբահանություն

Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքներում հատուկ աղբամաններ չեն նախատեսվում, աղբահանությունը կատարվում է լոկալ ձեռով, հաճախ չեն ապահովվում բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման նորմերը: Քաղաքային համայնքների որոշ թաղամասերում երբեմն աղբի տեղափոխումը կատարվում է անթույլատրելի ուշացումներով, ինչն առաջացնում է բնակչության դժգոհությունը: Այս հարցի կապակցությամբ վարչության կողմից կատարվում է ամենօրյա վերահսկողություն՝ նշված թաղամասերում աղբի տեղափոխումը ժամանակին կազմակերպելու համար:

Աղբահանության բնագավառի հիմնախնդիր է հանդիսանում նաև համայնքներում պահանջվող նորմերին համապատասխան աղբավայրերի, ինչպես նաև աղբավայրերից կեղտաջրերի ֆիլտրացման համակարգերի բացակայությունը (բացառությամբ Ալավերդի քաղաքի):

Մշակվում է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ», որն իրականացվում է Հայ-Գերմանական ֆինանսական համագործակցության

շրջանակներում, որպես Գերմանական զարգացման բանկի (KFW-ի) աջակցություն՝ ուղղված կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգի (ԿԿԹՀԿ) ստեղծմանը:

Խորհրդատուների հետ համագործակցելով մասնակցել ենք Վանաձոր, Սպիտակ, Դիլիջան քաղաքների և հարակից համայնքների համար նախատեսվող՝ Քարածորի աղբավայրի ընտրության գործընթացին:

2015թ. ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կենցաղային աղբահանության վարձավճարի տվյալները հետեւյալն էր. նախատեսված էր գանձել 54,556,735,86 հազ. դրամ գումար, փաստացի գանձվել է 47,890,756,67 հազ.դրամ (նախատեսված գումարի 87,78%-ը):

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

1. Ջրատարների երկարություն – 263 կմ
2. Բաշխիչ ցանցի երկարություն – 343.6 կմ
3. Պոմպակայաններ – 4 հատ
4. Քլորակայաններ – 6 հատ
5. Օրվա կարգավորիչ ջրամբարներ – 26 հատ
6. Խմելու ջրի մաքրման կայան – 1 հատ
7. Կոյուղու մաքրման կայան -1 հատ
8. Ջրի տարեկան ծախսը – 15 754 419 մ³/տարի

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության սպասարկման տարածքում KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացվում են մարզի բնակավայրերի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի վերականգնման, վերակառուցման, գոտիավորման, խմելու ջրի արդյունավետ բաշխման եւ հաշվառման խնդիրների, ինչպես նաեւ կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրման աշխատանքներ:

2015թվականին գերմանական KFW վարկային ծրագրի միջոցներով մարզում իրականացվել են 272,3մլն դրամի շինարարական աշխատանքներ, Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով՝ 1148,8մլն. դրամ եւ «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության միջոցներով՝ 6,4մլն դրամի աշխատանքներ: «ԳՏՏՁ ԾԻԳ» ՊՀ-ի (ԻՖԱԴ) ֆինանսավորմամբ իրականացվել են 1304,9մլն դրամի վերակառուցման աշխատանքներ:

Ջրամատակարարման ոլորտում 2015թ. Լոռու մարզում նախատեսված իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2015թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			31.12.15թ. (մլն դրամ)	այդ թվում՝ հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	3,245,027.8	2,771,729.7		
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ		1,427,522.0		
II	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ		1,427,522.0		
1.	Խմելու ջրի մատակարարման ջրագծերի եւ կոյուղագծերի կառուցում		272.322.0		
2.	Թվով 16 համայնքների ջրամատակարարման համակարգի բարելավում		1.155.200.0		
III	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՋՄԱԿԵՐՊ., ԴՈՆՈՐՆԵՐ		0.0		

IV	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ		0.0	0.0	
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ				
VI	ԱՅԼ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ		1,344,207.0		
1.	Թվով 1 համայնքի ջրագծի կառուցում		39.300.0		
2.	Թվով 4 համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցում		1.304.907.0		

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզում գործում են 67 ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ: Այդ երթուղիների սպասարկումը մրցութային կարգով իրականացնում են 15 կազմակերպություններ, որոնք շահագործում են 125 տրանսպորտային միջոցներ (ավտոբուսներ՝ 76, միկրոավտոբուսներ՝ 49):

Մարզում գործում է «Հարավկովկասյան երկաթուղու» Գյումրի-Այրում հատվածը՝ 13 կայարաններով:

Ներքաղաքային կանոնավոր փոխադրումներ իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում:

2015թ. բեռնափոխադրումների ծավալները ավտոմոբիլային տրանսպորտով մարզում կազմել է 520.4հազ. տոննա, նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 2.4 անգամ, իսկ տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր ծավալում կազմել է 10.3%: Բեռնաշրջանառության ծավալը մարզում կազմել է 8.3մլն.տոննա, աճը՝ 193.0%, տեսակարար կշիռը՝ 6.5%: Ուղևորափոխադրումների ծավալն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կազմել է 7319.9 հազար մարդ, աճը՝ 83.9%, տեսակարար կշիռը՝ 3.9%:

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 891.1կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 218.9 կմ
- հանրապետական 264.3 կմ
- մարզային (տեղական) 407.9 կմ

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ 5 հատ

2015թ. մարզում ճանապարհաշինության բնագավառում կատարվել է **5890.2** մլն դրամի աշխատանք, ինչը հանդիսանում է աննախադեպ ցուցանիշ նախորդ տարիների համեմատ, որից 4241.7մլն. դրամը ՀՀ պետական բյուջեի միջոցներով (400.0մլն. դրամ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, 341.7 մլն. դրամ՝ ՀՀ Լոռու մարզպետարան և 162.5 մլն. դրամ համայնքներ), 1400,0մլն. դրամը՝ միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներով: 2015թ-ին մարզում ճանապարհաշինության ոլորտում իրականացվող աշխատանքների ուղղությամբ ներդրումները 2014թ-ի համեմատությամբ աճել է 4.4 անգամ, ինչի արդյունքում բարելավվել է համայնքների միջև հաղորդակցության մակարդակը, նվազել է տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը, կրճատվել է հաղորդակցության ժամանակը: Վերակառուցած Ագարակ-Օձուն-Մ-6 39.6 կմ ճանապարհահատվածն ունի առավել կարևոր նշանակություն, քանի որ այն հանդիսանում է այլընտրանքային ճանապարհ Մ-6 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի համար:

ՀՀ Լոռու մարզում պետական բյուջեից և այլ միջոցներից ճանապարհաշինության գծով 2015թ. հատկացումները և իրականացված աշխատանքները

(մլն.դրամ)

	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2015թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 31.12.15թ. (մլն դրամ)	Ծանոթություն / պետ. բյուջեի համաֆինանսավորումով/
	Ընդամենը մարզում՝	736.678.32	5.890.217.9	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	551.921.0	4.241.700.0	
	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	400.000.0	400.000.0	
1	Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհահատվածի հիմնանորոգում 2,9կմ երկարությամբ:	400.000.0	400.000.0	
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ		341.700.0	
1	Մարզային ա/ճանապարհների պահպանում և շահագործում		71.400.0	
2	S-5-32-Կաթնաջուր 4կմ ավտոճանապարհի 1.8կմ ճանապարհահատվածի հիմնանորոգում		149.200.0	
3	Սպիտակ քաղաքի Տեր-Սիմոնյան փողոցի հիմնանորոգում		65.500.0	
4	Վանաձոր քաղաքային համայնքի Խնձորուտ թաղամասի գերեզմանատան ճանապարհի հիմնանորոգում		55.600.0	
II	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ		3.500.000.0	
1.	ՀԲ ֆինանսավորմամբ՝ Ագարակ-Օձուն-Մ-6 ճանապարհի հատվածի 39,6կմ վերակառուցման աշխատանքներ (պետ. Բյուջեից ֆինանսավորվել է ծրագրի մոտ 20%-ը)		3.500.000.0	
III	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ., ԴՈՆՈՐՆԵՐ		1.400.000.0	
1.	Տաշիր-Գոգավան 6,8կմ հատվածի հիմնանորոգում		1.400.000.0	
IV	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	184.757.32	162.517.90	
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ		86.000.0	
3	«ՄԱՐԳԱՀՈՎԻՏ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ՝ Մարգահովիտ համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում (համայնքային բյուջեից համաֆինանսավորվել է մոտ 10%-ը)		86.000.0	

Ձմռան ամիսներին ձյան մաքրման աշխատանքների իրականացման ժամանակ երթևեկության խցանումների և ձյան առատության պատճառով արձանագրվել են ուշացումներ տեխնիկայի մաքրման տեղամաս մոտեցման հետ կապված: Ճանապարհների ընթացիկ սպասարկման հետ կապված թերություններին տրվել են համապատասխան լուծումներ: Ճանապարհաշինության ոլորտում թերությունները հիմնականում կապված են եղել

նախագծային աշխատանքներում բացթողումների և ճանապարհաշինական աշխատանքների ընթացքում ի հայտ եկած խնդիրների հետ: Այդ խնդիրների վերաբերյալ մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից կատարվել են ուսումնասիրություններ և տրվել համապատասխան լուծումներ:

Լոռու մարզում դեռևս առկա են չլուծված ճանապարհաշինական խնդիրներ, որոնք ենթակա են հրատապ լուծման, դրանցից են՝

- Մ3-Ստեփանավան-Պրիվոլնոյե-Վրաստանի սահման հանրապետական ավտոմոբիլային ճանապարհի՝ Սվերդլով-Վրաստանի սահման հատվածը
- Հաղպատի պատմական հուշարձան-Ծաղկաշատ հատվածը
- Վանաձոր քաղաքի Թումանյան հրապարակը Հալաբյան փողոցին կապող էտակադան
- Հ-31 հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Տաշիր-Բլագոդարնոյե հատվածը

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Լոռու ԳԳՄ սպասարկման տարածքում նախկինում ունեցել ենք 42220 բաժանորդներ, որից Վանաձոր քաղաքում՝ 20708: Առ 01.01.2016թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի գազամատակարարումը վերականգնված և գազիֆիկացված բնակավայրերում առկա են թվով 64118 բաժանորդներ, 29777 բնակարաններ և 34341 առանձնատներ, որից թվով 30402 Վանաձոր քաղաքում: 2015թ. 12 ամիսների ընթացքում բաժանորդների թվաքանակը աճել է 501-ով, որից 269 բնակարաններ և 232 առանձնատներ:

Հաշվետու ժամանահատվածում ոչ պետական միջոցներով մարզում իրականացվել են գազամատակարարման աշխատանքներ 462.3 մլն. դրամ ընդհանուր արժեքով՝

«Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության ծրագրով իրականացվել են.

Նշված ծրագրով մասնաճյուղի սպասարկման տարածքի Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Գուգարք, Օձուն, Կուրթան, Վարդաբլուր, Հոբարձի, Գար-Գառ, Դսեղ համայնքներում իրականացվել են բարձր, միջին և ցածր ճնշման գազատարերի վերատեղադրման աշխատանքներ՝ 397.0 մլն. դրամ գումարով:

Լոռու ԳԳ մասնաճյուղի 2015թ. «Շենք-շինությունների հիմնանորոգում» ծրագրով իրականացվել են.

- Թվով 7 գազակարգավորիչ կետերի շինությունների վերանորոգում՝ 4.5 մլն. դրամ:
- Թվով 11 ՊԳԿԿ-ներում ջեռուցման վառարանների տեղադրում՝ 0.5 մլն. դրամ:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ.

Բնակիչ-բաժանորդների ներտնային գազահամակարգերում թվով 474 անվտանգության սարքերի տեղադրում՝ 12.4 մլն. դրամ:

- ✓ Թվով 14 ՌԳ մակնիշի գազահաշվիչները 'Kypc-01' մակնիշի անդրաձայնային գազահաշվիչներով փոխարինում՝ 18.5 մլն. դրամ:
- ✓ Թվով 2 G-250 տուրբինային գազահաշվիչների տեղադրում՝ 2.3 մլն. դրամ:
- ✓ Բաժանորդների 21.4 մլն. դրամ ֆինանսավորմամբ գազաֆիկացվել են թվով 501 բնակարաններ եւ առանձնատներ:
- ✓ Բաժանորդների 5.7 մլն. դրամ ֆինանսավորմամբ գազաֆիկացվել են թվով 33 հիմնարկ-ձեռնարկություններ:

ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ՀՀ Լոռու մարզում էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացնում է «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղը, որի սպասարկման տարածքի բնակավայրերում առ 01.01.2016թ. դրությամբ առկա է 95 251 բաժանորդ:

2015թ.-ի ընթացքում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից մարզում իրացվել է 362492.4 հազ. կՎտժ էլեկտրաէներգիա, որից 118382.9 հազ.կՎտժ-ը բնակչությանը:

Հաշվետու ժամանահատվածում ոչ պետական միջոցներով մարզում իրականացվել են էլեկտրամատակարարման աշխատանքներ՝ «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից կատարվել է շուրջ **263,767.1**հազ դրամի ներդրում, որից՝

- 173 նոր բաժանորդների միացման աշխատանքների համար – 195,370.4հազ դրամ:
- Թվով 19 տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների և հիմնանորոգման աշխատանքների համար – 36.849.1հազ դրամ:
- Օդային և մալուխային գծերի հիմնանորոգման համար – 31,547.7հազ դրամ:

2015թ. ընթացքում մատակարարված էլ.էներգիայի համար անհրաժեշտ էր գանձել 13,921,641.9 հազ.դրամ, փաստացի գանձվել է 13,983,079.0 հազ. դրամ, (100.4%):

ԿԱՊ

- Թվայնացվել է գ.Մեծավանի ԱՀԿ-ն, 192 համար՝ ունակությամբ և ինտերնետի հնարավորությամբ:
- Վանաձորի քաղաքի Տարոն-2 թաղամասում մոնտաժվել է թվային ԱՀԿ-ն, 1776 համար՝ ունակությամբ և ինտերնետի հնարավորությամբ:
- Թվայնացվել է ք.Թումանյանի ԱՀԿ-ն, 128 համար՝ ունակությամբ և ինտերնետի հնարավորությամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծություն

«Լոռու մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2015 թվականի դրությամբ (հեկտար)

	Այդ թվում					
	Գյուղ. նշանակ. հողեր, ընդամենը	Վարելահողեր	Բազմամյա տնկարկներ	Խոտհարքներ	Արոտներ	Այլ հողատեսքեր
Լոռու մարզ	251073.8	42095.4	418,0	35110.4	145664.1	27785.9

Մարզում ցանքատարածությունները կազմել են՝

- 2012թ. – 23612 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 56 %-ը
- 2013թ. – 27238 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 64.7 %-ը
- 2014թ. – 28650.7 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 68 %-ը
- 2015թ. – 31620.5 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 75 %-ը

2015թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում «Լ կառավարության կողմից մարզին հատկացվել է՝

- 2300.0 տ ազոտական պարարտանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 69 համայնքների կողմից: Ստացվել է 2150,55 տ, որը բաշխվել է պահանջարկ ներկայացրած մարզի 66 համայնքների,
- 100 տ ֆոսֆորական պարարտանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 26 համայնքների կողմից: Ստացվել է 70,25 տ, որը բաշխվել է պահանջարկ ներկայացրած մարզի 10 համայնքների,
- 100 տ կալիումական պարարտանյութ որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 25 համայնքների կողմից: Ստացվել է 53,0 տ, որը բաշխվել է պահանջարկ ներկայացրած մարզի 11 համայնքների,
- 1.300.000 լիտր դիզելային վառելանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 82 համայնքների կողմից: Բաշխվել է 604.902 լիտր մարզի 61 համայնքների:

2015 թվականի գարնանացանի համար մարզին հատկացվել է.

- 80 տոննա գարու սերմացու, որը ամբողջությամբ իրացվել է մարզի 34 համայնքների կողմից: Իրացված սերմացուով կատարվել է 400 հա ցանք:
- 4,05 տոննա եգիպտացորենի սերմացու, որից իրացվել է 1,900 տ մարզի 20 համայնքների կողմից: Իրացված սերմացուով կատարվել է շուրջ 77 հա ցանք:
- 5,7 տոննա առվույտի սերմացու որը ամբողջությամբ իրացվել է մարզի 35 համայնքների կողմից: Իրացված սերմացուով կատարվել է 228 հա ցանք:
- 17,1 տոննա կորնգանի սերմացու, որը ամբողջությամբ իրացվել է մարզի 19 համայնքների կողմից: Իրացված սերմացուով կատարվել է 114 հա ցանք:

2015 թվականի աշնանացանի համար մարզին հատկացվել է 403,4 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը բաշխվել է մարզի 33 համայնքների: Բաշխված սերմացուով կատարվել է շուրջ 1345 հա աշնանացան, իսկ 2015թ. կատարված աշնանացանը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում կազմում է 11194 հա:

Մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումները կազմակերպելու համար «Լ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացվել է 192 կգ «Ռոդիֆակում Ս»

տեսակի մկնասպան միջոց, որը բաշխվել է գյուղնախարարության կողմից անցկացված մոնիտորինգի հիման վրա հաստատված մարզի 11 համայնքների: Պայքարի միջոցառումները իրականացվել է 2400 հա-ի վրա:

2014թ. մայիսի 24-ին ու հուլիսի 8-ին տեղացած կարկտահարությունից տուժած հողօգտագործողներին օժանդակելու, պատճառած վնասները հնարավորինս մեղմելու նպատակով, ՀՀ-ում 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի շրջանակներում՝ 2013 և 2014 թթ-ին մարզի 12 համայնքներին (Մեծավան, Դսեղ, Օձուն, Ծաթեր, Արևածագ, Մղարթ, Գյուլագարակ, Վարդաբլուր, Հոբարձի, Ամրակից, Գարգառ, Ագարակ) հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի դիմաց ձևավորված պարքերում կատարվել են զիջումներ՝ համաձայն ՀՀ կառավարության 19.11.2015թ. N 1357-Ա որոշման:

Ուսումնասիրվել են 2015թ-ի հունիսի 11-ին Մեծ Այրում, Ճոճկան, Շնող, Օձուն և Հագվի համայնքներում ուժգին կարկտահարության հետևանքով վնասված ցանքատարածությունները: Վնասվել է 1389հա ցանքատարածություններ: Կազմվել է մասնագիտական ակտ պատճառված վնասների չափի վերաբերյալ:

Նախապատրաստվել և հոկտեմբերի 4-ին անց է կացվել «Բերքի տոն 2015» մարզային ավանդական տոնակատարությունը, իսկ հոկտեմբերի 16-18 մարզի պատվիրակությունը մասնակցել է Երևանում կայացած «Հայագրոֆորում»-ի աշխատանքներին:

2015 թվականին գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի մասով կատարված ցանքերի ցուցանիշների համեմատականները 2014 թվականի հետ բերված են ստորև աղյուսակում.

h/ h	Մշակաբույսի անվանումը	Կատարվել է ցանք (հա)		Համեմատական	
		2015թ.	2014թ.	հա	%
1	Հացահատիկային մշակաբույսեր	14038.3	12238.0	+1800.3	+14.7
2	Հատիկաընդեղենային մշակաբույսեր	207.0	196.2	+10.8	+5.5
3	Կարտոֆիլ	4278.2	4016.0	+262.2	+6.5
4	Բանջարաբուստանային մշակաբույսեր	1604.9	1489.0	+115.9	+7.8
5	Տեխնիկական մշակաբույսեր	396.0	291.0	+105	+36.1
6	Կերային մշակաբույսեր	11081.0	10409.0	+672.4	+6.5
7	Կատարվել է աշնանացան	10884.0	9573.0	+1311	+13.7

2015 թվականի ընթացքում արտադրված գյուղատնտեսական մթերքների ինչպես նաև կուտակված անասնակերերի ծավալների համեմատականները 2014 թվականի հետ բերված են ստորև աղյուսակում.

h/ h	Մշակաբույսի անվանումը	Ստացվել է բերք (տ)		Համեմատական	
		2015թ.	2014թ.	տ	%
1	Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	47121.8	41585.2	+5536.6	+13.3
2	Կարտոֆիլ	75863.7	73251.2	+2612.5	+3.6
3	Բանջարաբուստանային մշակաբույսեր	30506.7	27091.1	+3415.6	+12.6
4	Տեխնիկական մշակաբույսեր	291.6	318.1	+26.5	+9.1
5	Պտուղ և հատապտուղ	2453.2	2762.2	-308.8	-11.1
6	Խաղող	185.7	354.8	-169.1	-47.6
7	Կուտակվել է խոտ	128639	122889.0	+5750	+4.6

Գյուղատնտեսական համախառն արտադրանքի տեսակարար կշիռը (2012թ.) 7.1%, որը կազմել է 59.7մլրդ դրամ, (2013թ.) 7.3%, որը կազմել է 67.5 մլրդ դրամ, (2014) 7.4%, որը կազմել է 73.8մլրդ դրամ, (2015թ.) 7.3%, որը կազմել է 73.3մլրդ դրամ:

Ոռոգում

Պարբերաբար կատարվել է ուսումնասիրություններ «Գետիկ» և «Լոռու ջրանցք» ԶՕԸ-ների գործունեությունների վերաբերյալ հետևելով ոռոգման համակարգերի նպատակային շահագործման և տրված ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրման գործընթացին:

Ոռոգման, ջրարբիացման և համակարգերի շահագործման նպատակներով ԶՕԸ-ների գործունեությունների ցուցանիշները 01.01.2016թ. դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	ԶՕԸ-ի անվանումը	Ոռոգված տարածքը (հա)			Զրտուրը հազ. խմ	Հասույթ ըհազ. դրամ	Գանձում ը հազ. դրամ	Գանձման մակարդակը %
		Ընդամենը	որից					
			մեխանիկական	ինքնահոս				
1	Գետիկ	804,7	349,8	454,9	1490,1	16391,0	16391,0	100,0
2	Լոռու ջրանցք	1363,5	639,0	724,5	1131,0	12441,5	13391,7	107,6
	ջրարբիացում				25,5	1529,8	1617,0	105,7
	շահագործում				78856,8	11180,0	11613,8	103,9
Ընդամենը		2168,2	988,8	1179,4	81503,4	41542,3	43013,5	103.5

Համայնքների ղեկավարներին առաջարկվել է համաձայն ՀՀ ՏԻՄ օրենքի իրենց պատվիրակված լիազորությունների շրջանակներում ջրօգտագործողների շրջանում տանել համապատասխան բացատրական աշխատանք ոռոգման ջրի վարձավճարների վճարման գործընթացը ժամանակին կատարելու համար:

Պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է Այրում-Ճոճկան, Շնող-1, Ճոճկան-1 և Ճոճկան-2 պոմպային կայանները: Վերանորոգման աշխատանքների իրականացման համար պետբյուջեից կատարվել է շուրջ 7,9մլն դրամ ներդրում:

«Գետիկ» ԶՕԸ-ի սպասարկման տարածքում պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է Կաթնաջուրի դյուկեղ: Վերանորոգման աշխատանքների իրականացման համար պետբյուջեից կատարվել է շուրջ 2.1մլն դրամ ներդրում:

ԱՄՆ-ի ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի և «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում վերանորոգվել են.


- Շնող համայնքում կատարվել է «Շնող-1» պոմպային կայանի հեռացնող ջրանցքի 4800 մ երկարությամբ տեղամասի ՈՔ-9 ե/բ կիսխողովակների վերանորոգում, տեղադրվել են հիդրանտներ և ջրթողներ: Կատարված աշխատանքների շնորհիվ լիարժեք կոռոզվի 230 հա վարելահողեր և այգիներ: Շինարարական աշխատանքների իրականացման համար կատարվել է շուրջ 12,6 մլն. դրամ ներդրում,
- Ճոճկան համայնքում կատարվել է ներտնտեսային ջրանցքի 1220մ երկարությամբ տեղամասի նորոգում, որի շնորհիվ լիարժեք կոռոզվի 34 հա վարելահողեր:

Անասնաբուծություն

Համաձայն Լոռու մարզպետի 2014թ. դեկտեմբերի 11-ի թիվ 306 կարգադրության վերահսկվել է Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2015թ. հունվարի 1-17-ը անցկացված անասնազվաքանակի հաշվառման գործընթացը:

Լոռու մարզի 2015թ-ի անասնազխաքանակը (հունվարի 1-ի դրությամբ)

Անվանումը	
Խոշոր եղջ. Կենդ. Ընդամենը	81 003
Որից կովեր	39 694
Մանր եղջ. Կենդանիներ	38 252
Խոզեր	10 953
Թռչուններ	155 227
Մեղվաընտանիքներ	24 303
Ձիեր	2 452



Ըստ վիճակագրական ծառայության տվյալների Լոռու մարզի 2015թ. անասնաբուծական մթերքիների արտադրության ծավալները կազմում են.

Անվանումը	2015թ.
Միս (հազ.տ)	19.7
Կաթ (հազ.տ)	90.3
Ձու (միլ.հատ)	47.8

«Համայնքների գյուղական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում Մեծավան, Մարգահովիտ, Լեռնանցք և Հարթագյուղ համայնքներում ձևավորվել են գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ: Ծրագրի շրջանակներում Մեծ Պարնի համայնքում ներ է դրվել 132,380 հազ դրամ, որից՝ 70,380 հազ դրամը՝

գյուղտեխնիկայի, 62,0մլն դրամը՝ ջրագծերի և ճանապարհների նորոգման աշխատանքների վրա:

Ուղեկցելով ՀՀ գյուղատնտեսության նախարար պարոն Ս.Կարապետյանին, այցելություն է կատարվել մարզի Սպիտակ և Մեծ Պարնի համայնքներ: Սպիտակ համայնքում ուսումնասիրվել է «Փրկեցեք երեխաներին» ՀԿ-ի, Սպիտակի քաղաքապետարանի և «Սպիտակ ֆերմեր» ՀԿ-ի միջոցներով կառուցված 2000մ² մակերեսով ջերմոցային տնտեսությունը, իսկ Մեծ Պարնի համայնքում՝ իրականացվող «Գյուղական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում իրագործված աշխատանքների ընթացքը:

Ընթացքի մեջ է Հայ-Ֆրանսիական «Լոռու մարզում անասնաբուծության զարգացման համագործակցություն» ծրագիրը: Ծրագրի նպատակն է մարզում ոչխարաբուծության զարգացումը և բարձրացնելու անասնազվաքանակի մթերատվությունը:

Գյուղի Զարգացման Արդի Նախաձեռնությունը (ԱՐԴԻ) ծրագրի շրջանակներում ավարտվել է 40-50 տոննա տարողությամբ Շնող և Մեծ Այրում համայնքներում կառուցվող սառնարանային տնտեսությունների շինարարական աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 16 մլն դրամ:

Ընթացքի մեջ են Եղեգնուտ և Լորուտ համայնքներում կաթի հավաքման կետերի վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև Շամուտ, Լորուտ և Աթան համայնքներում գյուղ. կենդանիների ջրախմոցների կառուցման աշխատանքները (Շամուտ և Աթան համայնքներում՝ 2-ական, իսկ Լորուտ համայնքում՝ 4 ջրախմոցներ):

«Դիակոնիա» հայ-հոլանդական բարեգործական ծրագրի շրջանակներում իրականացվել են.

- Սարամեջ և Մեծ Պարնի համայնքներում բնակվող սոցիալապես անապահով 12 ընտանիքների համար 6.89մլն դրամ արժեքով 6,5 հա հողատարածքում կարտոֆիլի մշակման ծրագրեր:
 - Ջրաշեն համայնքում՝ բնակվող սոցիալապես անապահով 10 ընտանիքների համար 2մլն դրամ արժեքով, 10 հա հողատարածքում հաճարի մշակման ծրագրեր:
 - Մեծ Այրում համայնքում՝ բնակվող սոցիալապես անապահով 45 ընտանիքների համար 3,2 մլն դրամ արժեքով, 11 հա հողատարածքում մրգատու ծառերի ծառատունկի ծրագրեր:
 - Կուրթան և Վարդաբլուր համայնքներում բնակվող սոցիալապես անապահով 2 ընտանիքներին տրամադրվել է մեկական կով իրենց հորթերով:

Գյուղատնտեսական կենդանիների վրա գայլերի ոհմակների հարձակումների հետ կապված մարզի Գյուլագարակ համայնքի ղեկավարից ստացված ահազանգի հիման վրա տեղում կատարվել են ուսումնասիրություն, կազմվել է համապատասխան ակտ և հատկացվել դրամական աջակցություն:

Սննդամթերքի անվտանգության ծառայության հետ վերահսկվել է մարզի համայնքներում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ պատվաստումների ընթացքը:

Մարզում կաթի սպառման և շուկայական գների ուսումնասիրության հետ կապված այցելություններ են կատարվել մարզի համայնքն:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101205 հա, որից անտառածածկ է 85799 հա-ն: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը: Մարզի անտառների կառավարումն իրականացնում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմում գործող «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 7 անտառտնտեսությունները՝ Գուգարքի, Եղեգնուտի, Լավվարի, Զիլիզայի, Դսեղի, Ստեփանավանի և Տաշիրի:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի, մարզում գործող անտառտնտեսությունների հետ պարբերաբար ամփոփվել է մարզի տարածքում փայտանյութի մթերման պետական առաջադրանքի և անտառվերականգնման աշխատանքների վերաբերյալ տվյալները.

➤ 2015թ. պլանային և այլ հատումները կազմել են 11282մ³, այդ թվում Թեղուտի հանքավայրի շահագործման նպատակով իրականացված հատումները՝ 4360մ³:


➤ 2015թ. ընթացքում մթերվել է 10954 մ³ թափուկ վառելափայտ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Ոստիկանության մարզային վարչության, բնապահպանության նախարարության ԲՊՏ Լոռու տարածքային բաժնի հետ պարբերաբար ամփոփվել է մարզի տարածքում ապօրինի ծառահատումների, փայտանյութի անօրինական տեղաշարժի և օրինախախտումների վերաբերյալ տվյալները:

➤ 2015թ. ընթացքում Ոստիկանության Լոռու մարզային վարչության և ոստիկանության բաժինների կողմից կատարվել է 723 ստուգայց, հայտնաբերվել են ապօրինի անտառհատումների, փայտանյութի տեղափոխման և իրացման 92 դեպք, պետությանը հասցված վնասի չափը կազմել է 12,361.818 հազ դրամ, որից վերականգնվել է 6,735.880հազ դրամը: Հարուցվել է 13 քրեական գործ, վարչական պատասխանատվության են ենթարկվել 38-ը:

➤ Լոռու մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2015թ. ընթացքում հայտնաբերված ապօրինի հատումները կազմել են 337 ծառ – 156 խտացված խոր.մ ընդհանուր ծավալով:

Ծառահատումներ



WWF ծրագրով 2015թ. «Թռչկան» ջրվեժի՝ բնության հուշարձանի հարևանությամբ իրականացվել է 20հա տարածքի վրա նախորդ տարիներին հիմնադրված անտառային մշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ (լրացում շուրջ 22 000 տնկի)։

2015թ. ընթացքում անտառհիմնման ոլորտում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.

- Համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում Սպիտակ, Գոգարան, Արևաշող, Լուսաղբյուր, Փամբակ, Շիրակամուտ, Վանաձոր, Մարգահովիտ և Տաշիր համայնքներում շուրջ 6800 տնկիների տնկում;
- Անտառային ծրագրի շրջանակներում.
 - ✓ Միխայելովկա համայնքում շուրջ 43.4 հա անտառտնկման աշխատանքներ,
 - ✓ Կողես համայնքում նախորդ տարիներին հիմնադրված 50 հա-ի վրա ցանքսի միջոցով լրացման աշխատանքներ,
 - ✓ Տաշիր համայնքում 38 հա տարածքի ցնկապատում: Անտառտնկման աշխատանքներն կիրականացվեն 2016թ. ընթացքում:
 - ✓ Նախկինում կառուցված ցանկապատի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ,
 - ✓ Սպիտակ, Ստեփանավան, Կաթնաջուր, Արջուտ, Ֆիդլետովո, Ծաղկաբեր, Ջրաշեն, Ղուրսալի, Սվերդլով, Սարատովկա և Կողես համայնքներում նախորդ տարիներին հիմնադրված շուրջ 550 հա-ի վրա անտառմշակույթների խնամքի աշխատանքներ:

Անտառտնկարկների խնամքի և լրացման աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Ավանդական դարձած անտառտնկման աշխատանքներից բացի, հիմնադրամը մարզում իրականացնում է նաև տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ, անվճար հիմունքներով համայնքներին է տրամադրում պտղատու և դեկորատիվ տնկիներ:

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամին է պատկանում նաև Լոռու մարզի Մարգահովիտ գյուղում գտնվող «Միրաք» անտառային տնկարանը: 5 հա տարածք զբաղեցնող տնկարանում աճեցվում է շուրջ 1մլն. տնկի, հիմնականում՝ կաղնի, բարձր լեռնային թխկի, հացենի, սոճի:



Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված, ըստ հաստատված բնապահպանական ծրագրի, «Թեղուտ» ՓԲԸ-ն 2009-14թթ. ընթացքում մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով կատարել է 220 հա համայնքային (73 հա՝ Լեռնահովիտ, 50 հա՝ Թեղուտ, 50 հա՝ Արջուտ, 30 հա՝ Օձուն, 17 հա՝ Շնող) և 158.5 հա

պետական անտառային ֆոնդի տարածքների վրա ցանկապատման, լրացման և խնամքի աշխատանքներ: 2015թ. նույն ծրագրի շրջանակներում «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում իրականացվել է 61.2 հա անտառտնկում:

Հաշվի առնելով, որ «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հիմնականում տարածվում է Շնող և Թեղուտ համայնքների վրա, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ համայնքների վարչական սահմաններում անտառհիմնման համար համապատասխան տարածքներ չկան, Լոռու մարզպետարանն առաջարկել է Թեղուտի հանքավայրի շահագործման հետ կապված բնապահպանական ծրագրով 734հա անտառապատման ծավալից մնացած շուրջ 180հա-ի պտղատու այգիների հիմնման նպատակով հատկացնել Շնող և Թեղուտ համայնքներին:

Բարձրացված հարցին տրվել է դրական լուծում: ՀՀ բնապահպանության և ՀՀ գյուղատնտեսության նախարարների 2008թ. ընդունված համատեղ հրամանում կատարված փոփոխություններով նախատեսվում է պտղատու այգիների հիմնման աշխատանքներ իրականացնել վերոնշյալ համայնքների գյուղացիական տնտեսությունների մասնավոր տարածքներում: Այս ծրագրի իրականացման հետևանքով որոշ չափով կլուծվի թիրախային գոտում գտնվող համայնքների կանաչապատման խնդիրը և իր դրական ներգործությունը կունանա նաև ազգաբնակչության զբաղվածության, սոցիալական լարվածության մեղմման, ենթակառուցյունների զարգացման և այլ խնդիրների լուծման գործում:

2015թ. աշնանն արդեն իսկ Շնող համայնքում շուրջ 10 հա տարածքի վրա իրականացվել են պտղատու այգիների հիմնման աշխատանքներ (արքայանարինջ 6.2 հա, կեռաս 1.9 հա, խնձոր 1.4 հա, դեղձ 0.5 հա): 2016թ. նույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է ևս 10 հա պտղատու այգիների հիմնում:

Մարզպետարանի հանձնարարությամբ համայնքներում ծառերի էտը կազմակերպվում է ուշ աշնանը և էտից առաջացած վառելափայտը տրամադրում են սոցիալապես անապահով ընտանիքներին:

Աջակցություն է ցուցաբերվել մարզի համայնքներին, դպրոցներին և կազմակերպություններին՝ ծառատունկ կազմակերպելու համար: Մասնավորապես ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված ծառատունկին աջակցելու նպատակով մարզպետարանի միջնորդությամբ և մասնակցությամբ «Հայաստան» ՊՈԱԿ-ի տնկարաններից մարզի համայնքներին է տրամադրվել շուրջ 28 000 տնկի (թույա, ծիակասկ, ընկուզենի, խնձորենի, տանձենի):

Ընդհանուր առմամբ 2015թ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 104.6 հա անտառտնկման և նախորդ տարիներին հիմնադրված 930 հա անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ: Իրականացվել են նաև 38 հա տարածքի ցանկապատման և նախկինում կառուցված ցանկապատի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ:

Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարժություններ:

Ընթացքի մեջ է ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է ապահովել հյուսիս-արևելյան Հայաստանում հողերի և անտառների կայուն կառավարումը՝ երաշխավորելով բազմապիսի էկոհամակարգային ծառայությունների մատակարարման շարունակական ընթացքը և նպաստելով կարևոր նշանակություն ունեցող կենսաբազմազանության պահպանությանը:

Ծրագրի տևողությունը՝ 48 ամիս (2015-2018թթ):

Ընդերքօգտագործում և շրջակա միջավայր

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում:

Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 35 կազմակերպություններ, որոնցից 5-ը իրականացնում են մետաղական հանքավայրերի շահագործում (շահագործվում է Ալավերդու, Շամլուղի պղնձի, Թեղուտի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ու Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

Հանքավայրերի շահագործման և օգտակար հանածոների վերամշակման արդյունավետության բարձրացման համար կազմակերպություններին տրվել է մասնագիտական և խորհրդատվական օգնություն:

Ուսումնասիրվել և համապատասխան առաջարկություններ են արվել ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտներին առնչվող իրավական ակտերի մի շարք նախագծերի վերաբերյալ:

Մարզի հանքարդյունաբերական կենտրոններում (Ալավերդի, Թեղուտ, Արմանիս, Ախթալա) պարբերաբար անց են կացվում լեռնարդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և դրանց մեղմացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ: Հանդիպումներին մասնակցում են թիրախային համայնքների ղեկավարներ, ակտիվ քաղաքացիներ, ՀԿ-ների, ԶԼՄ-ների, պետական կառույցների, ինպես նաև հիմնարկ-ձեռնակությունների և այլ շահառու կողմերի ներկայացուցիչներ:

Մարզի ընդերքի օգտագործման և օրինականության վերաբերյալ պահանջվող ձևաչափով համապատասխան գերատեսչություններին պարբերաբար ներկայացվել են տեղեկանքներ:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2011-2015թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

(հազ. դրամ)

Համայնքներ	Տարիները				
	2012	2013	2014	2015	2016 - նախատեսված
Ալավերդի	94 411.5	110 000.0	120 000.0	94 097.0	--
Հաղպատ	23 602.8	25 000.0	27 000.0	27 081.1	--
Օձուն	23 602.9	58 664.8	12 498.4	7 403.5	47 918.2
Աքրի	23 602.8	28 000.0	30 000.0	20 173.5	--
Հազվի	8 000.0	50 000.0	30 000.0	-	--
Ախթալա	1 500.0	3 500.0	4 500.0	-	4 588.2
Ընդամենը	174 720.0	275 164.8	223 998.4	148 755.1	52 506.4

Առաջարկություն էր ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարություն, որպեսզի Լոռու մարզի Ստեփանավան, Ուրասար, ինչպես նաև Թեղուտ և Շնող համայնքները նույնպես ընդգրկվեն վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում ու բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար պետական բյուջեից սահմանված կարգով ստանան մասնահանումներ: Հաշվի առնելով ներկայացված առաջարկությունը, ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ քննարկման է ներկայացվել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծը:

Ակնկալվող բնապահպանական նպատակային գումարները էապես կնպաստեն նշված համայնքների ազգաբնակչության առողջության և շրջակա միջավայրի պահպանման գործում:

Պարբերաբար իրականացվում են Ախթալայի ԼՀԿ-ի «Նագիկ» պոչամբարի 1 հա-ի վրա կատարված ռեկուլտիվացիայի և ծառատունկի աշխատանքների մոնիտորինգ: Արդյունքները փաստում են կատարված աշխատանքի բարձր արդյունավետության մասին:

Լեռնանցք համայնքում իրականացված «Վարելահողերի վերականգնում դրենաժային համակարգի կառուցման միջոցով» ծրագրի արդյունքում ճահճացումից վերականգնվել է շուրջ 35 հա վարելահող, իսկ դրենաժի միջոցով հավաքված ավելցուկային ջրերը (14/վրկ) 2300 մետր ոռոգման համակարգի միջոցով ոռոգելի է դարձել շուրջ 50 հա:

Ընթացքի մեջ է Հայ-Գերմանական Ֆինանսական Համագործակցության շրջանակներում «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ, ք. Վանաձոր» ծրագիրը: Ծրագիրը ենթադրում է Լոռու մարզում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան 3 աղբավայրեր, որոնք կսպասարկեն Լոռու մարզն ամբողջությամբ: Նոր աղբավայրերի շահագործմանը զուգընթաց կլուծվի նաև համայնքներում տարերայնորեն առաջացած ապօրինի աղբավայրերի լիկվիդացման հարցը:

Մարզպետարանի կողմից տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ, մարզի 7 գյուղական համայնքներ ևս ձեռք են բերել աղբարկղներ և սկսել են կատարել կանոնակարգված աղբահանության աշխատանքներ:

Լոռու մարզում վտանգավոր թափոնները հիմնականում հանդես են գալիս ժամկետանց դեղորայքի տեսքով: Բժշկական թափոնների վնասագերծումը ոչ միայն առողջապահական, այլ նաև կարևոր բնապահպանական հիմնախնդրի լուծում է: Մարզպետարանի աջակցությամբ վտանգավոր թափոնների վնասագերծմամբ զբաղվող մասնագիտացված ընկերությունները պայմանագրեր են կնքել մարզի բուժ. հիմնարկների հետ և ըստ համատեղ մշակված ժամանակացույցի իրականացնում են ժամկետանց դեղորայքի և բուժ. պարագաների տեղափոխում և վնասագերծում:

Մարզում ռադիոակտիվ թափոնների կուտակման կամ պահեստավորման որևէ աշխատանքներ չեն կատարվել և չի էլ նախատեսվում:

Մարզի առողջապահական և բնապահպանական կարևորագույն հիմնախնդիրներից է դեռևս խորհրդային տարիներին կառուցված Ալավերդու մկնդեղի պահեստը, որը գտնվում է խիստ անմխթար վիճակում և կարող է էկոլոգիական աղետի աղբյուր հանդիսանալ:

2015թ. Ալավերդու քաղաքապետարանի կողմից անց է կացվել Ալավերդի համայնքի տարածքում գտնվող վտանգավոր թափոնների (մկնդեղի) գերեզմանոցի բնապահպանական ռիսկերի գնահատում և անվտանգությունն ապահովող միջոցառումների համար նախագծա-նախահաշվային աշխատանքների իրականացման մրցույթ: Նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրականացնելուց հետո կկազմվի գործողությունների ծրագիր, որը ոչ միայն կներակայացվի համապատասխան գերատեսչություններին և կառույցներին, այլ նաև միջազգային դոնոր կազմակերպություններին՝ տվյալ հիմնախնդրի լուծման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.37 կետը, բնապահպանության և ընդերքօգտագործման բնագավառներում համաձայն տրված հարցաշարերի 2015թ. ընթացքում Լոռու մարզի 17 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն և արդյունքները ներկայացվել ՀՀ ՏԿԱԻ նախարարություն:

Բնապահպանության բաժինը կազմակերպել և ակտիվ մասնակցություն է ունեցել բնապահպանության ոլորտին առնչվող մի շարք սեմինարների, գիտաժողովների և կոնֆերանսների աշխատանքներին:

«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ կազմակերպվել և անց են կացվել տարաբնույթ հասարակական լսումներ և քննարկումներ: Նշենք դրանցից առավել կարևորները.

- Արջուտի, Ֆիլվետովոյի, Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերի շահագործման և ենթակառուցների զարգացման հեռանկարների վերաբերյալ:

- Վանաձոր-Բագրատաշեն (Մ6) վերակառուցման ՇՄԱԳ-ի բնապահպանական զեկույցի ներկայացում՝ տեղի է ունեցել երեք քննարկում;
- «Կեղտաջրի մաքրման այլընտրանքային մոտեցումներ» մարզային սեմինար;
- Վանաձորի քիմիական գործարանի թափոնակուտակիչի պարունակության, պահպանության և հնարավոր օգտագործման հեռանկարին նվիրված հանդիպում-քննարկում և այլն:

Մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումները, հասարակական լուումները հիմնականում անց են կացվում մարզպետարանի նիստերի դահլիճում և մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրիուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Հասարակական լուումներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի 'Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին' թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2015թ. հուլիսի 1-ի դրությամբ:

Լոռու մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր 251073.8 հա՝

- Վարելահող 42095.4 հա
- Բազմամյա տնկարկներ՝ 418 հա
- խոտհարքներ՝ 35110.4 հա
- Արոտավայրեր՝ 145664.1 հա
- Այլ հողատեսքեր՝ 27785.9 հա

Նշված հողատարծքներից փաստացի օգտագործվում է, 80491.48հա, 32%, որից վարելահող 31852.2հա, 75.7%, բազմամյա տնկարք 311.7հա, 74.6%, խոտհարք 19164.2հա, 54.6%, արոտ 28679.48 հա, 19.7%, այլ հողատեսք 483.9հա, 1.7%:

Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը կազմում են 170582.32հա, որից վարելահող 10243.2հա, բազմամյա տնկարք 106.3հա, խոտհարք 15946.2հա, արոտ 116984.62հա, այլ հողատեսք 27302հա:

• ՀՀ Լոռու մարզպետի 19.01.2015թ. թիվ 6-Ա որոշումով հաստատված ժամանակացույցի համաձայն Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ կողմից 2015թ. ընթացքում հողերի արդյունավետ օգտագործման, պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նպատակով ընթացիկ ստուգումներ է անցկացվել մարզի 39 համայնքներում:

• ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեղեզգիայի և հողային պետական տեսչության մասնագետների հետ օգոստոսի 3-ից օգոստոսի 14-ը տեսչական ստուգումներ է անցկացվել մարզի 6 համայնքներում:

• ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեղեզգիայի և հողային պետական տեսչության» 19.11.2015թ. թիվ 06 որոշման համաձայն մարզպետի կողմից կայացված որոշումներով վարչական տույժ է նշանակվել 5 համայնքների ղեկավարների նկատմամբ, որոնք տուգանվել են 650 հազ. դրամ:

• Համայնքի ղեկավարներին տրվել են ցուցումներ կասեցնել առանց պետական գրանցման, առանց մրցույթի հողօգտագործումները, հայտարարել մրցույթներ և օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայամանագրեր:

2015թ. կազմվել և ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 24 համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա և 23 համայնքներում թվային հեռուստակայանների տեղադրման նպատակով 23 համայնքների հողամասերի նպատակային նշանակության փոփախման հողաշինարարական գործ, որոնք 2015թ. միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն:

0.43 հա հողամաս փոխադրվել է էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա

47.2 հա փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտներ կառուցելու և ընդերքօգտագործման նպատակով:

13.61 հա բնակավայրերի հողերի կատեգորիա, բնակելի և հասարակական կառուցապատման նպատակով:

6.1 հա հատուկ պահպանվող հողերի կատեգորիա հանգստի՝գոտիների և մարզական նշանակության օբյեկտների կառուցման:

5.3 հա հատուկ նշանակության ՀՀ ՊՆ նոր մարտական դիրքի կառուցման 0.35 հա ջրային ֆոնդի հողերի կատեգորիա՝ ջրամբարի սպասարկման

4.7 գյուղատնտեսական խոտհարք:

Կադաստրային արժեքների տարբերությունից համայնքների բյուջե է մուտքագրվել 12,684.6 հազ դրամ:

• 2015թ.-ին հողօգտագործման բնագավառում մարզպետարանն ուշադրություն է դարձրել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման գործընթացին, հողերի պահպանության աշխատանքների իրականացմանը: 01.01.2016թ.-ի դրությամբ մարզում վարձակալության տրամադրման համար նախատեսված համայնքային և պետական սեփականության 66302.9հա գյուղ. նշանակության հողերից փաստացի վարձակալության է տրամադրվել 38881.9հա կամ 58.6%, այն դեպքում, երբ ընդհանուր հանրապետական/մարզային միջինը կազմում է շուրջ 34%: Լոռու մարզում փաստացի վարձակալության հանձնված հողամասերի դիմաց գանձվել է 146.5մլն դրամ, կատարողականը կազմել է 104.1%

• 2015 թ. մարզի համայնքներում օտարվել է 161 միավոր հողամաս 37.3 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել է կադաստրային արժեքներով կամ գերազանցել է այն: 2015թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 78.8մլն դրամ: ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեք օտարված հողամասերի համար կազմում է 30.79մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 256.0%-ը:

Հողօգտագործման բնագավառում դեռևս կան չլուծված հարցեր, որոնք խոչընդոտում են հողերի արդյունավետ օգտագործմանը:

Դրանցից են՝

- հողերի կարգերի վերանայումը և վերագնահատումը
- սեփականաշնորհված մանր հողակտորների միավորումը՝ կոնսոլիդացիա:
- կադաստրային քարտեզներում տեղ գտած վրիպումների և անճշտությունների ուղղումը:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

2015թ տվյալներում մարզի առևտրի 1002 օբյեկտներ ապահովել են 50090,8 մլն դրամի ապրանքաշրջանառություն, 2014թ համապատասխանաբար 939 օբյեկտների և 22607,1 մլն.դրամ ապրանքաշրջանառության դիմաց կամ առևտրի ծավալի աճը կազմել է 221,6 % (հանրապետական 92,2%), որը հիմնականում ապահովվել է առևտրի այլ օբյեկտների հաշվին:

Մանրածախ ապրանքաշրջանառության հիմնական աղբյուրներն են խանութները (324 հատ), սպառողական ապրանքների (3 հատ) և գյուղատնտեսական արտադրանքի (2 հատ) շուկաները, կրպակները (59 հատ), և առևտրի այլ օբյեկտները (79 հատ): Մարզի մանրածախ առևտրի շրջանառության տեսակարար կշիռը կազմել է հանրապետականի 3,7 %:

(մլն.դրամ)

Տարեթիվը	2005թ	2011թ	2012թ	2013թ	2014թ	2015թ
Մանրածախ ապրանքաշրջանառություն	19585,1	24752,4	23257,6	23281,4	22607,1	50090,8

Խանութների միջոցով իրականացված մանրածախ առևտրի շրջանառությունը անցյալ տարի կազմել է 11696,5 մլն.դրամ, նախորդ տարվա 9387,1 մլն.դրամի դիմաց կամ աճը՝ 124,6%:

Միջին հաշվով մարզի մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը 2015թ. կազմել է 221,3 հազ. դրամ, 2014թ 98,5 հազ. դրամի դիմաց և միջին հանրապետական 449,9 հազ.դրամի դիմաց:

Ցածր մակարդակի վրա է մնում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողական աշխատանքների արդյունավետությունը: Անցյալ տարի նշված օբյեկտներում իրականացված 468 հսկողություն արդյունքում արձանագրվել է ընդամենը 150 հազ. դրամի խախտում այն էլ Ստեփանավան և Սպիտակ քաղաքներում:

Ծառայությունների ծավալը մարզում 2015թ. կազմել է 17720,4 մլն.դրամ, 2014թ. 15746,2 մլն.դրամի դիմաց կամ աճը՝ 112,5%, տեսակարար կշիռը հանրապետական ծավալում 1,5%: Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը կազմել է 78,3 հազ.դրամ, 2014թ. 68,6 հազ.դրամի դիմաց և միջին հանրապետական 368,4 հազ. դրամ դիմաց:

(մլն.դրամ)

Տարեթիվը	2005թ	2011թ	2012թ	2013թ	2014թ	2015թ
Մատուցված ծառայությունների ծավալը	7593,5	14932,5	14706,2	12932,8	15746,2	17720,4

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ

2015 թվականին տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը.

Վարչական հսկողությունը համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ.

Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին մեթոդական և խորհրդատվության օգնության կազմակերպումը.

Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը.

Մարզի համայնքների խոշորացման պիլոտային ծրագրի մեկնարկը:

Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի համագործակցության հիմնական միջոցներ են հանդիսացել՝

- Մարզի խորհրդի նիստերը.

- Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և համայնքների ղեկավարների մասնակցությամբ անցկացված խորհրդակցությունները.

- Համայնքների ղեկավարների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների մասնակցությամբ անցկացված օպերատիվ և տարածաշրջանային խորհրդակցությունները.

- Մարզպետի և մարզպետարանի պաշտոնատար անձանց աշխատանքային այցելությունները համայնքներ.

- Համայնքների ՏԻՄ-երի կողմից իրականացվող գործառույթների ու կայացվող որոշումների նկատմամբ վարչական վերահսկողությունը.

- Համայնքներում առկա խնդիրների լուծմանը նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ծրագրերի իրականացումը.

- Պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման զարգացմանը և համայնքների ՏԻՄ-երի կարողությունների հզորացմանն ուղղված քայլերի համակարգման իրականացումը:

2015թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 նիստեր: Նիստերի օրակարգերում ընդգրկվել և քննարկվել են 13 հարցեր:

- Մարզի համայնքների ՏԻՄ-երի գործունեության, համայնքների հիմնախնդիրների և հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ պարբերաբար մարզպետին, մարզպետի տեղակալներին և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին ներկայացվել է անհրաժեշտ տեղեկատվություն:

- Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ներկայացվել է մարզպետի 24 որոշումների և 2 կարգադրությունների նախագծեր:

- Իրականացվել է ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 5078 գրությունների քննարկման աշխատանքների համակարգումը 2014թ.-ի համեմատությամբ 357-ով պակաս:

- Ներկայացվել է պաշտոնական թղթակցության 1104 պատասխանների նախագծեր, 2014թ.-ին՝ 1112:
- Ուսումնասիրվել է քաղաքացիներից ստացված 61 դիմումներ, բողոքներ և առաջարկություններ, ներկայացվել են դրանց պատասխանների նախագծեր, 2014թ.-ին՝ 96:
- Կազմակերպվել է ՀՀ օրենսդիր և գործադիր մարմիններից ստացված իրավական ակտերի նախագծերի քննարկումներ, ստացված առաջարկությունները և դիտողությունները ներկայացվել են այդ մարմիններին:
- Վարչության աշխատակիցները մասնակցել են 39 համայնքներում Լոռու մարզպետի 19.01.2015թ. թիվ 6-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վերահսկողության աշխատանքներին և դրանց վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվել Լոռու մարզպետի տեղակալների մոտ: Մարզի համայնքներում իրականացված վարչական վերահսկողության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ զգալի առաջընթաց կա համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերով կարգավորվող կարգերի և ընթացակարգերի հաստատման ուղղությամբ:
- Պարբերաբար կազմակերպվել է մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով:
- Համակարգվել է համայնքների 2014 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններին մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցության աշխատանքները:
- Համագործակցելով մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների և համայնքապետարանների հետ հավաքագրվել և հաստատված ձևաչափերին համապատասխան ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքների տեղեկատվական բազան:
- Պարբերաբար հավաքագրվել և ըստ եռամսյակների ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև համայնքների բյուջեների հրապարակայնության և ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացման մասին տվյալները:
- Կազմակերպվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության վերահսկումը, թերի կամ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումների մասին տեղյակ է պահվել դրանք ընդունող ՏԻՄ-երին և առաջարկվել է դրանք լրամշակել, համապատասխանեցնել գործող օրենսդրությանը: Ընթացիկ տարում ստացվել են համայնքների ավագանիների 3537 որոշումներ:
- Ըստ անհրաժեշտության և մարզպետի, մարզպետի տեղակալների և աշխատակազմի ղեկավարի հանձնարարականների, վարչությունը համագործակցել է մարզպետարանի աշխատակազմերի ստորաբաժանումների հետ առկա խնդիրների համատեղ լուծման համար:
- Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ (անշարժ գույքի և կադաստրի ստորաբաժանումներ, անձնագրային բաժիններ, գինկոմիսարիատներ, վիճակագրության ծառայություն մարզային բաժին, ոստիկանության, փրկարարական մարզային վարչություններ, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և այլ ծառայություններ):

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2015 թվականին մարզպետի որոշումներով նշանակվել և անցկացվել են ՏԻՄ-երի հերթական ընտրություններ 8 համայնքներում, որից 4-ում (Ղուրսալ, Ուռուտ, Արծնի, Չկալով) համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, 3-ում համայնքի ղեկավարի (Ալավերդի, Անտառամուտ, Եղեգնուտ), Խնկոյան համայնքում ավագանու անդամների: Ուրասար և Լուսաղբյուր համայնքներում անցկացվել են համայնքի ղեկավարների արտահերթ ընտրություններ:

Աջակցություն է ցուցաբերվել 2015 թվականի մայիսի 17-ին Թումանյան, Մարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր համայնքները միավորելու տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին: 2016թ փետրվարի 14-ին անցկացվել են խոշորացված Թումանյան համայնքի ՏԻՄ-երի ընտրությունները, ընտրվել են համայնքի ղեկավար և ավագանի:

«Ն» ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացվել և համայնքապետարաններին է տրամադրվել 2014թ.ի երկրորդ և 2015թ.-ի առաջին կիսամյակներում բնակչության պետական ռեգիստրում հաշվառված և հաշվառումից հանված քաղաքացիների ցուցակները:

Կարևորելով ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումը՝ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կազմակերպման հարցում: Իրականացվել է բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում, աշխատավարձերի և սոցիալական ապահովագրության գումարների պարտքեր ունեցող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերլուծություններ և արդյունքները քննարկվել են մարզպետի տեղակալների կողմից անցկացված խորհրդակցությունների ժամանակ:

Աջակցություն է ցուցաբերվել համայնքապետարանների աշխատակազմերին գույքահարկի բազաների վարման աշխատանքները կազմակերպելու հարցում, «Ն» ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացվել և աշխատակազմերին է տրամադրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցների ցանկը: Ամիսը մեկ անգամ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունքից ստացվել, տեսակավորվել և ըստ համայնքների աշխատակազմերին է տրամադրվել հաշվառված և հաշվառումից հանված տրանսպորտային միջոցների ցուցակները:

Հաշվի առնելով վարչության 2014թ.-ի հաշվետվության ժամանակ «Ն» Լոռու մարզպետի տված հանձնարարականը 2015թ.-ին ուշադրություն է դարձվել քաղաքացիների կողմից կամովին հրաժարված հողակտորները օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքային սեփականություն գրանցելու ուղղությամբ: 2015թ.-ին 2000-ից ավելի հողակտորներ գրանցվել են անշարժ գույքի և կադաստրի ստորաբաժանումներում և դարձել են համայնքային սեփականություն:

Կարևորելով համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների որակավորման բարձրացումը «Վեկտոր Պլյուս» ՍՊԸ-ի հետ կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական շտեմարանները վարող 20 համայնքների աշխատակիցների վերապատրաստում:

2015 թվականին բոլոր այն համայնքներում որտեղ ըստ օրենքի պետք է հաստատվեր համայնքի զարգացման քառամյա ծրագրերը, դրանք կազմվել և հաստատվել են հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային կազմակերպության, «Համայնքների Ֆինանսիստների Միավորում» ՀԿ-ի կողմից համատեղ մշակված «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման» ուղեցույցի մեթոդաբանությամբ:

Իրականացվել է աշխատանքներ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում կայացած «Գյուղական համայնքների 5-րդ համաժողով»-ին մարզպետարանի և մարզի ՏԻՄ-երի ներկայացուցիչների մասնակցության ապահովման ուղղությամբ:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ իրականացվել է մարզի 33 համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստում: Վերապատրաստվել են 11 համայնքների ղեկավարներ և 31 համայնքների ավագանու՝ 85 անդամներ: Վերապատրաստումը իրականացվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ համայնքների ղեկավարներից ստացված հայտերի հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են **119** մրցույթներ, որոնցից կայացել են **45**-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են **54** քաղաքացիներ, մասնակցել են **51**-ը: Մրցույթների արդյունքում հաղթող են ճանաչվել **46** մասնակիցներ, նրանցից **44**-ը նշանակել են թափուր պաշտոններում: Կայացած մրցույթների ցածր տոկոսը պայմանավորված է հիմնականում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների ուղացումով և համայնքներում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու օրենքով սահմանված չափորոշիչներին համապատասխանող կադրերի բացակայությամբ:

Ապահովվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը՝ մարզպետարանի կայք էջում մշտապես տեղադրվել են հայտարարված մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բացի այդ պատշաճ կերպով կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն են ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները և ժամանակացույցերը: Մրցույթների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ամիսը մեկ անգամ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն և հանրային իրազեկման նպատակով դրանք տեղադրվել են մարզպետարանի կայքում:

«Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ի հետ կազմակերպվել է մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերի **118** համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների վերապատրաստումը: Նույն ՀԿ-ի հետ կազմակերպվել է նաև վարչական հսկողություն իրականացնող մարզպետարանի աշխատակազմի **8** աշխատակիցների վերապատրաստումը:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվել են մարզի **9** համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի

վարման նկատմամբ վերահսկողություն: Նախորդ տարիների համեմատ զգալիորեն նվազել են արձանագրված թերությունները:

Սահմանված ժամկետներում մարզի բոլոր համայնքներից ստացվել և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն են ներկայացվել համայնքների աշխատակազմերի 2015թ. համար գործող հաստիքացուցակների, աշխատակիցների թվաքանակների և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ տեղեկատվությունը: Տարվա ընթացքում աշխատակազմերի համայնքային ծառայության 14 պաշտոններ հանվել են, ավելացվել են 13-ը:

Մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերից մշտապես հավաքագրվել են համայնքային ծառայողների մասին անհրաժեշտ տեղեկությունները (գրանցամատյան Ձև 1, 2) և դրանք ներբեռնվել են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից վարվող էլեկտրոնային ծրագրում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Մարզի 113 համայնքներից 58-ը ապահովված են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով:

Մարզի 44 համայնքներ ունեն ինտերնետային կայքեր, սակայն այդ կայքերի շահագործման մակարդակը գոհացուցիչ չէ: Վարչության կողմից հետևողական աշխատանքներ են կատարվում համայնքների կողմից այդ կայքերում առկա նյութերի թարմացման ուղղությամբ, սակայն քիչ չեն դեպքերը երբ կայքերը անհասանելի են լինում գյուղապետարաններում սերվերների անջատած պահելու պատճառով:

ՀԿՏՀ ներդրած 56 համայնքների համակարգերը միացված են Mullbery համակարգին՝ էլեկտրոնային փաստաթղթաշարժ իրականացնելու նպատակով: Այդ համայնքներից մեծ մասը փաստաթղթաշարժը մարզպետարանի հետ չեն իրականացնում այդ համակարգում տարաբնույթ տեխնիկական անսարքությունների պատճառաբանությամբ:

Ըստ կատարված ուսումնասիրության մարզի բոլոր համայնքները ապահովված են համակարգիչներով, սակայն որոշ համայնքներում առկա է 1 համակարգիչ, որով վարվում են նաև համայնքի գույքահարկի և հողի հարկի բազաները, իսկ այդ համակարգիչներով այլ գործառնություններ կատարելը խորհուրդ չի տրվում: Բացառությամբ Անտառաշեն համայնքից մարզի բոլոր համայնքների հետ փաստաթղթային շրջանառություն իրականացվում է էլեկտրոնային փոստի միջոցով: Անտառաշենի գյուղապետարանին էլեկտրոնային փոստ չի տրամադրվել ինտերնետի բացակայության պատճառով:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական հասարակության կայացման ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովման, կառավարման գործընթացներում հասարակության տարբեր խավերի մասնակցությունը համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման և իրականացման, համայնքների ղեկավարների մասնակցային գործընթացները արդյունավետ համակարգելու կառավարչական հմտությունները զարգացնելու, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, համայնքների ղեկավարների, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով 2015թ.-ի ընթացքում իրականացվել է հետևյալ միջոցառումները՝

Մարզի տարածքում գործող ՁԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ են հեռարձակվել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների, համայնքների ՏԻՄ-երի գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերը:

Մարզի զարգացման ծրագրի իրականացման ընթացքի, ինչպես նաև՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվությունը առաքվել են բոլոր համայնքներին շրջաբերականների, ինտերնետային կայքի, մարզում գործող ՁԼՄ-ների միջոցով:

Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մասնակից են դարձել մարզխորհրդի նիստերին, մարզպետարանում հրավիրվող տարբեր քննարկումներին, հասարակական լսումներին:

Պարբերաբար իրականացվել են մարզպետարանի ինտերնետային կայքի թարմացման աշխատանքներ, հանրային իրազեկման նպատակով կայքում տեղադրվել են մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, ՏԻՄ-երի որոշումները, առանձին բաժիններում տեղադրվել են մարզային բնույթի տարբեր խնդիրներին վերաբերող տեղեկատվություն:

Ուշադրություն է դարձվել համայնքապետարաններում և համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղեկատվական ցուցատախտակների առկայությանը, համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքների բնակչությանը իրազեկելու նպատակով դրանք տեղադրվել են մարզպետարանի կամ համայնքապետարանների ինտերնետային կայքում, մեկական օրինակ փակցվել են համայնքապետարաններում առկա տեղեկատվական տախտակներին և հանրության համար առավել մատչելի վայրերում: Հարկ է նշել, որ դեռևս համայնքների զգալի մասում ցածր է ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության մակարդակը, որոշ համայնքներում տեղեկատվական ցուցատախտակներին չեն փակցվում ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները կամ դրանք ուշ են թարմացվում:

Անհրաժեշտությունից ելնելով հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպվել են բնակչության իրազեկման ծրագրեր: Ուշադրություն է դարձվել համայնքների զարգացման քառամյա ծրագրերի, համայնքային բյուջեների կազմման և բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա և կազմակերպվել են հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ: Համատեղ իրազեկման ծրագրեր են իրականացվել Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի և «Համայնքների համախմբման և աջակցման կենտրոն» ՀԿ-ի հետ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2015թ. տարեկան աշխատանքային պլանի, կրթության որակի բարձրացումը մարզում դիտվել է որպես ոլորտի զարգացման գերակա նպատակ: Այն ամբողջովին արտացոլում է 2016-2025թթ.«Կրթության զարգացման պետական ծրագրի» հիմնական պահանջները:

Համաձայն 2015թ-ի ՏԱԴ-ի, մարզում շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացմանն ուղղված աշխատանքները:

Լոռու մարզի տարածքում գործում է.

- ✓ 6 բուհ, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ
- ✓ 68 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4538 երեխաներով, 2 ոչ պետական և 21 նախակրթարանային խումբ /տեղակայված 21 դպրոցում/
- ✓ 167 դպրոց, այդ թվում՝ 85-ը՝ միջնակարգ, 64-ը՝ հիմնական, 4-ը՝ հատուկ /այդ թվում 1-ը՝ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 11 ավագ և 3 վարժարան/այդ թվում 2-ը՝ մասնագիտացված/: Վանաձոր քաղաքում գործում է մեկ արհեստագործական ուսումնարան՝ 13 խմբով (196 աշակերտ):

Ըստ իրականացվող հիմնական ծրագրերի մարզում գործում է 163 դպրոց, որից 151-ը՝ մարզային ենթակայության, 12-ը (11 ավագ և 1 հատուկ՝ խորացված ուսուցմամբ)՝ ԿԳ նախարարության ենթակայության:

Մարզային ենթակայությամբ գործող 151 դպրոցները ընդգրկում են՝

- ◆ միջնակարգ դպրոցներ - 85
- ◆ վարժարան - 1
- ◆ հիմնական դպրոցներ - 65 /որոնցից 1-ը՝ հատուկ/
- ◆ 26120 սովորողները կոմպլեկտավորված են 1607 դասարաններում

Լոռու մարզպետարանի տվյալների համաձայն՝ 2015-2016թթ. ուսումնական տարում մարզի 167 հանրակրթական դպրոցներում աշխատում է 3539 ուսուցիչ, այդ թվում 3060 կին և 479 տղամարդ: Ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությունը ուսումնական տարում կազմել է 1/8.3:

167 հանրակրթական հաստատություններում սովորում է 29,693 աշակերտ, որը 2014-2015թթ. ուսումնական տարվա համեմատ պակաս է 67 աշակերտով (աշակերտների թվաքանակի նվազման միտումը պայմանավորված է ավագ դպրոցների կարգավիճակի փոփոխության և մեկ մասնավոր դպրոցի փակման հետ): 2015-2016թթ. ուսումնական տարում առաջին դասարան են հաճախել 3055 երեխա, իսկ 2014-2015թթ. ուս. տարում՝ 3061 երեխա: Դասարանների թիվը 2015-2016թթ. կազմել է 1775 (նախորդ տարվա/1934/ համեմատ պակասել է 159-ով): Դասարանների նվազման միտումը պայմանավորված է ավագ դպրոցների կարգավիճակի փոփոխության հետ:

Հանրակրթական հաստատությունների հիմնական ցուցանիշները ըստ տարիների ներկայացված են ստորև տեղադրված գծապատկերներում

Աղյուսակ 1.

Ցուցանիշներ	2011/ 2012	2012/ 2013	2013/ 2014	2014/ 2015	2015/ 2016
Դպրոցների քանակը	158	152	151	151	151
Աշակերտների թվաքանակը՝ այդ թվում	29615	25771	24861	25226	26120
1-ին դասարան	2916	2852	2848	3017	3055
8-րդ(9-րդ) դասարան	2979	2701	2183	1132	2145

10-րդ(12-րդ) դասարան	2708	1670	1135	1190	1096
Միջին հաշվով 1 դպրոց հաճախում են	187	170	160	160	173
Դասարանների միջին քանակը մեկ դպրոցում	10,9	10.7	10.3	10.4	10.6
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	17,1	15.8	15.9	15.9	16.2
Մանկավարժների թվաքանակը, նրանցից	3598	3616	3121	3118	3126
✓ բարձրագույն կրթությամբ	3310	3354	2865	2862	2920
✓ միջին մասնագիտական կամ միջնակարգ կրթությամբ	288	262	256 */225+31/	256*	206*
Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների միջին թիվը	8,2	7.2	7.9	8.1	8.3
Մեկ դպրոցում աշխատող մանկավարժների միջին թիվը	22,7	23.7	20.6	20.6	20.7

Նախադպրոցական կրթություն

2008-2015 թվականների ռազմավարական դրույթներին համահունչ, մարզի նախադպրոցական հաստատությունների հմնական նպատակը եղել և մնում է նախադպրոցական կրթության ոլորտի ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթության մեջ ընդգրկման ավելացմանը:

2015 թվականին Լոռու մարզում գործել է 68 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային հզորությունը կազմել է 5268 երեխա-տեղ, որի միայն 86%-ն է շահագործվել:

2015թ. սեպտեմբերի 15-ի տվյալներով ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են 154 խմբով, որտեղ ընդգրկվել է 4538 երեխա: Ընդ որում, 5-6 տարեկանների թիվը 1846 է, որը կազմում է երեխաների ընդհանուր թվի 41%-ը:

Մարզում 2009 թվականից գործում են նաև նախակրթարաններ, որոնք սկզբում գործել են «Մատչելիության ապահովում» վարկային ծրագրի շրջանակներում, այնուհետև՝ սկսած 2011 թվականից, աստիճանաբար անցել են պետական ֆինանսավորման:

2012 թ-ին նախակրթարաններ գործել են մարզի 5 դպրոցներում (6 խումբ, 127 երեխա), 2013թ-ին՝ թվով 22 դպրոցում (27 խումբ, 451 երեխա) և 2014թ-ին՝ թվով 21 դպրոցում (23 խումբ, 400 երեխա), 2015թ-ին՝ 21 դպրոցում (21 խումբ, 355 երեխա):

Դեռևս պահպանվում է գյուղական համայնքներում նախադպրոցական կրթության մատչելիության ցածր մակարդակը: Գյուղական համայնքների ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների թիվը 2014թ-ին կազմել է մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 24%-ը: Եթե նախակրթարաններում ընդգրկված երեխաների թիվն ավելացնենք ՆՈՒՀ-երի 5-6 տարեկան երեխաների թվին, ապա 5-6 տարեկան երեխաների թիվը կկազմի մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 48.5%-ը:

2011-2015 թվականներին նախադպրոցական հաստատությունների քանակի և դրանցում ընդգրկված երեխաների թվի դինամիկան տրված է աղյուսակ 2-ում:


Աղյուսակ 2

Տարեթիվը	Մանկապարտեզների թիվը	Խմբերի թիվը	Հաճախող երեխաների թիվը	5-6 տարեկան երեխաների թիվը
2011	66	143	3983	1542
2012	67	158	4077	1638
2013	68	149	4346	1638
2014	69	155	4575	1828
2015	68	154	4538	1844

Միջնակարգ կրթություն

Մարզային ենթակայության 151 դպրոցում աշխատում է **3126** ուսուցիչ, որոնցից 2920-ը ունի բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (91.2%-ը), մնացած 206-ը՝ միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն (սովորում են ՎՊՀ-ի հեռակա բաժնում):

Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը մարզում կազմում է 1/8.3՝ նախորդ տարվա 1/8.1-ի դիմաց: Դասարանների միջին խտությունը 16.2 է: Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17.6 ժամ:



Գծապատկերից երևում է, որ 2015-2016 ուստարվա սեպտեմբերի տվյալներով մարզային ենթակայության հանրակրթական հաստատություններում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աշակերտների թվի աճ՝ **894**-ով:

Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում համակարգվել և վերահսկվել են մարզի դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և նրանց ընդգրկումը հանրակրթական դպրոցներ:

Արդյունքում՝ 2015թ. սեպտեմբերին մարզպետարանի ենթակայության 151 դպրոցներում 1-ին դասարան է ընդունվել 3055 երեխա: Այս ցուցանիշը 38-ով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: Ըստ դպրոցների տվյալների 2014թ. մարզի տարածքում հայտնաբերվել են

տարբեր պատճառներով պարտուսից դուրս մնացած 19 երեխաներ, որոնք ուղղորդվել են ուսումնական հաստատություններ: Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում կազմում է 99,9%:

2015թ-ին ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կառուցապատման և նորոգման նպատակով ներդրումը կազմել է 2472,2 մլն. դրամ, այդ թվում պետական բյուջեից 998,4 մլն. դրամ:

Վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Վանաձորի թիվ 18 և թիվ 6 դպրոցներում՝ ներդրումը կազմել է 598,0 մլն. դրամ:

Մարզային ենթակայության թվով 15 հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից խնայված միջոցներով իրականացվել է շուրջ 99.6 մլն. դրամի նորոգման աշխատանքներ: Տանիքի մասնակի նորոգումներ են իրականացվել Տաշիրի թիվ 2, Վանաձորի թիվ 3, Վանաձորի թիվ 20 դպրոցներում: Սանհանգույցների նորոգումներ են իրականացվել՝ Տաշիրի թիվ 2, Ալավերդու թիվ 2 և թիվ 12, Վանաձորի թիվ 20 և թիվ 30 դպրոցներում: Լոկալ ջեռուցման համակարգ է մոնտաժվել Վանաձորի թիվ 16 դպրոցում (մասնաշենք): Թվով երեք դպրոցներ իրականացրել են պատուհանների փոխարինման աշխատանքներ (մասնակի): Մյուս դպրոցները իրականացրել են մասնակի նորոգումներ:

Տնօրենների կողմից սահմանված կարգով և պարբերականությամբ տեղեկատվություն է ներկայացվել գույքագրման, շենք-շինությունների ֆիզիկական վիճակի մասին: Ստացված տեղեկատվությունը մասնագիտական վերլուծության է ենթարկվել, որը հիմք է ծառայել հիմնանորոգման, արդիականացման ծրագրերի մշակման համար:

Վերահսկվել, իրականացվել և համակարգվել են դպրոցների լիցենզավորմանն ուղղված նախապատրաստական և խորհրդատվական աշխատանքները: ՀՀ Լոռու մարզի հանրակրթական դպրոցներից կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման գործընթացը ավարտել են թվով 150 դպրոց: Վանաձորի թիվ 26 դպրոցը գործում է զինվորական տեղամասի տարածքում և դպրոցական շենքային համալիրը հանդիսանում է ՀՀ ՊՆ-ի տնօրինության կառույց:

Մարզային ենթակայության թվով 151 հանրակրթական ուսումնական հաստատություններից 107 ջեռուցվում է բնական գազով, որից 61-ը ունի լոկալ համակարգ, 46-ը գազի վառարան: Թվով 22 ուսումնական հաստատություն ջեռուցվում է վառելիքայտով, 1-ը հեղուկ վառելիքով, 17-ը էլ.էներգիայով: Թվով 4 դպրոց օգտագործում է խառն էներգակիր:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն է ներկայացվել ուսուցչի տներում (այդ թվում՝ բնակֆոնդ) բնակվող անձանց կողմից սեփականաշնորհման նպատակով ներկայացված փաստաթղթերը (մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններին ամրացված է թվով 16 կառույց /ուս. տուն, բնակֆոնդ/, որից 5-ը բնակեցված չէ):

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից ՀՀ Լոռու մարզի թվով 48 հանրակրթական ուսումնական հաստատություններում 2015թ. ապրիլի 6-ից 30-ը իրականացվել են կրթական գործունեության ուսումնասիրություններ:

ՀՀ Լոռու մարզպետի հանձնարարությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը ուսումնասիրելու նպատակով 2015թ-ի նոյեմբերին մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների կողմից կազմակերպվել են այցելություններ Վանաձորի, Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջանների թվով 16 դպրոցներ (ընդհանուր 56 ուսուցիչների մոտ): Դասալսումները կազմակերպելու համար այլ դպրոցների համապատասխան մասնագետներին ձևավորվել են հանձնախմբեր, որոնց կողմից տրված դասալսման թերթիկների համաձայն՝ ընդհանուր միջին գնահատականը բարձր է միջինից:

Հանրակրթական 12 դպրոցներում տրվել են թեմատիկ գրավոր աշխատանքներ հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն, ռուսաց լեզու, անգլերեն, քիմիա առարկաներից: Բոլոր առարկաներից միջին գնահատականը կազմել է 6.5 միավոր: Գործընթացը կրում է շարունակական բնույթ: Արդյունքում ի հայտ եկած թերությունները շտկելու համար տրվել են համապատասխան հանձնարարականներ, որոնց պարտադիր կատարումը վերահսկվում է կրթության բաժնի կողմից:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ժամկետային աշխատանքային պայմանագրերի ժամկետի լրացման, ինչպես նաև տնօրենների 65 տարին լրանալու հիմքով անց են կացվել տնօրենի թափուր տեղի համար 30 մրցույթներ:

Կազմակերպվել և անցկացվել է ուսուցչի թափուր տեղի համար 957 մրցույթ:

ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգի համաձայն 2015թ. ատեստավորման ներկայացված ուսուցիչներից պարզ ընթացակարգով ատեստավորվել են 358-ը, տարբեր պատճառներով վերապատրաստման դասընթացներին չեն մասնակցել և չեն ատեստավորվել 66 ուսուցիչներ:

Առարկայական օլիմպիադաների կազմակերպում

Փետրվարի 16-ից մարտի 9-ը կազմակերպվել և անց է կացվել օլիմպիադանների տարածքային և մարզային փուլերը, որոնց մասնակցել են համապատասխանաբար՝ մոտ 1000 և 500 աշակերտներ: Մարզային փուլի արդյունքում 132 (նախորդ տարում՝ 127) աշակերտներ իրավունք նվաճեցին մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

Վերջնական արդյունքում մարզը ունեցել է հանրապետական փուլի 29 (նախորդ տարում՝ 49) մրցանակակիր, որոնցից.

- ✓ 1-ին կարգի դիպլոմ – 1 (նախորդ տարում՝ 2)
- ✓ 2-րդ կարգի դիպլոմ –5 (նախորդ տարում՝ 12)
- ✓ 3-րդ կարգի դիպլոմ –7 (նախորդ տարում՝ 18)
- ✓ գովասանագիր - 16(նախորդ տարում՝ 17):

ՆԶՊ առարկայից օլիմպիադայի հանրապետական փուլի մասնակիցները թիմային հաշվարկով գրավել են 3-րդ տեղը, մասնակիցներից 4-ը անհատական մարզաձևերում ճանաչվել են լավագույնը:

2015թ-ին տեղեկատվական տեխնոլոգիաներ բնագավառում ՀՀ նախագահի ամենամյա մրցանակաբաշխության «Լավագույն աշակերտ» անվանակարգի հաղթողներ են ճանաչվել «Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի» աշակերտներ Արթուր Ղազարոսյանը և Պարզև Ավետիսյանը: Իդեա՝ դպրոցն ընդգրկվել է հանրապետության 5 լավագույն դպրոցների շարքում, որտեղ առաջին անգամ իրականացվելու է ՏՀՏ (տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ) պիլոտային ծրագիրը՝ Սինոպսիս Արմենիա, Viva Cell ընկերությունների նախաձեռնությամբ և օժանդակությամբ:

Շախմատը Լոռու մարզի դպրոցներում

Շախմատը որպես պարտադիր առարկա հանրակրթական դպրոցներում մտել է 2011թվականին: Այն շարունակում է մեծ հետաքրքրություն առաջացնել սովորողների մոտ:

2014-15 ուսումնական տարում շախմատ առարկան ուսուցանել է 10.144 աշակերտ: 2015-2016 ուստարում այդ թիվն աճել է և կազմում է 10.260:

2015թ. հունվարից մինչև սեպտեմբեր ամիսը անց է կացվել Լոռու մարզի դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի երեք փուլերը, որին մասնակցել են մոտ 10000/տաս հազար/ աշակերտներ: Դավիթ Շահինյանը 3-րդ անգամ լրացրեց միջազգային վարպետի նորման և արժանացավ միջազգային վարպետի կոչմանը:

Հափուկ (ներառական) կրթություն

Հատուկ կրթություն մարզում իրականացվում է Վանաձորի թիվ 1 հատուկ (օժանդակ դպրոցում՝ 78 երեխա) և Սպիտակի հատուկ դպրոցում՝ 70 երեխա:

Լոռու մարզում ներառական կրթությունը 2015թ. սեպտեմբերից իրականացնում են 12 դպրոցներ՝ Վանաձորի թիվ 6 (21 աշակերտ), Վանաձորի թիվ 16 դպրոց՝ (56 աշակերտ), Վանաձորի թիվ 18 դպրոց՝ (34 աշակերտ), Վանաձորի թիվ 25 դպրոց՝ (25 աշակերտ), Վանաձորի թիվ 27 դպրոց՝ (30 աշակերտ), Ստեփանավանի թիվ 1 դպրոց (31 աշակերտ), Ստեփանավանի թիվ 2 դպրոց՝ (33 աշակերտ), Ստեփանավանի թիվ 6 դպրոց (51 աշակերտ), Ալավերդու թիվ 12 դպրոց՝ (40 աշակերտ) Ախթալայի թիվ 1 դպրոց (7 աշակերտ), Կուրթանի դպրոց՝ (8 աշակերտ) և Սպիտակի թիվ 8 դպրոց՝ (24 աշակերտ):

2016 թ. հունվարից ներառական կրթություն կիրականացնեն ևս 4 դպրոցներ՝ Վանաձորի թիվ 28 դպրոց՝ (15 աշակերտ), Վանաձորի թիվ 30 դպրոց՝ (14 աշակերտ), Ստեփանավանի թիվ 3 դպրոց (20 երեխա), Ալավերդու թիվ 2 դպրոց՝ (19 աշակերտ):

Այսպիսով՝ 2015-2016 ուսումնական տարում ներառական կրթություն կիրականացվի մարզի 16 հանրակրթական դպրոցներում, որտեղ ընդհանուր հաշվով, կընդգրկվեն 428 աշակերտներ:

Ոչ պետական միջոցներով կրթական օբյեկտների եւ նախադպրոցական հաստատությունների մասով իրականացրած ներդրումներ

Պարենի Համաշխարհային Ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 138 դպրոցներում իրականացվում է «Դպրոցական սնունդ» ծրագիրը, որի շրջանակներում տարրական դասարանների եւ նախակրթարանների 10777 երեխաների համար 1-անգամյա սնունդ է կազմակերպվում:

Ծրագրում ընդգրկված են նաև դպրոցներում գործող 21 նախակրթարանները:

Մարզի սոցիալապես անապահով, ծնողազուրկ 7-13 տարեկան 415 աշակերտներ իրենց ամառային հանգիստը 3 հերթափոխով անց են կացրել Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբարում: Պատշաճ մակարդակով կազմակերպվել է երեխաների մեկնումը եւ վերադարձը:

Մարզի 33 ուսման գերազանց առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքների աշակերտներին և սովորողներին նշանակվել է «Լոռու դպրոց» հիմնադրամի անվանական կրթաթոշակ 3000-10000 դրամիչափով: 16 շնորհալի երեխաների «Լոռու մշակույթ և սպորտ» հիմնադրամի կողմից նշանակվել է 10000-20000 դրամի չափով կրթաթոշակ:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում «Լոռու դպրոց» հիմնադրամի կողմից մարզի ավելի քան 1200 անապահով ընտանիքների դպրոցական երեխաների հատկացվել են 11 անուն գրենական պիտույքներ, գրքերի վարձավճարներ և զանազան կարգի այլ օգնություններ:

Դպրոցներում և իրենց ենթակայությամբ գործող արհեստագործական ուսումնարաններում ինտերնետ կապով ապահովվածության ուղղությամբ ձեռնարկած միջոցները

- ❖ Հետևողական աշխատանքի շնորհիվ մարզի հանրակրթություն իրականացնող բոլոր դպրոցներն ունեն համակարգիչներ, համակարգչային դասարաններ՝ ապահովված համացանցով, ինտերնետային կապ, կամ վերջինիս բացակայության դեպքում՝ էլեկտրոնային հասցեներ:

- ❖ Տեղեկատվություն է ներկայացվել ԿԳ նախարարություն՝ մարզային ենթակայության 91 դպրոցներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի աջակցությամբ կայքէջ ստեղծելու համար:
- ❖ Իրականացվել են «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» 2015-2016 ուսումնական տարվա վիճակագրական հաշվետվությունների ձևերի բաշխումը և հավաքագրումը:

2015 թվականի ընթացքում մարզի դպրոցների աշխատավարձերի վճարումները յուրաքանչյուր ամսվա համար կատարվել է ժամանակին՝ մինչև հաջորդ ամսվա 5-6-ը:

Մարզպետարանի եւ մարզային ենթակայության կազմակերպությունների կրթության բնագավառում իրականացրած գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության մասին հաշվետվությունը տեղակայվում է ՀՀ Լոռու մարզպետարանի կայքում՝ **lori.mtaes.am**:

Կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության մասին տեղեկատվություն է հրապարակվում «Լոռու մարզ», «Վանաձորյան խճանկար» թերթերում, ինչպես նաև «Մարզպետարանի ժամ» հեռուստահաղորդման ժամանակ:

Մարզպետարանում գործում է «Թեժ գիծ»՝ 2-32-99 և 2-35-37 հեռախոսահամարներով:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Լոռու մարզի տարածքում գործում է 18 մարզադպրոց՝ Վանաձորում, Ալավերդում, Սպիտակում, Տաշիրում, Ստեփանավանում, Գուգարքում, Զրաշենում: Վանաձորում են գործում նաև «Գագիկ Ղազարյան» մարզական ակումբը, «Աշխատանքային ռեզերվներ» ՄՀԿ-ն, «Հայաստան» ՄՀԿ-ն, «Վազգեն Բադալյան» և «Լոկոմոտիվ» մարզական միությունները:

Վերջին 5 տարիների ընթացքում կառուցվել է Ստեփանավանի մարզադպրոցի նոր շենքը, վերակառուցվել են Վանաձորի ՕԿՄՄԴ և ձմեռային ձևերի մարզադպրոցները, «Հայաստան» ՄՀԿ-ում (մասնակիորեն փոխվել է դահլիճի հատակը, կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ, շրջակա տարածքի ասֆալտապատման աշխատանքներ - շուրջ 5 մլն դրամ):

Մարզի մարզիկները վերջին տարիներին հասել են լուրջ հաջողությունների.

- Եվրոպայի սամբոյի մեծահասակների չեմպիոն,
- Եվրոպայի սամբոյի երիտասարդների և պատանիների չեմպիոն և մրցանակակիրներ,
- Համահայկական 6-րդ մարզական խաղեր - 18 մեդալ(6 ոսկե, 8 արծաթե և 4 բրոնզե),
- Մի շարք միջազգային խոշոր ստուգատեսներում հաղթողներ և մրցանակակիրներ,
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հաշմանդամ ունեցող ընտանիքը գրավել է առաջին տեղ,
- ՀՀ անկախության 24-րդ տարելիցին նվիրված ամենամյա դպրոցականների մարզական խաղերի - 4 առաջին տեղ,
- «Բազե-2015» երիտասարդական հավաք - երրորդ տարին անընդմեջ հավաքի լավագույն ջոկատ:

2015 թվականին սպորտի և երիտասարդության ոլորտներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- 2015թ. փետրվարի 8-ին Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել «*Լոռվա ձմեռ-2015*» 45-րդ ավանդական մարզատոնահանդեսը:
- 2015թ.-ի մայիսին Վանաձորում անց է կացվել «*ՀՀ Լոռու մարզպետի գավաթ*» մրցաշարը՝ ֆուտզալ մարզաձևից, որին մասնակցեցին տարածաշրջաններում հաղթած թիմերը,ինչպես նաև Վանաձորից 12 թիմ (ընդհանուր 16 թիմ) :
- Հուլիս ամսին կայացել են ՀՀ անկախության 24-րդ տարելիցին նվիրված ամենամյա դպրոցականների մարզական խաղերի տարածաշրջանային, մարզային և հանրապետական եզրափակիչ փուլի մրցումները, որին մասնակցեցին Լոռու մարզի հավաքական թիմերը:
- Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի և Վանաձորի քաղաքապետարանի ենթակայության տակ գործող շախմատի դպրոցի ջանքերով կայացան դպրոցականների շախմատի օլիմպիադայի ներդպրոցական, համայնքային և մարզային փուլերը:
- Մարզի հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանի աշակերտների շրջանում կազմակերպվել է ՀՀ «Ազգային Ժողովի Գավաթ»-ի խաղարկության մրցումների ներդպրոցական, տարածաշրջանային, մարզային փուլերը:
- 2015թ. Օգոստոսի 2-13-ը ՀՀ մայրաքաղաք Երևանում կայացած համահայկական 6-րդ մարզական խաղերին մասնակցել են նաև Լոռու մարզի քաղաքային համայնքները: Գերազանց արդյունքներ են գրանցել մարզկենտրոն Վանաձորը ներկայացնող մարզիկները՝ ընդհանուր հաշվարկում վաստակելով 18 մեդալ (6 ոսկե, 8 արծաթե և 4բրոնզե): Վանաձորը մասնակից 175 քաղաքների մեջ գրավել է պատվավոր 3 տեղը:
- 2015թ. Օգոստոսի 17-23-ը Ծաղկաձորում անց է կացվել «*Բազե-2015*» երիտասարդական հավաքը, որին մասնակցել է նաև Լոռու մարզը ներկայացնող ջոկատը: Լոռեցի երիտասարդները փայլուն մասնակցություն են ունեցել հավաքի ընթացքում կազմակերպված մրցումներին՝ երրորդ տարին անընդմեջ ճանաչվելով հավաքի լավագույն ջոկատ:
- Սեպտեմբերին մարզի թվով 7 քաղաքներում և Գուգարք գյուղում կազմակերպվել են մարզական փառատոներ, որոնց ընդհանուր թվով մասնակցել են շուրջ 7.500 մարդ:
- Կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն նախադպրոցական հիմնարկ» մրցույթի տարածաշրջանային և մարզային փուլերը:
- Սեպտեմբեր ամսին կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «*Լավագույն հաշմանդամ մարզիկ*» մրցույթի Լոռու մարզային փուլը: Հանրապետական մրցումներում Լոռու մարզի թիմը ընդհանուր հաշվարկով գրավեց 2-րդ պատվավոր տեղը:
- Կազմակերպվել են ՀՀ Նախագահի մրցանակի համար «*Լավագույն մարզական ընտանիք*» մրցույթի 2015թ.տարածաշրջանային, մարզային փուլերը:
- Կազմակերպվել է ազգային մարզական ձևերի ամենամյա «*Լոռվա ժողովրդական խաղեր*» մարզային փառատոնը «Հորիզոն» ԲՀԿ-ի հետ համատեղ:
- Հոկտեմբերին կազմակերպվել են ավագ տարիքի դպրոցականների ամենամյա ռազմա-մարզական խաղերի դպրոցական, տարածքային և մարզային փուլերը: Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի թիմը հանրապետական եզրափակիչ փուլում գրավել է 1-ին տեղ՝ հռչակվելով հանրապետության չեմպիոն:

- Հոկտեմբեր ամսին ամփոփվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական համայնք» և «Լավագույն մարզական բակ» հանրապետական մրցույթների համար ներկայացված հայտերը: «Լավագույն մարզական համայնք» անվանակարգում երկրորդ տեղ է գրավել Լոռու մարզը ներկայացրած Ալավերդի համայնքը, «Լավագույն մարզական բակ» անվանակարգում երկրորդ տեղ է գրավել Ախթալա համայնքի «Բերուտ» թաղամասի մարզական բակը:
- 2015թ. ընթացքում ՀՀ Լոռու մարզպետին կից գործող երիտասարդական խորհուրդը քննարկել է մարզի երիտասարդությանը հուզող բազմաթիվ խնդիրներ և ծրագրեր, ուսումնասիրվել են բազմաթիվ առաջարկություններ:
- Մարզում իրականացվող գրեթե բոլոր՝ մշակութային, սպորտային և տոնական մեծարման միջոցառումների, սոցիալական տարբեր կարգի օգնությունների, ուսման և դասագրքերի վարձավճարների, երեխաների ամառային հանգստի, դպրոցականների առարկայական օլիմպիադաների 4 փուլերի, դպրոցական շենք-շինությունների մասնակի վերանորոգման, մուրացիկ երեխաներին դպրոց վերադարձնելու, գերազանց առաջադիմությամբ սովորողներին անվանական կրթաթոշակի նշանակելու և այլ գործառույթների կազմակերպումն ու անցկացումը «Լոռու դպրոց» և «Լոռու մշակույթ, սպորտ, երիտասարդություն» հիմնադրամների հովանավորությամբ:

Կրթության և մշակույթի ոլորտներում որպես հիմնախնդիրներ մնում են՝

- ❖ Դպրոցների խորհուրդների թույլ աշխատանքը:
- ❖ Գյուղական դպրոցների մասնագետ ուսուցիչներով թեր ապահովվածությունը:
- ❖ Մարզի 52 դպրոց (5814 աշակերտ) չունի մարզադահլիճ, այդ թվում՝ քաղաքային 12 դպրոց՝ 2744 աշակերտով, գյուղական 40 դպրոց՝ 3070 աշակերտով: Մարզադահլիճների կառուցման համար անհրաժեշտ գումարը կազմում է՝ միջինը 100մլն. դրամ:
- ❖ Սպորտի ոլորտում հիմնախնդիր է մնում մարզադպրոցներում մարզագույքի պակասը:
- ❖ Մշակութային կառույցների շենքային պայմանների ոչ բավարար վիճակը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2015թ. ընթացքում Լոռու մարզում գործել են հետևյալ բուժհաստատությունները

Հ/Հ	Բուժհաստատության տեսակը	Քանակը	Մահճակալների թիվը
1.	հիվանդանոց	1	45
2.	բժշկական կենտրոններ	5	400
3.	դիսպանսեր	1	35
4.	առողջության կենտրոն	1	10
5.	պոլիկլինիկաներ	5	
6.	Լոռու մարզային արյան փոխներարկման կայան	1	
7.	առողջության առաջնային պահպանման կենտրոններ	22 (որից համայնքային ենթակայության՝ 5)	
8.	բուժական կաբարձական կետեր	91	Ընդամենը՝ 490

Մարզի առողջապահական ընկերություններում աշխատում են՝ բժիշկներ - 432, միջին բուժաշխատողներ- 1013, այլ- 552 ընդամենը՝ 1997 մարդ:

2015թ. ընթացքում առողջապահության համակարգում նախատեսված պետական պատվերի կատարողական աշխատանքների բազային ծավալը ներկայացվում է՝

Պետական պատվերի բազային ծավալ /հազար դրամ/		Կատարողական /հազար դրամ/	Ֆինանսավորում /հազար դրամ/
Հիվանդանոցային	1 562 382.1	1 552 718.2	1 552 718.2
Արտահիվանդանոցային	2 187 595.5	2 165 098.0	2 165 098.0
Ընդամենը	3 749 977.6	3 717 816.2	3 717 816.2

Ընդունված կատարողականը ֆինանսավորվել է 100 %-ով:

	Վճարովի ծառայության մուտքերը կազմել են՝ հազ.դրամ	որից համավճարը՝ հազ.դրամ
2014թ.	543 309.7	35 602.0
2015թ.	570 895.3	31 625.1

Առողջապահության համակարգում ֆինանսավորումը շարունակվել է իրականացվել սահմանափակված բյուջեի ֆինանսավորման սկզբունքով:

Մարզպետարանի ենթակայության բաժնետիրական ընկերությունների ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական պատվերի ֆինանսավորումն ստանալուց եւ վճարումները կատարելուց հետո յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը չեն գերազանցում տվյալ եռամսյակի համար մարզպետարանի կողմից հաստատված նախահաշվային գումարի մեկ երրորդը:

2015թ.արդյունքներով աշխատավարձի գծով պարտքեր առողջապահական ընկերությունները չունեն:

Ընթացքի մեջ են՝

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման շարունակական աշխատանքները, որի ընդհանուր արժեքը կազմում է 4.6մլրդ դրամ, որից ծննդատան

մասնաշենքի արժեքն է 1.1մլրդ. դրամ, մյուս մասնաշենքի արժեքը՝ 3.5 մլրդ: 2015թ. կատարվել են ավելի քան 950 մլն. դրամի աշխատանքներ:

«Ավալերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվում է տուբերկուլոզի բաժանմունքի վերանորոգում «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից: Ծրագրի արժեքը կազմում է 7,891.3հազ.դրամ:

Ավարտվել են՝

- «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցումը, այդ նպատակով Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից տրամադրվել է՝ շուրջ 59.0մլն. դրամ:
- «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում սեփական միջոցներով կատարվել է մասնակի վերանորոգում մոտ 7 800.0 հազ. դրամի չափով:
- «Դիակոնիա» բարեգործական կազմակերպության կողմից «Դսեղի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին է տրամադրվել ավելի քան 3,000.0 հազ. դրամ՝ հեռաբժշկության ներդրման նպատակով ձեռք են բերվել պլանշետներ և համակարգչային տեխնիկա:
- Վանաձորի «Գուգարք» ԿՊ ՊՓԲԸ-ն ձեռք է բերել բժշկական սարքավորումներ և գույք՝ 12,170.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով, ՀՀ ԱՆ ԾԻԳ ՊՀ-ի կողմից տրամադրվել են բժշկական պարագաներ և գրասենյակային գույք՝ 1,420.6հազ. դրամ արժեքով:
- «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել նոր տնոգրաֆիայի ապարատ և այլ սարքավորումներ՝ 6,570.0 հազ. դրամ արժողությամբ, Կատարվել է ախտահանման 2 կաբինետների վերանորոգում՝ 1,662.7 հազ. դրամ արժեքով: Ընդամենը 8,232.7 հազ. դրամ:
- «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն իր միջոցներով ձեռք է բերել բժշկական սարքավորումներ՝ 1,894.0հազ. դրամ արժեքով, բարեկարգել է մուտքի աստիճանավանդակը, կառուցել է թեքահարթակ՝ 230.0հազ. դրամ արժեքով: Ընդամենը 2124.0հազ. դրամ:
- «Ավալերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հիմնանորոգվելուց հետո սեփական միջոցների հաշվին լիզինգային ճանապարհով և շրջանակային համաձայնագրերով ձեռք է բերվել 22826,1 հազ. դրամի բժշկական սարքավորումներ: Ոչ բժշկական նշանակության ներդրումների չափը կազմել է՝ 3,522.5 հազ. դրամ: Ընդամենը՝ 26,348.6 հազ. դրամ:
- «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ձեռք է բերել բժշկական սարքավորումներ/ իմունոֆերմենտային վերլուծիչի հավաքածու, սթրես տեստային համակարգ, հոլտեռ մոնիտոր/՝ 11,488.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով:
- «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցների հաշվին ձեռք է բերել շտապօգնության մեքենա և բժշկական սարքավորում՝ 7,150.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով, կատարվել է պոլիկլինիկական մասնաշենքի մասնակի նորոգում՝ 200.0 դրամ արժեքով: Սեփական միջոցներով կոսմետիկ վերանորոգվել է Ուրասարի ԲՄԿ-ն՝ 120.0 հազ.դրամ արժեքով, կատարվել է շտապօգնության ավտոմեքենայի կապիտալ վերանորոգում՝ 360.0 հազ. դրամ արժեքով: Ընդամենը 7.830.0 հազ. դրամ:
- «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցների հաշվին ձեռք է բերել սարքավորումներ՝ 2,050.0հազ. դրամ ընդհանուր արժեքով, մասնակի վերանորոգվել է ընկերության վիրահատական սրահը՝ 222.5 հազ. դրամ, և բարերարների հաշվին՝ մոտ 120.0 հազ. դրամ: Ընդամենը 2,392.5 հազ. դրամ:
- ՀՀ Լոռու մարզի Մեծավանի գյուղապետարանի կողմից հատկացված 160.0 հազ.դրամով ձեռք է բերվել վիրաբուժական արտածծիչ:
- «Դիակոնիա» բարեգործական կազմակերպության կողմից «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկական պոլիկլինիկայի մասնաշենքում նոր պատուհաններ են տեղադրվել, անց է կացվել լոկալ ջեռուցման համակարգ՝ 4,204.0 հազ.դրամ արժողությամբ:
- «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով կատարել է կաթսայատան վերանորոգում, «Նարեկ» մասնաշենքի տանիքի մասնակի վերանորոգում, լվացքատան վերանորոգում, ծննդատան ջեռուցման համակարգի վերանորոգում,

հիմնական մասնաշենքի ջրագծերի վերանոնոգում՝ 12,600.0հազ. դրամ ընդհանուր արժեքով: Կենտրոնը ձեռք է բերել բժշկական սարքավորումներ և համակարգչային տեխնիկա՝ 20,483.0հազ. դրամ ընդհանուր արժողությամբ: Ընդամենը 33,083.0հազ. դրամ:

- «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք է բերվել ԷՍԳ-ի նոր ապարատ 240,0 հազ.դրամ արժողությամբ, կատարվել է 192.0 հազ դրամի կոյուղու մասնակի վերանորոգում: Ընդամենը 432.0 հազ. դրամ:
- «Լոռու մարզային հոգեոնյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում սեփական միջոցներով կատարվել են մասնակի վերանորոգման և տեխնիկական հագեցման աշխատանքները՝ մոտ 1125.0 հազ.դրամ ընդհանուր արժողությամբ, ինչպես նաև 240.0 հազ դրամ արժեքով հակահրդեհային պարագաներ, համակարգչային հավաքածու 475.0 հազ. դրամ արժեքով: Ընդամենը 1,840.0 հազ. դրամ:
- «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում փոխարինվել է շենքի դրսի դուռը, Կառուցվել է թեքահարթակ և այլ շինարարական աշխատանքներ՝ 160.0 հազ. դրամ:
- «Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը իր միջոցներով ձեռք է բերել ԷՍԳ- ի սարք՝ 250.0 հազ. դրամ արժեքով:
- «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը իր միջոցներով կատարել է մասնակի վերանորոգում՝ 301.0 հազ. դրամ, գույք՝ 200.0 հազ դրամ արժեքով: «Թեղուտ» ՓԲԸ-ի միջոցներով վերանորոգվել է ամբուլատորիայի ջրամատակարարման համակարգը և կոյուղին:
- Մարզին հատկացված 5-րդ հրատապ ծրագրի շրջանակներում վերանորոգվել է «Արևածագի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կազմում գործող Կարմիր Աղեգու ԲՄԿ-ի սենյակը:

Այսպիսով, առողջապահական ընկերությունների սեփական միջոցներով կատարվել է **97,642.0** հազ դրամ ներդրում:

- «Լոռու առողջապահություն» հիմնադրամը, որը ստեղծված է մարզի առողջապահության բնագավառին տարաբնույթ աջակցություն ցուցաբերելու նպատակով, 2015թ. մարզի վեց առողջապահական ընկերությունների տրամադրել է 11,200.0 հազ. դրամ՝ գույք և բժշկական սարքավորումներ ձեռք բերելու համար, հիվանդ կամ կարիքավոր բուժաշխատողների և քաղաքացիների աջակցման նպատակով 4,010.0 հազ. դրամ, և 632.0 հազ.դրամ՝ բուժաշխատողի օրվան նվիրված և այլ միջոցառումների կազմակերպման նպատակով: ՀՀ Լոռու մարզի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի միջև համագործակցության շրջանակներում Մարտակերտի հիվանդանոցին նվիրաբերվել է համակարգչային տեխնիկա՝ 376.0հազ. դրամ արժեքով, «Հայաստան Համահայկական» հիմնադրամին՝ 100.0հազ. դրամ: Ընդամենը հիմնադրամի կողմից կատարվել է ներդրում՝ **16,318.0հազ** դրամ:

Այսպիսով, առողջապահական ընկերությունների սեփական միջոցներով և «Լոռու առողջապահություն» հիմնադրամի կողմից ներդրումները կազմել են մոտ 113,960.0 հազ. դրամ:

Առողջապահական ԾԻԳ ՊՀ-ի կողմից առաջնային օղակի բոլոր առողջապահական ընկերություններին տրամադրվել են համակարգչային հավաքածուներ՝ յուրաքանչյուրը 373.3 հազ. դրամ արժողությամբ և բժշկական պարագաներ՝ 12992.9հազ. դրամ ընդհանուր արժեքով:


Մի շարք առողջապահական ընկերություններում՝ «Ալավերդու ԲԿ», «Ստեփանավանի ԲԿ», «Տաշիրի ԲԿ», «Կուրթանի ԱԱՊԿ», «Աքրու ԱԱՊԿ», «Օձունի բժշկական ամբուլատորիա», «Արևածագի ԱԱՊԿ», «Գարգառի ԱԱՊԿ», «Գյուլագարակի ԱԱՊԿ», «Վարդաբլուրի ԲԱ», «Ագարակի ԱԱՊԿ», «Ախթալայի ԱԿ», «Ճոճկանի ԲԱ», «Վորլը Վիժըն Ինթերնեյշնլը» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից ստեղծված ծնողական կրթության կենտրոնները ամբողջությամբ կահավորվել են: Ընդհանուր վերանորոգումների արժեքը կազմել է 4794.3 հազ. դրամ, կահավորման և համակարգչային տեխնիկայով հագեցման արժեքը՝ 10359.8 հազ. դրամ: Ընդամենը 15154.1 հազ. դրամ:

Այսպիսով՝ միջազգային կազմակերպությունների, բարերարների կողմից կատարվել է շուրջ 31249.4 հազ. դրամի ներդրում:

2015թ մարզի առողջապահական ընկերություններում սահմանված կարգով ապահովվել է բնակչության անվճար բուժօգնությունը, իրագործվել են պետական առողջապահական ծրագրեր: Մարզպետի կողմից տրամադրվել է շուրջ 100 միջնորդագրեր՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Մարզից Երևան քաղաքի առողջապահական ընկերություններ են ուղեգրվել 29 հիվանդներ, որոնք հիմնականում այն հիվանդներն են, որոնց բուժօգնությունը մարզում կազմակերպել հնարավոր չէր /տվյալ ծառայության բացակայություն կամ մասնագիտացված բուժօգնության կազմակերպում/: Ոլորտում բնակչության առողջական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հիվանդացությունը և մահացությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում դեռևս բարձր են հիվանդացության մակարդակները: Վերջին տարիներին տարբեր հիվանդություններով հիվանդացությունը ենթարկվել է էական ներկառուցվածքային և քանակական փոփոխությունների:

2011-2015թթ. տվյալները, որը բերվում են ստորև, ցույց են տալիս, որ մարզում առկա է շաքարային դիաբետով, հոգեկան հիվանդություններով, նորագոյացություններով, պարբերական հիվանդություններով հիվանդացության աճ:

	2011	2012	2013	2014	2015
Շաքարային դիաբետ	3581	3902	4013	4312	4748
Նորագոյացություններ	2814	3004	3136	3289	3497
Հոգեկան հիվանդություններ	4126	4792 /այդ թվում 592-ը նարկոլոգ. կար./	4500, այդ թվում 596-ը նարկոլոգ. կար./	5000, այդ թվում 655-ը նարկոլոգ. կար./	5062, այդ թվում 588-ը նարկոլոգ. կար./
Սեռավարակներ	978	1312	1278	1197	1312
Պարբերական հիվանդություններ	394	420	442	491	502
Տուբերկուլոզ	553	615	402	380	368



- MSF /բժիշկներ առանց սահմանի/ կազմակերպությունը 5-6 տարի է զբաղվում է Լոռու մարզի դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների բուժմամբ: Արդյունքում արձանագրվել է տուբերկուլոզով դիսպանսեր հիվանդների նվազեցում:
- Լոռու մարզում հաշվառված և ծրագրային հեմոդիալիզական բուժում են ստանում 60 հիվանդներ:
- ՀՀ առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնից մարզի համար ձեռք է բերվում մարդասիրական օգնության ճանապարհով մարզին հատկացված և կենտրոնացված գնումների միջոցով ձեռք բերված դեղորայքը:
- Լոռու մարզում գործող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ենթակայության՝ 5 փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմավորվել են համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ ՀՈԱԿ-ների, իսկ մարզային ենթակայության 16 պետական փակ բաժնետիրական ընկերություններ՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ ՊՈԱԿ-ների:
- AAHPO (Armenian American Health Professionals Organization) կազմակերպությունը՝ համագործակցելով Հայաստանի Մանուկների Հիմնադրամի(COAF) կազմակերպությունը կազմակերպել է 12 հոգուց բաղկացած ամերիկահայ բժիշկների այց «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ՝ Դսեղի և հարակից համայնքների ազգաբնակչությանը անվճար բժշկախորհրդատվական ընդունելություն կազմակերպելու նպատակով:
- Շարունակական բնույթ է կրել բժշկական անձնակազմի վերապատրաստման գործընթացը: Մարզից Մոսկվայում վերապատրաստում է անցել 2 բժիշկ, Կիևում՝ 1 բժիշկ: «Վորդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ առողջապահության 3 կազմակերպիչներ փորձի փոխանակման նպատակով այցելել են Գերմանիայի Դաշնություն:
- Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի և «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ-ի կողմից ՄԱԿ-ի Միացյալ Մանկական Հիմնադրամի ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ մանկաբույժների և ընտանեկան բժիշկների համար, որին Լոռու մարզից մասնակցել են 5 բժիշկներ, որոնք վերապատրաստվելուց հետո իրենք են անցկացրել վերապատրաստման դասընթացներ՝ «Զարգացման խանգարումներով երեխաների վաղ հայտնաբերման և վաղ միջամտության կազմակերպում» թեմայով, որին մարզից մասնակցել են Վանաձորի և Գուգարքի տարածաշրջանի 27 բժիշկները և 62 բուժքույրերը:
- «Վորդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ Թումանյանի և Ստեփանավանի տարածաշրջանների համայնքների բուժքույրերի համար կազմակերպվել են դասընթացներ՝ «Նորածին և վաղ տարիքի երեխաների բժշկական հսկողություն և սնուցում» թեմայով:
- «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային համաձայնագրով ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում և մարզի առողջապահական ընկերություններում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին 2015թ մասնակցել են մոտ 10 բժիշկներ և 4 բուժքույրեր:
- Տարաբնույթ մասնագիտական վերապատրաստումներին մարզից մասնակցել են ավելի քան 32 բժիշկներ և 30 բուժքույրեր:
- 2015թ. հոկտեմբերի 8, 9-ին «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «Նարեկ» մասնաշենքում ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքից ժամանած բժիշկները կատարել են բժշկախորհրդատվական ընդունելություն, որի ընթացքում հիվանդներին տրամադրվել են նաև անվճար դեղորայք և բժշկական պարագաներ:
- Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) և ԱՄՆ ՄԶԳ համաֆինանսավորմամբ իրականացվող «Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների

մատչելիության ապահովում» ծրագրի շրջանակներում մարզի ծննդոգնություն և վերարտադրողական առողջության գործառույթ իրականացնող առողջապահական ընկերություններին տրամադրվել են համակարգիչներ՝ լոգիստիկ կառավարման տեղեկատվական համակարգում ընդգրկվելու նպատակով: Ծրագրի շրջանակներում կազմակերպվելու են լոգիստիկ կառավարման տեղեկատվական համակարգի և էլեկտրոնային պահեստի կառավարման ուսուցման դասընթացներ:

- Զորակոչային և նախագորակոչային աշխատանքները մարզում ապահովում են 5 տարածաշրջանային և 1 ստացիոնար /վիրաբուժական եւ թերապևտիկ պրոֆի/ բժշկական հանձնաժողովները:
- Համաձայն ՀՀ ԱՆ28.03.2014թ. թիվ 617-Ա և ՀՀ ՊՆ 01.04.2014թ. թիվ 5-Ա համատեղ հրամանի և ՀՀ ԱՆ 13.05.2014թ. թիվ 1014-Ա հրամանի Լոռու մարզում նախագորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացը իրականացվել է ըստ կցագրված բուժհաստատությունների ցանկի՝ Վանաձոր քաղաքի և Գուգարքի տարածաշրջանի համար՝ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում, տարածաշրջանների համար՝ համապատասխան տարածաշրջանային բժշկական կենտրոններում:

Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի որոշմամբ 2015 թվականի հունվարի 13-ից «Լոռու մարզային հոգեյնյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում երեք անձինք շարունակում են իրականացնել այլընտրանքային ծառայություն:


2011թ. մարզում մանկական մահացությունը կազմել է 9.6 պրոմիլե, պերինատալ մահացությունը՝ 13.1 պրոմիլե:

2012թ. մարզում մանկական մահացությունը կազմել է 5.6 պրոմիլե, պերինատալ մահացությունը՝ 14.4 պրոմիլե:

2013թ. մարզում մանկական մահացությունը կազմել է 6.0 պրոմիլե, պերինատալ մահացությունը՝ 11.3 պրոմիլե:

2014թ. մարզում մանկական մահացությունը կազմել է 3.8 պրոմիլե, պերինատալ մահացությունը՝ 9.3 պրոմիլե:


2015թ. մարզում մանկական մահացությունը կազմել է 8.2 պրոմիլե, պերինատալ մահացությունը՝ 13.3 պրոմիլե:



2015թ. մարզում արձանագրվել է երեխայի 25 մեռելածին դեպք, 0-7 օրեկան երեխայի 14 մահ, 0-1 տարեկան երեխայի 3 ստացիոնար և 7 տնային մահ, 1-5 տարեկան երեխայի 0 ստացիոնար և 1 տնային մահ/:

2010-2015թթ. Լոռու մարզում ծնելիության, մահացության և բնական աճի ցուցանիշներ

Լոռու մարզ		Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
2011	բացարձակ թիվ	3123	2935	0.7 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.1	10.4	
2012	բացարձակ թիվ	3049	2789	0.9 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	10.6	9.7	
2013	բացարձակ թիվ	2919	2777	0.6 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.5	11.9	
2014	բացարձակ թիվ	3211	2644	2.2 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.1	9.9	
2015	բացարձակ թիվ	2931	2777	0.6 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.1	10.5	



«Առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունը իրականացրել է նաև հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2015թ. «Զերմուկ», «Արզնի», «Գանձաղբյուր», «ԱՍԱՐ» առողջարաններ են ուղեգրվել 21, 17, 88, 17 թվով քաղաքացիներ, իսկ «Արարատ» մոր և մանկան առողջարան՝ մինչև 18 տարեկան 2 երեխա:

Ս/թ մարտ ամսից սկսած «Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում մարզում կատարվել է գյուկոզայի հետազոտություն 23723 մարդ, պապ-քսուք՝ 9168 մարդ, արյան գերճնշման հետազոտություն՝ 28445 մարդ: Սոց. փաթեթով նախատեսված շահառուների 97.2 %ը հետազոտվել են մարզի բուժհաստատություններում:

2015թ. բուժաշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել և հանդիսավորությամբ նշվել է մարզային նշանակության ամենամյա միջոցառում «Լավագույն բուժաշխատող» անվանակարգով: Մարզպետի որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից ընտրվել և պարգևատրվել են վեց լավագույն մասնագետներ, բազմաթիվ բուժաշխատողներ արժանացել են պատվոգրերի և շնորհակալագրերի:

Մարզում առողջապահական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ ընթացել են սերտ համագործակցային աշխատանքներ, մասնավորապես՝

1.«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության, ԱՄՆ ՄԶԳ-ի Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների /ԱԱՊԲ/ ծրագրերի հետ:

2.«Գեդեոն Ռիխտեր», «Լե լաբոլատուալ Սերվիե», «Գրինդեքս» դեղագործական ֆիրմաները մարզում կազմակերպել են սեմինարներ, որոնց մասնակցել են մարզի գրեթե բոլոր մասնագիտությամբ բժիշկներ:

Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2011թ. տրամադրվեց շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում կստանա մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանվում է մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակ մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը: Շարժական կլինիկան վերջացնելով Մարզահովիտ, Գուգարք, Դսեղ, Լեռնապատ, Գարգառ, Գյուլագարակ, Փամբակ համայնքների ազգաբնակչության ստոմատոլոգիական սպասարկումը, ներկայումս տեղակայված է Շահումյան համայնքում: Շարժական կլինիկան իր գործունեության սկզբից արդեն սպասարկել է շուրջ 1700 մարդ:

Մարզի տարածքում գործում են բուժական տարբեր թեքումներով հետևյալ կենտրոնները՝

1.Վանաձորում «Հովարդ Կարազյոզյան» բարեգործական ատամնաբուժական և ակնաբուժական կենտրոնը /սպասարկում է մանկական ազգաբնակչությանը/, տրամադրում ակնոցներ, լինզաներ, ատամի մածուկներ:

2.Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները, /իրականացնում են մինչև 15 տարեկան երեխաների անվճար ստոմատոլոգիական օգնություն, հատկացվում է անվճար դեղորայք/:

2015թ «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից Լոռու մարզում կատարվել է բնակչության զննում և սոցիալապես անապահով բնակչության ակնաբուժական վիրահատություններ: Հետազոտվել է 7011 մարդ, պետական պատվերով վիրահատվել է 502 անձ, որից սոցիալապես անապահով անձանց ցանկում չընդգրկված 30 մարդու հատկացվել է մարզպետի միջնորդություն, լազերային բուժում են ստացել 107 մարդ, հետազոտված և կարիք ունեցող հիվանդներին անվճար հատկացվել են 736 ակնոցներ:

«Բաց հասարակություն» հկ-ի հետ ձեռք է բերվել համաձայնություն հոգեկան հիվանդների խնամք իրականացնելու նպատակով Սպիտակ քաղաքում հոգեկան առողջության կենտրոն ստեղծելու համար:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ


«Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում համալիր կերպով ներկայացվել են ենթաբնագավառները և առաջարկվել բարելավման ենթածրագրեր, որոնք առնչվում են բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությանը, իրազեկության բարձրացմանը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և հատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրների լուծմանը:

«Կառավարության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի սոցիալական օժանդակության հիմնական բաղադրամասերից մեկը ընտանիքների անապահովության գնահատման (ընտանեկան նպաստի) համակարգի բարելավումն է:

Բնակչությանը սոցիալական ծառայություններ մատուցելու գործընթացը օրակարգային լինելով հանդերձ, մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները (ՍԱՏՄ-ներ)

նկատելի աշխատանք են տարել ընտանիքների փաստագրումը վաղորոք կազմված ժամանակացույցով իրականացնելու ուղղությամբ:

ՍԱՏՄ-ների կողմից յուրաքանչյուր ամիս թարմացվել են տեղեկատվական շտեմարանները, որը կարևոր հանգամանք է անապահով խմբերին ուղղված միջոցների հասցեականությունը առավել հստակեցման գործում: Մարզպետարանի կողմից իրականացվել են ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման գործընթացի վերահսկողությունը, հաշվետվությունների հավաքումն ու ամփոփումը, ինչպես նաև այդ տվյալների ամենամսյա վերլուծությունը: Աշխատանքների մասին բնակչությանը իրազեկվել է մամուլի, հեռուստատեսության (հարցազրույցներ, հոդվածներ), ինչպես նաև մարզպետարանի /վարչություն, ՍԱՏՄ-ներ/ և սոցիալական ուղղվածություն ունեցող ՀԿ-ներ կերպայացուցիչների հանդիպումների միջոցով:



2015թ. ընթացքում ՍԱՏՄ-ները փաստագրել են 25.479 ընտանիք (կանխատեսվել էր 25.197-ը), նրանցից նպաստի իրավունքը պահպանել են 17.053-ը, իրավունքը կորցրել՝ 2.016 ընտանիք (որոնցից՝ 133-ը փաստագրման, 1.108-ը չփաստագրման, իսկ 775-ը՝ ՍԱՏՄ-ների ուսումնասիրության արդյունքում): Նոր նպաստառու են դարձել 3.839 ընտանիքներ: 01.01.2016թ. դրությամբ նպաստառու են ամսական միջինացված 20.198 ընտանիք:

Մարզի ՍԱՏՄ-ները իրենց աշխատանքներն իրականացրել են պետության կողմից տրամադրված միջոցների սահմաններում: 2015թ. ընթացքում մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները տնտեսել են շուրջ 236.3 մլն դրամ:

Մարզում 2015թ. ընթացքում ՍԱՏՄ-ների կողմից վճարվել է ավելի քան 6.8 մլրդ դրամ պետական նպաստներ (ներառյալ՝ հրատապ օգնությունները):

Վճարումների պատկերը հետևյալն է. 2015թ. ընթացքում վճարվել է ավելի քան 6.16 մլրդ դրամ ընտանեկան նպաստ (ներառյալ՝ սոցիալականը): Ինամքի նպաստ է տրվել միջին-ամսականով 903 երեխայի հաշվով՝ շուրջ 220 մլն դրամ:

Նպաստառու ընտանիքի 1042 երեխայի համար վճարվել է կրկնակի չափով ծննդյան նպաստ՝ 57.15 մլն դրամ, առաջին դասարան հաճախող 1.534 երեխայի համար վճարվել է միանվագ օգնություն՝ շուրջ 38.5 մլն դրամ, 27 ընտանիքներում մահացած անդամի համար՝ 1.35 մլն դրամ, հրատապ օգնություն է վճարվել շուրջ 326 մլն դրամ (միջին հաշվով յուրաքանչյուր ամիս 1.583 ընտանիքների):

Ամբողջական վճարումների պատկերը, ըստ տարածաշրջանների.

Պետական նպաստների մասով՝ **/մլն դրամ/**

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար
Ընտանեկան նպաստ /ներառյալ սոցիալականը /միջին./	Ցուցակային	7214	2233.37	4879	1585.7	4823	1467.66	1780	565.4	1503	490.2
	Վճարված	7033	2155.87	4746	1531.6	4779	1450.6	1730	545.79	1471	476.28
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ /18.000 դր. /	Ցուցակային	558	135.67	100	24.8	75	18.49	152	38.95	65	17.14
	Վճարված	536	128.93	96	23.31	72	17.6	140	34.92	58	15.07
Ընդամենը վճարված			2284.8		1554.91		1468.2		580.71		491.34

Հրատապ օգնությունների մասով՝

(մլն դրամ)

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար	Ընտ./անձ /միջ./	Գումար
Երեխայի ծննդյան միանվագ օգնություն /50.000դր./	Ցուցակային	300	15.0	531	26.55	173	8.65	62	3.1	80	4.05
	Վճարված	299	14.95	531	26.55	172	8.6	61	3.05	79	4.0
Երեխայի առաջին դասարան հաճախման միանվագ օգնություն /25.000դր./	Ցուցակային	601	15.03	403	10.08	231	5.78	144	3.6	160	4.05
	Վճարված	599	15.0	403	10.08	231	5.78	142	3.55	159	4.03
Ընտանիքի անդամի մահվան դեպքում /50.000դր./	Ցուցակային	16	0.8	7	0.35	2	0.1	0	0	3	0.15
	Վճարված	16	0.8	7	0.35	1	0.05	0	0	3	0.15
Եռամսյակային հրատապ օգնություն /17.000 դր. /միջին.	Ցուցակային	555	114.92	419	86.48	387	79.52	142	29.68	113	23.41
	Վճարված	542	111.43	412	84.68	382	78.44	138	28.58	108	22.54
Ընդամենը վճարված			142.18		121.65		92.87		35.18		30.72

2015թ. մարզում սահմանված ժամկետներում վճարվել են պետական նպաստները և հրատապ դրամական օգնությունները:

Համաձայն ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2015թ. ՀՀ Լոռու մարզում ծննդյան պետական նպաստ են ստացել 3756 ընտանիքների 3774 երեխաների համար, գումարային հաշվարկով՝ պետական նպաստը սահմանված է. առաջին և երկրորդ երեխաների համար՝ 50.000-ական դրամ, երրորդից սկսած երեխաների համար՝ 500.000-ական դրամ՝ կանխիկ վճարումով: Արդյունքում կարող ենք փաստել, որ 3774 երեխաների համար պետությունը կանխիկ փոխհատուցել է 486.15 մլն դրամ ծննդյան նպաստ, իսկ 661 երեխայի հաշվեհամարներին փոխանցվել է 342.5 մլն դրամ:

Ստորև, ըստ ծնված երեխաների հերթական կարգաթվի, ներկայացվում է համառոտ տեղեկատվությունը.

Տարածաշրջանը	Ընտանիքների քանակը	Երեխաների թիվը	Նպաստների թվաքանակը՝ ըստ երեխայի հերթական կարգաթվի							
			Առաջին երեխա	2-րդ երեխա	3-րդ երեխա	4-րդ երեխա	5-րդ երեխա	6-րդ երեխա	7-րդ երեխա	8-րդ երեխա
Վանաձոր	346	346	164	132	38	9	2	1		
Ստեփանավան	423	425	200	137	71	13	3		1	
Սպիտակ	734	737	342	268	114	10	2		1	
Թումանյան	1602	1613	718	636	217	32	9		1	
Տաշիր	651	653	274	242	116	17	1	1	1	1
Ամբողջը՝	3756	3774	1698	1415	556	81	17	2	4	1

«Նախարարություններից և գերատեսչություններից ստացված տվյալների /հարակից բազաներ/ համադրումները համակարգված ձևով է իրականացվում, իսկ հաշվետվային գործընթացը իրականացվում է մարզպետարանի կողմից թվային, իսկ մարզի ՍԱՏՄ-ների կողմից՝ անհատական տվյալների ներկայացմամբ և տեղեկատվական շտեմարանների փոխանակմամբ (աշխատավարձ, մաքսային, անհատ ձեռնարկատիրական, անշարժ գույքի և անձնական ավտոմեքենայի առկայություն, էլեկտրաէներգիա, մինչև 2 տարեկան երեխայի խնամք և այլն): Նկատելի աշխատանքներ են տարվել համադրման արդյունքում քաղաքացիներին ավելի վճարված գումարների ետգանձման ուղղությամբ:

2015թ. ընթացքում մարզի սոցիալական ծառայությունները սխալ տեղեկություններ ներկայացրած քաղաքացիներից ետ են գանձել 16.85 մլն դրամ, որից շուրջ 9.6 մլն դրամը բաժին է ընկնում Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնին:

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2015թ. ընթացքում, ըստ մարզի ՍԱՏՄ-ների, ավելի վճարված նպաստների հետգանձման վերաբերյալ տեղեկատվություն, գործընթացը անընդհատ և շարունակական է՝

(մլն դրամ)

	Հետգանձման ենթակա	Փաստացի ետ է գանձվել 2015թ. ընթացքում	Սոցիալական աջակցության խորհուրդների և դատական ատյանի կողմից մարված	Մնացորդը՝ 01.01.2016թ. դրությամբ
Վանաձորի ՍԱՏԲ	23.58	9.59	2.84	11.152
Սպիտակի ՍԱՏԳ	5.06	2.66	0.16	2.24
Ստեփանավանի ՍԱՏԳ	2.16	1.47	0.62	0.072
Թումանյանի ՍԱՏԳ	2.2	1.04	0.93	0.238
Տաշիրի ՍԱՏԳ	2.53	2.1	0.07	0.37
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	35.56	16.85	4.61	14.07

Պետք է արձանագրել, որ Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնի կողմից առ 01.01.2016թ. ետգանձման մնացորդային 11.151.700 դրամից համապատասխանաբար՝ 2.573.500 դրամը և 4.788.500 դրամը ԴԱՀԿ-ի և դատարանի վարույթում են: Ետգանձման փաստացի մնացորդը կազմում է 3.789.700 դրամ:

2015թ. ընթացքում մարզի ՍԱՏՄ-ներում ստուգումներ են անցկացրել ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմերի ներքին աուդիտի բաժինները:

Շարունակվել է վերահսկվել մարզի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից քաղաքացիներին տարբեր կազմակերպություններ (այդ թվում՝

հանրապետության բժշկական հաստատություններ, կրթական, կոմունալ և այլն) ներկայացվող տեղեկանքների տրամադրման գործընթացը:

2015թ. ընթացքում մարզի ՍԱՏԳ-ների կողմից տրամադրվել 8588 տեղեկանքներ:


Մարզի ՍԱՏՄ-ների կողմից շարունակվել են ավանդի դիմաց տրվող փոխհատուցման գործընթացը: 2015թ. ընթացքում փոխհատուցվել է 387 անձ՝ 80590.6 հազար դրամի չափով: Իսկ 2014թ.՝ 1.182 անձ՝ 252639.4 հազար դրամի չափով:

2007-2015թթ. ընթացքում փոխհատուցվել են 15.213 քաղաքացիներ՝ շուրջ 2.65 մլրդ դրամ:

Մարզպետարանի կողմից համակարգվել են ընտանեկան նպաստի գործունեությունը կանոնակարգող անհրաժեշտ օրենսդրական և մեթոդական հրահանգների ՍԱՏԳ-ներին տրամադրման աշխատանքները:

Կենսաթոշակային ապահովություն

ՀՀ ԱՍՀՆ-ի սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) կողմից տրամադրվել է Լոռու մարզի կենսաթոշակառուների տեղեկատվական թվային բազան:




ՀՀ Լոռու մարզում կենսաթոշակ են ստանում 51.920 մարդ, հաշմանդամություն ունեն 18.883-ը (որից առաջին խումբ՝ 832, երկրորդ խումբ՝ 8.137, երրորդ խումբ՝ 9.178, մանկուց հաշմանդամություն ունեն 736 երեխա), ծնողագուրկ են 2.365 երեխա:

Կենսաթոշակի հիմնական մասը կազմում է 16.000 դրամ, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին 10 տարվա համար (800 դրամ), 10 տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար 500 դրամ:

Մարզում սահմանված ժամկետներում վճարվել են 2015թ. բոլոր ամիսների կենսաթոշակները:

Աշխատաշուկա և զբաղվածություն

2015թ. Լոռու մարզում շարունակվել է ակտիվ աշխատաշուկայի ստեղծման և զբաղվածության խթանման քաղաքականությունը: Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններից ստացված տվյալների հիման վրա պատկերը հետևյալն է.



Գործազուրկների թիվը կազմում է առ 01.01.2016թ. դրությամբ՝ 10728 մարդ, որից 7562-ը կանայք են (Վանաձոր՝ 5558/3884-ը կին, Ալավերդի 1398/979, Ստեփանավան՝ 2020/1541, Սպիտակ՝ 1422/910, Տաշիր՝ 330/278): Քանի որ պետական ծրագրերը ավելի պահանջարկված ու նպատակամետ, այդ պատճառով էլ նկատելիորեն բարձրացել է գործազուրկների ակտիվությունը տվյալ ծրագրերում ընդգրկվելու նախաձեռնողականությունը:

Աշխատանք փնտրողների թիվը 01.01.2016թ. կազմել է 11159 մարդ, նախորդ ժամանակահատվածում՝ 8503 մարդ:

Նրանցից աշխատանքի է տեղավորվել 1173 մարդ, որից՝ 791 կին (Վանաձոր՝ 632/458 կին, Ալավերդի՝ 132/79, Ստեփանավան՝ 288/169, Սպիտակ՝ 64/42, Տաշիր՝ 57/43): Զբաղվածության ամենամյա ծրագրերով աշխատանքի է ընդունվել 241 մարդ (Վանաձոր՝ 132, Ալավերդի՝ 21, Սպիտակ՝ 17, Ստեփանավան՝ 57, Տաշիր՝ 14):

Մարզում բարձր մակարդակի վրա է մնում աղքատությունը: Աղքատության մակարդակը մարզում կազմում է 36.4%՝ նախորդ տարվա 38.6%-ի դիմաց: Իսկ ծայրահեղ աղքատները՝ 3.0%՝ նախորդ տարվա 2.6%-ի դիմաց, այսինքն բարձրացել է ծայրահեղ աղքատների թիվը:

Միջին ամսական աշխատավարձը մարզում կազմում է 150,923 դրամ, միջին հանրապետականի՝ 180111 դրամի դիմաց (80.7 %):

ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշման պահանջների համաձայն գյուղական բնակավայրերի բնակչության շրջանում՝ աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց ներգրավմամբ իրականացվեց Սեզոնային զբաղվածության խթանմանն ուղղված ծրագիրը, որի շրջանակներում 280 ծրագրերի համար պետությունը ֆինանսավորել է շուրջ 42.2 մլն դրամ:

Զբաղվածության գործակալության կողմից Ալավերդիում 02.07.2015թ. անցկացվեց «Աշխատանքի տոնավաճառ», որին մասնակցություն ունեցան 31 գործատուներ, փաստվեց 61 թափուր աշխատատեղերի պահանջարկը, ևս 39-ը՝ սպասելիքով:

Աշխատատեղերի պահանջարկը հիմնականում սպասարկման բնագավառից են /մատուցող, խոհարար, բարմեն, վարորդ, մեքենաների տեխսպասարկման մասնագետ, կաթի վերամշակման բնագավառի մասնագետ՝ պանրագործ, բժիշկ, գյուղական համայնքներում՝ մանկավարժ և այլն:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ համայնքների հետ համագործակցային եռամյա՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE՝ Կյանք) ծրագրի աջակցությամբ համայնքի ենթակայության ներքո Վանաձորում կազմավորված բարեկարգման հարցերով և համայնքային գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներով զբաղվող «Նեցուկ» ՀՈԱԿ-ում և Սպիտակում՝ ջերմոցային տնտեսությունում աշխատում են 14-ական հաշմանդամություն ունեցող անձինք:

«Էբրիկոտ» ընկերությունում աշխատում են 14 ՀՈԻԱ (որից՝ հուշանվերների արտադրությունում՝ 10, իսկ արծաթյա զարդերի արտադրությունում՝ 5 ՀՈԻԱ):

Աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցներին

Մարզի թվով 3 բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից 2015թ. հաշմանդամություն ունեցող անձանց համար լրացվել է 155 ՎԱԾ (վերականգնողական անհատական ծրագրեր), որից 26 սայլակ, 45 այլ պարագաներ (օրթոպեդիկ կոշիկ, գուլպա), 30 ձեռնափայտ, 15 հենակ, 12 քայլակ, 16 լսողական սարք, պրոթեզավորվել է՝ 34 անձ (որից՝ 18 կրծքի), ձայնաստեղծ սարք՝ 2:

Հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՌԻԱ) համակողմանի աջակցությունը շարունակում է մնալ մարզպետարանի առաջնահերթ գործառույթներից մեկը: Մարզպետարանը «Լիարժեք կյանք» ՀԿ-ի հետ կանոնակարգվել է անվասայլակի կարիք ունեցող առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց (ներառյալ՝ մանկուց հաշմանդամների) համար փաստաթղթավորումը, տարատեսակ շուրջ 20 անվասայլակների ստացումը, փոխադրումը Լոռու մարզ և հանձնումը շահառուներին: Մարզում գրեթե 250 շահառուների գույքի բաշխման լայնածավալ աշխատանքներ է իրականացրել «Սատար» հաշմանդամների հարցերով զբաղվող ՀԿ-ն՝ համագործակցելով «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի հետ:

Նվազ արդյունավետությամբ է ընթացել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու ուղղությամբ (մասնավորապես՝ թեքահարթակների կառուցում) աշխատանքները: Թեև առկա է նպաստավոր օրենսդրական դաշտ, սակայն պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն, շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մուտքի մատչելիության ապահովումը դեռևս հիմնախնդիր է մնում:

Մարզի համայնքներում (քաղաքապետարան, գյուղապետարան) կառուցվել են 30 թեքահարթակներ (որից՝ 1-ը կառուցվել է 2015թ՝ Լեռնանցքի համայնքային կենտրոն.), շինարարական տեսակետից անվասայլակ օգտագործող մարդկանց համար մատչելի են 38-ը, իսկ դեռևս 45 համայնքներում մատչելիության ապահովման խնդիր կա:

Մարզի 167 կրթական հաստատություններից 103-ում առկա է թեքահարթակ (որից՝ 2-ը կառուցվել է 2015թ՝ Լոռի Բերդ և Արևաշող համայնքներում), շինարարական տեսակետից մատչելի են 26-ը, իսկ 34 դպրոցում դեռևս թեքահարթակ չկա:

Մարզի իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող 36 առողջապահական ընկերություններից 33-ում առկա են թեքահարթակներ (որից՝ 2015թ. կառուցվել է 2 թեքահարթակ՝ Լեռնանցքում և Մեղովկայում), շինարարական տեսակետից մատչելի են 3-ը, 2-ում դեռևս չի կառուցված: Նույն ընկերությունների կազմում գործող շուրջ 90 բուժակ-մանկաբարձական կետերից 12-ում կառուցված են թեքահարթակներ, իսկ մնացածը կարելի է մատչելի համարել, քանի որ տեղակայված են հիմնականում միահարկ շինություններում:

2015թ. «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից Սպիտակի քաղաքապետարանի, Ալավերդու և Վանաձորի մշակույթի տների առջև կառուցվեցին թեքահարթակներ: Իսկ թվով 4 համայնքների (Բազում, Արևաշող, Գարգառ, Վարդաբլուր) նախակրթարաններում և 2 համայնքների՝ (Գարգառ, Յաղդան) մշակույթի տներում կառուցվել են թեքահարթակներ: Իսկ մի շարք քաղաքային համայնքներում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Թումանյան, Շամլուղ) առանձնակի ուշադրություն են դարձրել հասարակական այլ վայրերի (դեղատուն, խանութ, դատարան, մանկական հրապարակ, դատախազություն, ոստիկանություն) մատչելիության հանդեպ:

2015թ. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովը հրավիրել է 5 նիստ (որից՝ 2-ը արտագնա)՝ օրակարգային 20 հարցերով: Հանձնաժողովի նիստերը եղել են ընդլայնված, դռնբաց, ընթացել են միջազգային կազմակերպությունների («Սեյվ դը Չիլդրեն» ՄԿ, ԱՄՆ ՄԶԳ ժողովրդավարական կառավարման կառույց, «Խաղաղության կորպուսի» կամավորներ), ինչպես նաև ՀՀ ԱՍՀ նախարարության մասնակցությամբ /հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետը հանդես է եկել օրակարգային զեկուցումով/: Տարեվերջյան նիստը ներառում էր ՀՌԻԱ ստեղծագործությունների ցուցահանդես-վաճառք, ՀԿ-ների կատարած

աշխատանքների մասին տեղեկատվության հաղորդում և «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի բեմադրած «Հրեշտակի թևերով» թեմատիկ ներկայացումը:

Հանձնաժողովի բոլոր նիստերը բաց են հասարակայնության առջև և լուսաբանվել են ՋԼՄ-ներով (մամուլ, հեռուստատարվելություն, մարզպետարանի կայք-էջ): Բնագավառում կատարվող աշխատանքների լուսաբանումը իրականացնում է նաև Հանձնաժողովի խոսափող հանդիսացող «Լիարժեք կյանք» պարբերականը:

ՀՈՒԱ Լոռու մարզային հանձնաժողովի գործունեության մասին առկա բոլոր տվյալների տեղակայումը մարզպետարանի կայք-էջում՝ առանձնացված ըստ նիստերի հերթականության և արձանագրությունների:

Լոռու մարզային գրադարանի կողմից իրականացվող ծրագրերում («Այլ խմբերի հետ աշխատանքներ և սպասարկում», «Ընտանեկան գրադարանավար») ընդգրկված են միայնակ տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, իսկ համագործակցությունը ընթանում է հիմնականում ՀԿ-ների հետ: Խրախուսելի էր կույրերի համար կիրառվող «Արև» ծրագիրը, որում ընդգրկվել են 150-ից ավելի շահառուներ, նրանցից շատերն ավարտել են համապատասխան դասընթացներ: Տեսողական խնդիրներ ունեցող անձանց տրամադրված համակարգիչները միացված են նաև համացանցին: Շարունակում է գործել մարզային գրադարանի՝ EIFL միջազգային կազմակերպության «Առողջապահական կամուրջ» դրամաշնորհային ծրագրով ստեղծված առողջապահական ուղղվածությամբ կայք-էջը (Հանրապետական գիտաբժշկական գրադարանի և Վանաձորի պետական բժշկական քոլեջի հետ համագործակցությամբ):

«Փրկեք երեխաներին» ՄԲԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի միջոցով Վանաձորում գործում է «Նեցուկ» համայնքային սոցիալական ձեռնարկությունը, իսկ Սպիտակում՝ ջերմոցային տնտեսությունը՝ աշխատանքներում ներգրավվելով ՀՈՒԱ մեծաթիվ անձանց երկու ձեռնարկություններում աշխատում են գրեթե 3 տասնյակ ՀՈՒԱ:

Մարզպետարանի սաջակցությամբ ՀՈՒԱ իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Սպիտակ բազե» ՀԿ-ին աշխատանքային տարածք հատկացվեց «Սպիտակի բժշկական կենտրոնի» մասնաշենքերից մեկում:

• «Լիարժեք կյանք» ՀԿ-ն առանձնանում է իր բազմակի ծրագրերով, ամառային ամիսներին երեխաների համար ճամբարների կազմակերպման աշխատանքներով: ՀԿ-ի կողմից պարբերաբար իրականացվող թեմատիկ քննարկումներին, թեմատիկ ցերեկույթներին /հաշմանդամության հիմնահարցեր, մատչելիության ապահովում, ներառական կրթության, ֆիզիկական դաստիարակության հարցեր և այլ/ մշտապես մասնակից են շահառուներ, նրանց ծնողները և լրատվամիջոցներ:

Այս տարի «Լիարժեք կյանք» ներառական ամառային ճամբարում հանգստացել են շուրջ 200 երեխաներ, որոնցից կեսից ավելի ունեն հաշմանդամություն: Նրանց օգոստոսին հյուրընկալեց ՀՀ վարչապետ պարոն Հ.Աբրահամյանը, ով ճամբարին նվիրաբերեց սեղանի թենիսի երկու հավաքածու, ինչպես նաև խոստացավ աջակցել լողավազանի կառուցման գործում: Իսկ Ստեփանավանի քաղաքապետի նախաձեռնությամբ հարթեցվեց դեպի ներառական ճամբար տանող մեկ կիլոմետր երկարությամբ ավտոճանապարհը:

Շարունակել է ակտիվորեն գործել ՀԿ-ի Հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի համայնքային կենտրոնը, որն սպասարկում է Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի ՀՈՒԱ երեխաներին, ինչպես նաև 160 դիսկի գոտում գտնվող երեխաների և պատանիներին (ուսուցում, ազատ ժամանցի կազմակերպում):

ՀԿ-ի կողմից հրատարակվող համանուն՝ «Լիարժեք կյանք» լրատուի կողմից անց է կացվում լրագրողական մրցույթ՝ «Հաջողության պատմություն» խորագրով:

• «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ-ն կազմակերպել է մի շարք միջոցառումներ և էքսկուրսիաներ (Ծիծեռնակաբերդ, Սևան, Հաղարծին, Գոշավանք): Համագործակցելով

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ 12 հաշմանդամություն ունեցող անձ սովորել է խոհարարություն:

- Վանաձորի «Մանկական կենտրոն» ՀԿ-ն կազմակերպել է Լոռու մարզի շուրջ 20 ողնաշարի խնդիրներ ունեցող ՀՈՒ երեխաների բուժզննումը Գյումրիում՝ Գերմանիայից ժամանած բժիշկների մասնակցությամբ: ՀՈՒԱ բաշխվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, օպտիկական ակնոցներ, գրենական պիտույքներ, ձմեռային հագուստ, սնունդ: Ամեն տարի կազմակերպությունը Լոռու մարզի 120-ից ավելի ողնաշարի խնդիրներ ունեցող ՀՈՒ երեխաների բուժական հարցի խնդիր է լուծում:

- «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից Վանաձոր և Սպիտակ քաղաքներում ՀՈՒԱ շրջանում իրականացվել է գույքի և պարագաների, հագուստի բաշխում: Կազմակերպության միջոցով ՀՈՒԱ բաշխվել է նաև գույք, պարագաներ և այլ պարագաներ /սայլակ, քայլակ, հենակ, լոգարանի աթոռներ, ձեռնափայտ, կրծքագեղձի պրոթեզ/, նաև այլ պարագաներ մարզի բուժհաստատություններին: Կազմակերպել է անվճար մասնագիտական արհեստագործական կրթություն, որից արդյունքում 4 անձ տեղավորվել են աշխատանքի:

- «Երիտասարդական ալիք» ՀԿ-ն իրականացրեց մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ վերականգնողական տարբեր պարագաների բաշխում /անվասայլակ, քայլակ, հենակ, ձեռնափայտ և այլն/:

- «Խաչվող ուղիներ» ՀԿ-ն հաշմանդամ երեխաների շրջանում իրականացրել է «Արթթերապիա» ծրագիրը:

- «Մոլորակ» մշակութային լրատվական ԲՀԿ-ն կազմակերպել է ՀՈՒԱ մասնակցությունը տարբեր միջոցառումներին (ասմունքի, երգի ու պարի համաքաղաքային 22-րդ փառատոն, Եղեռնի 100 ամյակ, Երեխաների պաշտպանության միջազգային օր), իսկ Հաշմանդամների միջազգային օրը՝ մասնակցություն «Անսահման տիեզերք» խորագրով ցուցահանդեսին:

- «Ինֆորմացիոն կենտրոն» ՀԿ- համագործակցելով «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ թվով 12 ՀՈՒԱ համար կազմակերպել է «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում ՀԾ՝ հաշվապահական ծրագրի մասնագիտական ուսուցումներ աշխատավայրում» թեմայով դասընթացներ, իսկ 24 անձի համար՝ համակարգչային դասընթացներ:

2015թ. իրենց ակտիվ ծրագրերով առանձնացան նորաստեղծ «Սպիտակ բազե» և «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ները: Իրականացվել են «Հաշմանդամության խումբ ստանալու իմ իրավունքը» («Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի աջակցությամբ), «Մարդամեջ» (Եվրասիա հիմնադրամի և Մեդիա կենտրոնի աջակցությամբ) ծրագրերը, մասնակցել «Սոցիալական ձեռներեցության զարգացումը Հայաստանում» (Բրիտանական խորհրդի հրավերով) և «Կանանց առաջնորդության և հաշմանդամության ինստիտուտ» («Ագաթ» հատուկ կարիքներով կանանց ՀԿ-ի հրավերով) դասընթացներին, համագործակցային աշխատանք է կատարվել գործատուների, առողջապահական ընկերությունների հետ:

Մարզի թվով 20 համայնքներում (Վանաձոր, Թումանյան, Արջուտ, Անտառամուտ, Դեբետ, Ազնվածոր, Գուգարք, Շնող, Հաղպատ, Շամուտ, Մարց, Քարինջ, Մեծ Պարնի, Լուսաղբյուր, Լեռնավան, Հարթագյուղ, Ղուրսալ, Ագարակ, Մեծավան) համերգներով (ժողովրդական, գուսանական, հայրենասիրական երգեր) հանդես է եկել Հաշմանդամություն ունեցող անձանց «Հոգու լույս» ՀԿ-ի «Մեր երգը Ձեզ» համույթը (ղեկ.՝ կույր Հուսիկ Հարությունյան): Մարզպետարանը համերգների կազմակերպման գործում կազմակերպությանը ցուցաբերել է գործուն աջակցություն:

ՀՈՒԱ կողմից 2015թ. նաև մարզական հաջողությունների տարի էր՝

✓ Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն հաշմանդամ մարզիկ» մրցույթի հանրապետական եզրափակիչ փուլին՝ ՀՀ Լոռու մարզը գրավեց պատվավոր երկրորդ տեղը: Անհատապես հաղթողներ դարձան խուլ Սարգիս Աթաբեկյանը (Վանաձոր, շախմատ), հենաշարժողական Անուշ Ասլանյանը (Վանաձոր, շաշկի), խուլ-համր Աշոտ Ալավերդյանը (Վանաձոր, շաշկի):

✓ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպվել է Բոչիայի հանրապետական առաջնությունը (2015թ. ՀՀ երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանում): Մրցավայրը՝ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի ամառային ներառական ճամբար: Մասնակցել են 10 թիմեր՝ 30 մարզիկներով:

✓ Խուլերի Եվրոպայի փոխչեմպիոն և բրոնզե մեդալակիր, ինչպես նաև ՀՀ չեմպիոն դարձավ աշխարհի 2014թ. աշխարհի երիտասարդների չեմպիոն Սենիկ Սերոբյանը (Վանաձոր, ըմբշամարտ՝ ազատ և հունահռոմեական ոճ):

✓ Խուլերի Եվրոպայի չեմպիոն դարձավ Ռոբերտ Գևորգյանը (Վանաձոր, ձյուդո)

✓ Խուլերի Եվրոպայի երրորդ մրցանակակիր և ՀՀ չեմպիոն դարձավ Գևորգ Սերոբյանը (Վանաձոր, ըմբշամարտ)

✓ Խուլերի Ֆուտզալի ՀՀ առաջնության երրորդ մրցանակակիր (7 թիմերի միջև):

✓ Խուլերի ՀՀ բրոնզե մրցանակակիր Սարգիս Աթաբեկյանը (Վանաձոր, շախմատ):

✓ Խուլերի ընտանիքների «Ուրախ մեկնարկներ» մրցույթում Սերոբյանների ընտանիքը գրավեց երկրորդ տեղը:

✓ «Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Սուրեն Մաղաքյանը (Ստեփանավան) հաշմանդամություն ունեցող և տեսողական խնդիրներով անձանց, սպորտի վետերանների «ՊարաԱրթ» մարզամշակութային փառատոնում (Սոչի) գրավել է 2-րդ տեղը (բոչիայի անհատական մրցապայքար)

✓ Պարոլիմպիկ համաշխարհային խաղերին (Սոչի) Լոռու մարզից երկու մարզիկներ՝ Հարություն Մխիթարյանը (Վանաձոր՝ երրորդ տեղ, Սերոբ Աբրահամյանը Տաշիր՝ չորրորդ տեղ):

✓ ՀՀ հաշմանդամային սպորտի ամենամյա «Փյունիկ» մարզական խաղերի չեմպիոն դարձավ ՀՀ բազմակի չեմպիոն վանաձորցի Հարություն Մխիթարյանը (ծանրամարտ), վերջին 10 տարիների անփոփոխ առաջատար

✓ Տաշիրցի Սերոբ Աբրահամյանը դարձավ ՀՀ չեմպիոն՝ ծանրամարտ պառկած վիճակից՝ հրում վարժությունում

✓ Տաշիրցի Սերգեյ Կիրակոսյանը դարձավ ՀՀ չեմպիոն՝ բազկամարտից:

ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է թեժ գիծ՝ 0322 2-33-99 հեռախոսահամարով /առողջապահության և սոցիալական ապահովության հարցերով/, իսկ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից իրականացվող «Ամեն ինչ մեզ համար, մեզ հետ» ծրագրի շրջանակներում գործում է 080001311 անվճար թեժ գիծը: Հեռաձայնողների հարցերն առնչվում են առողջապահական, սոցիալական և շատ այլ ոլորտներում խախտված իրավունքներին, որոնց անմիջապես անդրադարձ է եղել: «Լիարժեք կյանք» ՀԿ-ի և գործընկեր կազմակերպությունների գրասենյակներում իրավաբանների կողմից մատուցվել է անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են եղել նաև տարեց անապահով քաղաքացիների հիմնահարցերը: Լոռու մարզի բնակչության (230.000) շուրջ 14%-ը (շուրջ 32.500 մարդ) 63 տարեկանից բարձր են, որից՝ ծերության սոցիալական կենսաթոշակ են ստանում շուրջ 2%-ը, իսկ աշխատանքային կենսաթոշակառուների գերակշիռ մասը կանայք են: Տարեցները հիմնականում ունեն գրեթե նույն հիմնախնդիրները, ինչ ՀՈՒԱ:

Վանաձորում գործում են բարեսիրական առաքելությամբ շուրջօրյա ինչպես «Վանաձորի տարեցների տունը» (ավելի քան 50 տարեցների խնամքով), այնպես էլ «Կյանքի հաց» ԲՀԿ-ի «Հույսի տուն» ծերերի հանգստավայրը (30-70 տարեցների խնամքով), իսկ մարզում տարեցների հարցով համակարգված գործունեություն են ծավալում վետերանների մարզային և տարածաշրջանային կառույցները: «Կյանքի հաց» ԲՀԿ-ն իր խնամքի կենտրոնում վճարովի հիմունքներով օթևան է տվել անօթևան, անժառանգ (անխնամ) և անկողնային խնամքի կարիք ունեցող տարեցների (ներառյալ՝ ՀՈՒԱ):

Զգալի աշխատանքներ է իրականացնում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն, որի շահառուները բարեգործական ճաշարաններից օգտվող, տնային կարիք ունեցող հարյուրավոր

տարեցներն են (շահառուների թիվը Վանաձոր, Սպիտակ. Ալավերդի և Տաշիր քաղաքներում տաք սնունդ են ստանում 426 մարդ), իսկ շահառուների ընտրությունը և մասնակի ֆինանսավորումը կատարում են համայնքները: Մարզկենտրոնում և Ալավերդում համապատասխանաբար ևս 90 և 12 անձ սպասարկվում է տնային պայմաններում: Կազմակերպության մասնակցությամբ իրականացվում է «Հայաստանի աղքատ և կարիքավոր անձանց կենսամիջոցների բարելավում» և «Հրատապ օգնություն Սիրիայից տեղահանված ընտանիքներին» ծրագրերը: 2015թ. ԲՀԿ-ի ընդհանուր ներդրումը կազմել է շուրջ 64,58 մլն դրամ:

Գնահատելի է նաև «Հայկական Կարիտաս» ՄԲՀԿ-ի գործունեությունը Վանաձորում և Տաշիրում՝ «Տնային խնամք» ծրագրով (160 տարեցների ընդգրկումով):

ՀՀ Լոռու մարզում հանդիսավորությամբ նշվեց Տարեցների միջազգային օրը: ՀՀ Լոռու մարզպետի կողմից կատարված այցելության ժամանակ Վանաձորի ծերանոցին նվիրաբերվեց վերջին սերնդի (թվային հեռարձակումն ապահովող) հեռուստացույց: Տոնական համերգով հանդես եկան Վանաձորի Գուսան Զաքարյանի անվան և Ստեփանավանի Ա.Մարգարյանի անվան մշակույթի օջախների սաները:

Մարզպետը հոկտեմբերի 1-ին այցելել է նաև մարզի ամենաերկարակյաց կնոջը՝ Ա.Հովհաննիսյանին (հյուրասիրություն, 50.000 դրամ): Մարզպետարանը 50.000-ական դրամ օգնություն է ցուցաբերել նաև երկարակյացներ Լուսիկ Անդրեասյանին ու Մարգարիտ Զիլինգարյանին: 100-ն անց անձանց համար միջոցառումներ են կազմակերպվել համայնքներում, մասնավորապես՝ Դեսպին Պետրոսյանին (Օձուն, 50.000 դրամ), Բուսնիկ Հարությունյանին (Եղեգնուտ, 25.000 դրամ):

Մարզի ՍԱՏՄ-ների կողմից 2015թ. ընթացքում 18 անձանց (որից՝ Վանաձորի ՍԱՏՄ՝ 12, Սպիտակի ՍԱՏՄ՝ 3, Թումանյանի ՍԱՏՄ՝ 2, Ստեփանավանի ՍԱՏՄ՝ 1) համար կազմվել են փաստաթղթային փաթեթ՝ ծերանոցներում տեղավորելու խնդրով:

Փախստականների և միգրացիայի հիմնահարցեր

01.01.2016թ. դրությամբ մարզում փաստացի բնակվում են ավելի քան 7500 փախստական, որից քաղաքացիություն են ստացել շուրջ 6000 անձ: Աշխատունակ են՝ 3.465 մարդ (46.2%), նախկին քաղաքաբնակներ՝ 6.750 մարդ (90%):

1999-2005թթ. բնակարանային խնդիր է լուծվել փախստականների 292 ընտանիքների համար /Փախստականների նորվեգական խորհրդի, ՄԱԿ-ի և ՀՀ պետբյուջեի միջոցներով (20՝ Արջուտում, 16՝ Տաշիրում, 54՝ Վանաձորում, 52՝ Սպիտակում, 56՝ Ստեփանավանում, 58՝ Նոր Խաչակապ, Ղուրսալի, Ջրաշեն, Սարամեջ համայնքներում):

Դեռևս բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը մարզում կազմում է 195:

2006-2015թթ. Լոռու մարզում փախստական ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր չի իրականացվել:

Զոհված և հաշմանդամ զինծառայողների հիմնահարցեր

ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշման պահանջներով է ընթանում զոհված (մահացած) և հաշմանդամ (վիրավոր) զինծառայողների (ազատամարտիկների) ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աշխատանքները:

Ներկայումս ՀՀ Լոռու մարզում բնակարանի կարիքավոր են 85 (27 զոհվածի և 58 զինհաշմանդամություն ունեցողի) ընտանիքներ, որից՝ 4-ը հաշվառվել են 2015թ.: Նախորդած տարիներին Լոռու մարզում բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն են ստացել զոհվածի և զինհաշմանդամի 224 ընտանիքներ:

2015թ. ՀՀ ՊՆ բնակապահովման ծրագրից օգտվեց զոհված զինծառայողի մեկ ընտանիք՝ 6.276.000 դրամ /որից՝ 4 մլն դրամը ՀՀ կառավարության 16.07.2015թ. թիվ 758 որոշմամբ, իսկ 2.276.000 դրամը՝ ՀՀ ՊՆ-ի բնակհանձնաժողովի թիվ 2 նիստի արձանագրությամբ/:

29.06.2015թ. Վանաձորում նշվել է անհայտ կորած զինծառայողների հիշատակի օրը թվով 15 անհայտ կորած զինծառայողների ընտանիքների մարզպետի կողմից տրամադրվել է 20.000-ական դրամ, ամբողջը՝ 300.000 դրամ:

ՈՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2015թ-ի ընտանիքի, կանաց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել են բազմաթիվ աշխատանքներ.

Ուսումնասիրվել են մարզում գենդերային հիմնահարցերը, իրականացվել է գենդերային քաղաքականության և ընդդեմ գենդերային բռնության 2014թ-ի ծրագրերը, մշակվել է գենդերային քաղաքականության և ընդդեմ գենդերային բռնության 2015թ-ի ծրագիրը:

Ոստիկանության համապատասխան ծառայությունների և ԽՀՀ-երի հետ համատեղ քննարկվել են մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների խնդիրները, անհրաժեշտության դեպքում արվել են ուղղորդումներ համապատասխան հաստատություններ: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացվել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների հետ: Իրականացվել է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական /հատուկ հանրակրթական/ ուսումնական հաստատություններում: Ընդհանուր հաշվառման մեջ են գտնվում 24 երեխա, որից 20-ը՝ տղա, 4-ը՝ աղջիկ, որոնցից հանցագործության կատարածներ՝ 12, իրավախախտ՝ 7, կրթությունից դուրս մնացած՝ 4 և մուրացիկ (թափառաշրջիկ)՝ 1 երեխա :

Ուսումնասիրվել են թվով 500 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ, կատարվել են նրանց կարիքների գնահատում, ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր և ապահովվել դրանց իրականացումը համապատասխան հաստատություններում:

Մանկատներ են տեղավորվել 18 երեխա, որից 2-ը՝ մասնագիտացված մանկատուն:

Կանխարգելվել է 18 երեխայի մուտքը մանկատուն:

Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ընդունելության նպատակով կատարվել է երեխաների և ընտանիքների ուսումնասիրություն, որի արդյունքում 28 երեխա ընդունվել, և 24 երեխա դուրս է գրվել նշված հաստատությունից: Համապատասխան աշխատանքի և խորհրդատվության արդյունքում կանխարգելվել է 25 երեխայի տեղավորումը խնամքի հաստատություն:

Հաստատության անվանումը	Տեղավորում	Դուրս գրում	Կանխարգելում
Վանաձորի մանկատուն	18	20	18
Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն	28	24	25

«Նորք» ավտոմատացված տեղեկատվական համակարգ են մուտքագրվել և փոփոխության են ենթարկվել թվով 150 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ՝ դրանում հաշվառելով՝

- ✓ 21 առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձնանց եւ օրենքով սահմանված կարգով

ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կենտրոնացված հաշվառման:

- ✓ 17 որդեգրել ցանկացող անձանց (դրական եզրակացության հիման վրա որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցվել են հաշվառման մատյանում, լրացվել որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
- ✓ 18 որդեգրման ենթակա երեխաների տվյալները և անձնական քարտի պատճենները ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:
- ✓ 2 մանկուց հաշմանդամ երեխա,
- ✓ 28 երեխաներ խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում գտնվող, 18 մանկատանը գտնվող երեխաներ և փոփոխելով կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 30 երեխաների գործերը:
- ✓ Որդեգրվել է 1 երեխա: Որդեգրման համար հաշվառված քաղաքացիների թիվը՝ 15, հաշվառված երեխաների թիվը՝ 16: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մարզային հաշվառված ենթարկվածների թիվը՝ 21, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման ենթարկված թիվը՝ 21:

Կատարվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **312** երեխայի վկայագրում:

Ներառական կրթություն ստանալու համար վկայագիր ստացած երեխաների թիվը՝ 248, հատուկ դպրոցներ (Սպիտակ և Վանաձոր) հաճախելու համար տրված վկայագրերի թիվը՝ 32:

- «Առավոտ» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվել է ուսումնասիրություն և կանխարգելվել է 30 երեխայի մուտքը խնամքի հաստատություն և մանկատուն, բեռնաթափման ծրագրի շրջանակներում ընտանիք է վերադարձել Վանաձորի մանկատան 7, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 հաստատության 5, Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոցի 3, Սպիտակի թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոցի 6 երեխա:
- Բաժնի մասնագետները մասնակցել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին, որտեղ քննարկել են երեխայի հետ կապված հատուկ դեպքեր, լուծվել են առկա տարածայնություններ՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը:
- Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ կազմակերպվել են այցելություններ.
- Վանաձորի մանկատուն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար տոնական մթնոլորտի ձեւավորում, հյուրասիրություն
- խնամատար ընտանիք այցելություն, տոնական մթնոլորտի ձեւավորում, հյուրասիրություն և նվիրատվություն
- Տաշիրի «Փոքրիկ Իշխան» կենտրոն այցելություն, տոնական մթնոլորտի ձեւավորում, նվերներ երեխաներին,
- Տաշիրի «Տիրամայր Հայաստան» կենտրոնի բնակչներին այցելություն:
- Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին ուղղված «Դիակոնիա» կազմակերպության աջակցությամբ իրականացվել են հումանիտար օգնության ծրագրեր սննդի, հագուստի, գրենական պարագաների տեսքով: «Դիակոնիա» կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել է մոտ 80 սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգիստը ճամբարում: Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող մարզի առավել կարիքավոր ընտանիքներ և երեխաներ, որոնց իրականացվել է աջակցություն, հագուստի և սննդի տեսքով՝ 1854 շահառու օգտվել է ծրագրից:

- Ամերիկյան «Ամքոր» կազմակերպության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվել է հումանիտար օգնության ծրագիր՝ չոր սննդի տեսքով:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Արտաքին կապերի եւ միջազգային համագործակցության շրջանակներում 2015 թվականին մարզում իրականացվել են խոշորածավալ աշխատանքներ, որոնք զգալի ներդրում են ունեցել մարզի զարգացման գործընթացում: Այսպիսով՝ արդյունավետ համագործակցություն է իրականացվել շուրջ 43 միջազգային կառույցների հետ:

Շարունակվել է նաեւ սերտ համագործակցությունը Ֆրանսիայի ՊԱԿԱ, Ռիոն Ալպ ռեգիոնների, Բելառուսի Վիտեբսկ եւ Վրաստանի Աջարիա շրջանների հետ: Միջազգային համագործակցության ոլորտում Լոռու մարզը հաջողությամբ իրականացրեց նոր նախաձեռնություն՝ համագործակցության հիմք դնելով Շվեդիայի Ուփսալա նահանգի եւ Լոռու մարզի միջեւ: Նշենք նաեւ, որ մարզը ներկայացրել է Ստավրոպոլի երկրամասի հետ տարածաշրջանային փոխշահավետ համագործակցություն սկսելու առաջարկ:

Լոռու մարզը հանդիսանում է Ֆրանկոֆոն Ռեգիոնների Միջազգային Ասոցացիայի (AIER) լիիրավ անդամ 2011թ-ի նոյեմբերի 24-ից եւ Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի երկամսյակի շրջանակներում՝ 2015-ին մարզի համայնքներում ակտիվորեն իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ:

Շարունակվել է համագործակցությունը Լոռու մարզի եւ Եվրոպական Տարածաշրջանային Ասամբլեայի (ԵվՏԱ/ԱԵՐ) հետ: Մարզը վերջինիս լիիրավ անդամ է հանդիսանում 2010թ-ի նոյեմբերի 11-ից:

ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման համաշխարհային կոնֆերանսում Ստեփանավանը ճանաչվել է քաղաքի «Դերային մոդել»:

Հայ - ֆրանսիական համագործակցության շրջանակներում **Ֆրանսիայի ՊԱԿԱ (Պրովանս Ալպեր Լազուրի Ափ)** ռեգիոնի հետ համագործակցությամբ մի շարք ծրագրեր են իրականացվում: 2015թ-ին կնքվեց ՊԱԿԱ ռեգիոնի հետ 2015-2017թթ. համագործակցության համաձայնագիրը: Համաձայնագրի շրջանակներում նախատեսված ծրագրերից 2015թ-ին իրականացվել են 173 000 եվրո արժողությամբ աշխատանքներ: Հատկանշական է, որ 2015-2017թթ համագործակցության համաձայնագրով նախատեսվում է ընդհանուր 451 000 եվրոյի աշխատանքների իրականացում:

ՊԱԿԱ ռեգիոնը հանդիսանում է նաեւ համագործակցության կամուրջ եւ հարթակ Օտ Տեղ դե Պրովանսի (Haute Terre de Provence), ԿՐԻՊՏ-ի (CRIPT), DՏԲ-ի (Ցավեր առանց սահմանների)-ի, Անասնաբուծության ռեգիոնալ պալատի եւ Լոռու մարզի միջեւ: Այս բազմակողմանի համագործակցության արդյունքում իրականացվում են բավականին արդյունավետ ծրագրեր: Արժանահիշատակ են տուրիզմի, ագրոտուրիզմի, անասնաբուծության, ռաֆինիքի, բնագիտական, թանգարանային եւ կրթական ոլորտներում իրականացվող ծրագրերը:

Տուրիզմի բնագավառ՝

- Երկարատեւ աշխատանքների եւ բազմակողմանի համագործակցության արդյունքում հիմնադրվեց եւ 2015-ին հանդիսավոր բացվեց Թումանյան աշխարհ զբոսաշրջային գրասենյակը, որտեղ վերանորոգման և կահավորման աշխատանքներ են կատարվել, և

կենտրոնը այժմ լիարժեք գործունեություն է իրականացնում: Կենտրոնը հիմնադրվել է ՊԱԿԱ-ի, տեղական 7 համայնքների և ՀՀ կառավարության համատեղ ներդրմամբ:

- Ֆրանսիացի մասնագետները Թումանյանի տարածաշրջանում տարածքի կենդանական և բուսական աշխարհի առանձնահատկությունները բացահայտող, տեսարժան վայրերը պատկերող հարուստ լուսանկարչական նյութ ստեղծեցին, որը դեպի Լոռու մարզ նորանոր տուրիստների ներգրավման շարժառիթ կարող է հանդիսանալ:
- Ֆրանսիայից ժամանած գործընկերները փորձնական ռաֆթինգ իրականացրին՝ նավարկելով Դեբեդ գետով: Նախատեսվում է ուսումնասիրությունների արդյունքում մարզում զարգացնել ռաֆթինգը՝ որպես տուրիզմի այլընտրանքային ճյուղ:
- Նախատեսվում է Ախթալայում հիմնել թանգարան, եւ Ֆրանսիայից ժամանած մասնագետները այս տարի իրականացրին համապատասխան ուսումնասիրություններ:

Ագրոտուրիզմի բնագավառ՝

Ֆրանսիայից ժամանած ագրոտուրիզմի մասնագետները Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում անցկացրին ագրոտուրիզմի մասնագետների վերապատրաստման հնգօրյա դասընթաց՝ նախապես ընտրված 8 մասնակիցների համար, որոնք աշնանը մեկնեցին Ֆրանսիա եւ մասնակցեցին վերապատրաստման դասընթացների՝ ծանոթանալով տեղական փորձին:

Լոռու մարզը սերտորեն համագործակցում է նաեւ ֆրանսիական **Ռիոն Ալպ ռեգիոնի** հետ:

- ✓ Ռիոն Ալպյան Biotop եւ Հայաստանի Թոչնասերների ու Թոչնապահպանների միության էկոտուրիզմի զարգացման համատեղ ծրագրի շրջանակներում Դսեղում կառուցվել է աշնանը շահագործման է հանձնվել Թոչնասերների կենտրոնը:
- ✓ Ռիոն Ալպ ռեգիոնի Քայլարշավորդների ֆեդերացիայի ներկայացուցիչների կողմից Ստեփանավանի տարածաշրջանում իրականացվում է քայլարշավորդների ծրագիրը, որը ենթադրում է քայլարշավորդների վերապատրաստողների վերապատրաստում եւ այնուհետեւ՝ Քայլարշավորդների վերապատրաստման կենտրոնի հիմնում: Վերապատրաստողների վերապատրաստման դասընթացներին զուգահեռ իրականացվել է նաեւ քարտեզագրման աշխատանքներ եւ 16 քայլարշավային երթուղիների:
- ✓ Այս տարի եւս անցկացվեց G2IA-ի եւ Ռիոն Ալպի համատեղ Օձունի գանձեր ամենամյա ծրագիրը, որը իրենից ներկայացնում է միջհամայնքային տարեկան հանդիպում եւ գյուղմթերքի տոնավաճառ:

Մայիսին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը հյուրընկալեց Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան ժան Ֆրանսուա Շարպանտիեյին:

Մարզի քաղաքների կողմից ակտիվ համագործակցություն է ծավալվում քույր քաղաքների հետ: Լոռու մարզպետի գլխավորած պատվիրակության ՌԴ Մոսկվայի մարզի Դմիտրով այցելության շրջանակներում՝ Դմիտրով և Ստեփանավան քաղաքների միջև սեպտեմբերի 24-ին բարեկամական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագիր տորագրվեց՝ ընդլայնելով համագործակցության շրջանակները:

Մարզպետարանի Զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժինն աջակցել է ակտիվ մասնակցություն է ունեցել նաեւ ԵՄ եւ այլ դոնոր կառույցների կողմից իրականացվող ծրագրերի քննարկումներին, կազմակերպչական աշխատանքներին, հանդիպումներին:

Լոռու մարզում ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի թիվը հասնում է շուրջ 15-ի:

- ✓ Հայաստան-Վրաստան անդրսահմանային համագործակցություն ծրագրի վերջնական փուլը հաղթահարած ծրագրերից մեկը Լոռու մարզի էկոտուրիզմի զարգացման

«Հեծանվավարությունը եւ գյուղական համակցված միջսահմանային զբոսաշրջությունը որպես ինովացիոն մոտեցում անդրսահմանյան համագործակցության խթանման ուղղությամբ» ծրագիրն է: Ծրագրի կրողներից է ՀԿ կենտրոն հասարակական կազմակերպությունը: ԵՄ ներդրումը 225 հազ. եվրո է:

✓ ԵՄ ֆինանսավորմամբ «Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը Հայաստանում ավելի լավ ապագայի համար» ծրագիրը իրականացվում է CISP իտալական ՀԿ-ի կողմից:

✓ Եվրոմիությունը Հայաստանում ֆինանսավորում է նաեւ Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիրը, որը մեկնարկեց 2015-ին եւ որի արժեքը կազմում է 510000 եվրո: Սպիտակի քաղաքապետարանը հանդես է գալիս որպես համաֆինանսավորող: Ծրագրի իրականացնողը «Հաբիթաթ ֆոր հյումանիթի» ՀԿ-ն է:

✓ «ՀՀ մարզերում աղքատության նվազեցում տուրիզմի ներդրման միջոցով - հետագա զարգացումներ և կայունության ապահովում» ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ թիրախային մարզերում աղքատության նվազեցման գործընթացներին: Տևողությունը. 8 Հունվար, 2015 - 7 Հունվար, 2017: ԵՄ ներդրում. 200,000 €: Իրականացնող. ՍՈՍԵ բարեգործական հասարակական կազմակերպություն:

✓ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ համագործակցելով ԵՄ Հայաստանյան գրասենյակի հետ, իրականացնում է «Աջակցություն ՏԿՆ-ին, Աջակցություն տարածքային զարգացման գործընթացներին» ծրագիրը՝ հոլանդական **ECORYS** կազմակերպության աջակցությամբ:

Դիակոնիա հայ-հոլանդական բարեգործական կազմակերպության աջակցությամբ մարզում իրականացվում են բազմաթիվ բարեգործական միջոցառումներ՝ միտված հատկապես կարիքավոր եւ առողջական եւ այլ խնդիրներ ունեցող քաղաքացիների աջակցությանը: Հիմնադրամի ֆինանսավորմամբ մարզի համայնքներում իրականացվել են շուրջ **88.418 մլն** դրամ արժողությամբ բարեգործական՝ տնտեսական զարգացման եւ սոցիալական ուղղվածության ծրագրեր (հիշեցնենք, որ անցյալ տարի ներդրումը կազմում էր 73 մլն դրամ): Դրանցից են՝

- Ընթացքի մեջ գտնվող Թումանյան քաղաքի ծերերի կենտրոնի վերանորոգումը. ընդհանուր արժեքը՝ 17 մլն դրամ:
- Ընթացքի մեջ է նաեւ Ալավերդու տուբերկուլոզի կենտրոնի վերանորոգումը. 7.9 մլն դրամ ընդհանուր արժողությամբ:

UNICEF-ի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից շարունակվել են իրականացվել կրթական, երեխաների պաշտպանության, արտակարգ իրավիճակների պատրաստվածության եւ փախստականների եւ հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար կենսապայմանների բարելավման ծրագրեր:

Պերինատալ ծառայության բարելավման եւ նորածիններին մատուցվող բժշկական ծառայություններն արդյունավետ կազմակերպելու նպատակով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է ճառագայթային տաքացուցիչ:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փոխներկայացուցիչ Ռուդոլֆ Կոնիսին Լոռու մարզապետարանում հանդիպում ունեցավ մարզպետ Արթուր Նալբանդյանի հետ:

Հայաստանի մանուկներ հիմնադրամ (COAF) բարեգործական կազմակերպությունը ընդլայնում է գործունեությունը մարզի համայնքներում. Ներկայումս շահառու համայնքներն են Թումանյան, Դսեղ, Քարինջ, Մարց, Վահագնի, Դեբեդ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Անտառամուտ, Մեծ Այրում, Արեւածագ եւ Աքրի համայնքները:

Փրկենք երեխաներին միջազգային կազմակերպության կողմից մարզպետարանի հետ համագործակցությամբ Լոռու մարզի 3 համայնքներում՝ Շամլուղ, Ջրաշեն եւ Լեռնավան, իրականացվում է դպրոցահեն նախակրթարանների հիմնման ծրագիրը:

Ջարգացման Սկզբունքներ ՀԿ-ի և Հեյֆեր Հայաստանի ՀԳՌԿՄ (CARMAC) ծրագիրը իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսական ԾԻԳ-ի հետ համատեղ: Ծրագիրը աջակցում է համայնքներում արոտօգտագործողների կոոպերատիվների ստեղծմանը, մատուցում է խորհրդատվական ծառայություններ: Կոոպերատիվներին, համաֆինանսավորման կարգով, տրամադրվում է տրակտոր, հավաքիչ-մամլիչ, խոտհնձիչ, խոտհավաք, գութան, կուլտիվատոր, շարքացան և այլ գյուղատնտեսական տեխնիկա: Լոռու մարզում ծրագիրը իրականացվել է Լորուտ, Աթան, Դսեղ, Շամուտ, Ահնիձոր, Քարինջ, Մարց, Մեծ Պարնի գյուղերում:

ԱՐԴԻ (Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն) ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից, իրականացվում է Հայաստանում Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի հետ համատեղ: Ծրագրի նպատակն է գյուղական համայնքներում խթանել զբաղվածությունը՝ տնտեսական զարգացման խոչընդոտները վերացնելու ճանապարհով: Ծրագիրն աջակցություն է տրամադրում գյուղատնտեսության երեք հիմնական ոլորտներում՝ կաթի վերամշակում, մրգերի վերամշակում և գյուղական զբոսաշրջություն: Լոռու մարզում ծրագիրը իրականացվել է Դեբեդ, Դսեղ, Եղեգնուտ, Չկալով, Ահնիձոր, Լորուտ, Աթան, Շամուտ, Շնող, Թեղուտ, Նեղոց, Արճիս, Մեծ Այրում, Ճոճկան, Ախթալա, Քարկոպ, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Լուսաղբյուր գյուղերում:

Վորլդ Վիժըն Հայաստան ՄԲԿ-ի կողմից Լոռու մարզում 198,726.281հազ. դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրեր են իրականացվել սոցիալական, տնտեսական, կրթության, առողջապահության, երեխաների պաշտպանության, տուրիզմի և երիտասարդների ձեռներեցության զարգացման ոլորտներում (Ալավերդու տարածաշրջան՝ 84,424.219հազ. դրամ, Ստեփանավանի տարածաշրջան՝ 114,302.062հազ. դրամ):

Լոռու մարզի Ջրաշեն և Լեռնավան համայնքներում «**Սեյվ դը չիլդրեն**» միջազգային կազմակերպության ֆինանսական աջակցությամբ և նշյալ համայնքների ներդրմամբ հիմնվեցին նախադպրոցական կրթության կենտրոններ: Նախաձեռնությունը իրագործվեց Լոռու մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում: Ի դեպ՝ ծրագրի շրջանակներում նախակրթարան բացվեց նաև Շամլուղ համայնքում:

Հսկայական աշխատանքներ են տարվում ջրամատակարարման համակարգերի բարելավման ուղղությամբ: Ասիական զարգացման բանկի եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրերի միջոցներով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 սպասարկվող համայնքներում խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման համար: Ջրամատակարարման որակի բարձրացմանը միտված հաջորդ խոշոր ծրագիրը իրականացվում է Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում: «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում KFW գերմանական վարկային ծրագրի կողմից: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Արժանահիշատակ է Վանաձորում տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) հիմնման ծրագիրը: Այն մեկնարկել է 2013 թ-ին՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ «Էլ.հասարակության եւ մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի միջոցներով:

Նշենք, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը **Համաշխարհային Բանկի** օժանդակությամբ ձեռնարկել է «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիրը, որով նախատեսվում է վերակառուցել նաև 220 կՎ «Լոռի» և 110 կՎ «Թումանյան-1,2» օղային էլեկտրահաղորդման գծերը:

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶԴԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

2015թ երեք անգամ Լոռու մարզ է այցելել ՀՀ վարչապետը, որը Վանաձորում ծանոթացել է տեխնոպարկի շինարարական և թիվ 18 միջնակարգ դպրոցի վերակառուցման աշխատանքներին, հանդիպել Լոռու մարզի արդյունաբերողների հետ, այցելել Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկա, Սպիտակի տարածաշրջանում գտնվող «Ագրոհոլդինգ Արմենիա » ընկերություն: Այնուհետև Հովիկ Աբրահամյանը այցելել է Մարգահովիտ համայնք, որտեղ ծանոթացել է գրեթե 2 կմ երկարությամբ ճանապարհատվածի հիմնանորոգման ընթացքին:

2015թ երկու անգամ Լոռու մարզ է այցելել ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, ծանոթացել իրականացվող գյուղատնտեսական աշխատանքների ընթացքին, այցելել Սպիտակում գտնվող «Ագրոհոլդինգ Արմենիա » ընկերություն:

2015թ մարզ են այցելել նաև ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը, ինչպես նաև պաշտոնատար այլ անձիք, որոնց հետ քննարկվել են կոնկրետ ոլորտներին առնչվող հարցեր:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Լրատվություն

Լոռու մարզում գործում են 6 հեռուստաընկերություն, 2 ռադիոխմբագրություն, տեղական լրատվական մեկ կայք, 7 տպագիր պարբերական: Բացի տեղական լրատվամիջոցներից, մարզում լրագրական գործունեություն է ծավալում նաև հանրապետական զանգվածային լրատվամիջոցների 8 թղթակից:

Տպագիր լրատվամիջոցներ ունեն Վանաձորը (1 օրաթերթ, 1 շաբաթաթերթ, 4 պարբերաթերթ և 2 ամսագիր), Ալավերդին՝ 1 շաբաթաթերթ, Սպիտակը՝ 2 ամսաթերթ և Մարգահովիտ գյուղը՝ 1 պարբերաթերթ:

2015թ.-ի ընթացքում վերոհիշյալ լրատվամիջոցներով մարզպետարանի գործունեության մասին թողարկվել են բազմաժանր հաղորդումներ, պարբերաբար հրապարակվել են հոդվածներ, ոլորտներին վերաբերող տեղեկություններ, վերլուծություններ, պարզաբանումներ: Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում հեռուստաաշտարակային ցանցով հեռարձակվում են հանրապետական և օտարերկրյա թվով 8 հետևյալ հեռուստաընկերությունների հաղորդումները՝

- «Հ1» հանրային հեռուստաընկերություն
- «Հ2» հեռուստաընկերություն
- «Արմենիա» հեռուստաընկերություն
- «Շողակաթ», հեռուստաընկերություն
- «Շանթ» հեռուստաընկերություն

- «Կենտրոն» հեռուստաընկերություն
 - «Երկիր մեդիա» հեռուստաընկերություն (հեռարձակվում է միայն Վանաձորում):
 - PTP հեռուստաընկերություն:
- Բացի վերոհիշյալներից, Վանաձորում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ:

Մարզի առանձին գյուղական համայնքներում որոշակի դժգոհություն կա հեռուստահաղորդումների հեռարձակման թե որակի և թե թվաքանակի վերաբերյալ, որի բարելավման ուղղությամբ աշխատանքներ են տարվում Վանաձորի հեռահաղորդիչ կայանի ղեկավարության հետ: Ըստ կայանի պատասխանատուների՝ 2016թ. հունվարից թվային հեռարձակման անցնելուց հետո մարզի բոլոր համայնքները հնարավորություն կունենան դիտելու բոլոր 8 հեռուստածրագրերը որակյալ հեռարձակմամբ:

Հեռուստաընկերություն ունի 4 համայնք՝ Վանաձորը՝ 3, մեկական հեռուստաընկերություն Ալավերդի, Սպիտակ և Տաշիր քաղաքները:

Տեղական ռադիոցանց ունեն Վանաձոր և Սպիտակ քաղաքները:

Մարզային և հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով մշտապես լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող իրադարձությունները, մարզխորհրդի նիստերը, հանրային հնչեղության բանակցությունները, խորհրդակցությունները: Իսկ այնպիսի հարցերի մասին, որոնք իրենց բնույթով ռազմավարական, սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն են ունեցել, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների և գլխավոր մասնագետների հետ կազմակերպվել են հեռուստահարցազրույցներ, «Կլոր սեղան»-ներ, ասուլիսներ և այլն: 2015թ. ընթացքում կազմակերպվել է Լոռու մարզպետի 2 ասուլիս, որին ներկա են եղել ինչպես մարզային լրատվամիջոցները, այնպես էլ՝ հանրային ՋԼՄ-ների մարզային թղթակիցները:

2015թ.-ի ընթացքում մարզպետարանի աշխատակազմի գործունեության լուսաբանումը տեղական հեռուստահաղորդումներով կազմել է շուրջ 300 եթերաժամ, իսկ մարզային թերթում լուսաբանվում են բոլոր մեծ թե փոքր իրադարձային միջոցառումները, իսկ մարզխորհրդի նիստերը լուսաբանվել է ընդարձակ լրատվությամբ:

Մարզի բոլոր ՋԼՄ-ներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն Լոռու մարզպետարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, ծրագրերի, կազմակերպվող միջոցառումների մասին: Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների մարզային աշխատանքային այցելությունների ժամանակ ՋԼՄ-ների ներկայացուցիչներին տրամադրվել է մամլո հաղորդագրություններ, սահմանված կարգով կատարվել լրագրողների հավատարմագրում:

Հաշվետու տարվա ընթացքում սպասարկվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «Միասնական տեղեկատվական հարթակ» կայքէջի Լոռու մարզպետարանի «Մամլո հաղորդագրություն» բաժինը, ուր զետեղվել են հաղորդագրություններ մարզին առնչվող հանրային կարևորության իրադարձությունների, դեպքերի մասին:

Հանրապետական և տեղական լրատվամիջոցներում եղել են Լոռու մարզին վերաբերող հարյուրից ավելի կարևորագույն հրապարակումներ: Դրանց մի մասը եղել են քննադատական բնույթի՝ առավելապես բնապահպանական, սոցիալական, առողջապահական թեմաներով, որոնք օպերատիվ արձագանք են ստացել մարզպետի և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից:

2015թ.-ի ընթացքում պարբերաբար հարստացվել է տարածքային կառավարման միասնական համակարգում ընդգրկված մարզպետարանի պաշտոնական կայքը (<http://lori.mtaes.am>), որի «Տեղեկատվական հարթակ» բաժինը ընդգրկում է Լոռու մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ մշտապես նորացվող տեղեկատվությունները: «Նորություններ» էջում, լուսաբանվել է ՀՀ պաշտոնատար անձանց, արտերկրի պատվիրակությունների այցելությունները, մարզային հիշարժան դեպքերն ու

իրադարձությունները, ինչպես նաև «Ֆորտունա», «Անկյուն+3», «Միզ», «Սլավ մեդիա» հեռուստաընկերություններով յուրաքանչյուր շաբաթ հեռարձակվող «Մարզպետարանի ժամ» հաղորդաշարը, որը 2015թ. ընթացքում ունեցել է 40 թողարկում:

Մարզի գրեթե բոլոր համայնքները, չնչին բացառությամբ ունեն էլեկտրոնային հասցեներ և ինտերնետային կայք: Շուրջ 56 գյուղական համայնքներ համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով միացած են մարզպետարանի սերվերին, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպել էլեկտրոնային փասթաթղթաշարժը համայնք-համայնք և համայնք-մարզպետարան-նախարարություն-կառավարություն ուղղություններով: Աշխատանք Հասարակական կազմակերպությունների հետ

Մարզում գրանցում ունեն 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնցից ակտիվորեն գործում են շուրջ 30-ը: Դրանցից շատերը ակտիվ համագործակցում են մարզպետարանի աշխատակազմի գրեթե բոլոր ստորաբաժանումների հետ:

Մարզպետարանի հետ առավել ակտիվ փոխհամագործակցում են «Առավոտ», «Խաչվող ուղիներ», հունական «Էլպիդա», «Օրիուս» բնապահպանական, «Օրբան», «Հայկական Կարիտաս», կազմակերպությունները, «Հայկական Կարմիր Խաչի Լոռու մարզային կազմակերպություն», «Թռիչք», «Մշո զարմ», «Համալսարանական կրթությամբ կանայք», «Լիարժեք կյանք», «Ջանգակ», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» «Խուլերի կրթամշակութային կենտրոն», «Լուսաստղ», «Մանկական կենտրոն», և այլ ՀԿ-ներ:

Ազգային փոքրամասնություններ

Լոռու մարզի ներկայիս տարածքը խորհրդային տարիներին ազգային փոքրամասնություններով ամենաբնակեցվածներից էր: Որոշակի տարիների հանրապետության մասշտաբով ազգային փոքրամասնությունների շուրջ 50 տոկոսը բնակվում էր Տաշիրի, Թումանյանի և Գուգարքի տարածաշրջաններում: Սակայն վերջին մեկուկես-երկու տասնամյակներում տարածաշրջանում սկիզբ առած էթնիկական տեղաշարժերի հետևանքով արտագաղթեցին նաև մեծ թվով այլազգի բնակիչներ:

2015թ. հունվարի տվյալներով Լոռու մարզում բնակվում են 3107 ռուս, 875 հույն, 653 եզդի, 27 քուրդ, 8 ասորի, 349 այլ ազգերի ներկայացուցիչներ: Հիմնական բնիկ ազգաբնակչության՝ հայերի հետ նրանք ապրում են իրավահավասարության պայմաններում: Ազգային փոքրամասնությունները բոլոր պայմաններն ունեն ազգային մշակույթի ու կրթության պահպանման համար: Դրանց են նպատակաուղղված ազգային հասարակական ու մշակութային կազմակերպությունները:

Մարզպետարանը մշտապես ուշադրություն է նվիրում նաև մարզում բնակվող ազգային փոքրամասնությունների հարցերին՝ կապ պահպանելով նրանց հասարակական կազմակերպությունների հետ: Մարզում գործում է այդպիսի 5 կազմակերպություն՝ հունական սփյուռքի ազգապահպանական «Էլպիդա», «Պոնտոս» և «Ակմի», ազգային մշակույթի, կրթական և ազգամիջյան կապերի զարգացման հարցերով զբաղվող «Ուկրաինա» և ռուսազգի փոքրամասնության սոցիալական, մշակութային, կրթական հիմնախնդիրներով զբաղվող «Օբջեստվո Ռոսիի» ՀԿ-ների հետ: Նրանց ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են մարզխորհրդի նիստերին, պետական, ազգային տոների հանդիսություններին, համահամայնքային և մարզային միջոցառումներին: Տոնահանդեսներում կատարումներով հանդես է գալիս ուկրաինացիների երգչախումբը:

2015թ. Լոռու մարզի զանգվածային լրատվամիջոցները բազմիցս անդրադարձել են ազգային փոքրամասնությունների առօրյալի ու խնդիրների լուսաբանմանը, կրոնական կազմակերպությունների գործունեությանը:

Աշխատանք կրոնական կազմակերպությունների հետ

2015թ. ընթացքում Լոռու մարզում գործող կրոնական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ մարզպետարանի առնչությունները եղել են

համաձայն աշխատանքային պլանի և պաշտոնական գործառույթներից բխող հանգամանքներով:

ՀՀ Լոռու մարզպետի և կրոնական կազմակերպությունների ղեկավարների հետ հանդիպումները եղել են ըստ անհրաժեշտության՝ վերջիններիս ցանկությամբ:

2015թ.-ին ՀՀ Լոռու մարզպետի հետ գործնական հարցերով հանդիպումներ են ունեցել Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջանը, որի ընթացքում քննարկվել են Գուգարաց թեմին պատկանող «Ծիծեռնակ» ամառային ճամբարում սիրիահայ և Լոռու մարզի երեխաների ամառային հանգստի կազմակերպման, «Ձեռք մեկնիր եղբորդ» կարգախոսով Վանաձորում համաքաղաքային դրամահավաք կազմակերպելու, պետական, ազգային, մասնագիտական տոներին՝ սրբազան հոր, եկեղեցական տաղավար տոներին մարզային, համայնքային իշխանությունների ներկայացուցիչների մասնակցության մասին և այլ հարցեր:

Մարզպետն ընդունել է նաև Հայ Ավետարանչական եկեղեցու և «Ավետարանական հավատքի եկեղեցու» առաջնորդներին, ովքեր ցանկություն էին հայտնել մարզպետին ծանոթացնել իրենց կողմից ղեկավարվող եկեղեցիների խնդիրներին:

Ձևավորված ավանդույթով Գուգարաց թեմի հոգևոր հայրերը մշտապես իրենց մասնակցությունն են բերում ՀՀ պետական տոներին, տեղական մասսայական միջոցառումներին և տոնահանդեսներին: Փոխադարձաբար, հայ եկեղեցական տոներին և հիշատակի օրերին հրավիրվում և մասնակցում են Լոռու մարզպետը, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական, կառավարման մարմինների և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների, միջկրոնական հանդուրժողականության հարցերի շուրջ հանդիպումներ են եղել մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնյաների և Գուգարաց թեմի, Հայ Ավետարանչական, Ավետարանական հավատք, Եհովայի վկաներ, Մորմոնական եկեղեցիների ներկայացուցիչների միջև:

Կրոնական կազմակերպությունների առաջնորդները, ներկայացուցիչները որևէ դժգոհություն չունեն մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատուներից, պետական իշխանության մարմնի կողմից չի սահմանափակվել մարզի բնակչության խղճի և կրոնի ազատության սահմանադրական իրավունքը:

Ֆիդուցիար և Լեյբնիստիկ համայնքներում բնակվող մոլորկանները, որոնք «Պրիգունական» և այլ դավանանքների հետևորդ են, իրենց կրոնական ծեսերն ու միջոցառումներն անց են կացնում խիստ ինքնամփոփ մթնոլորտում: Այդ համայնքների երիտասարդությունը մոլեռանդություն չի դրսևորում, իսկ համանման միջոցառումները դիտվում են՝ որպես ազգային սովորությամբ պահպանվող ժողովրդական միջոցառումներ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Լոռու մարզային փրկարարական վարչությունը ամբողջությամբ և ժամանակին է կատարել 2015 թվականի ընթացքում «Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումները, վերադասի կողմից արձակված հրամանները, հրահանգները և հանձնարարականները, ինչպես նաև լրացուցիչ պահանջվող միջոցառումները:

Մշակվել և սահմանված կարգով մարզպետի հաստատմանն է ներկայացվել Լոռու մարզի տարածքում 2015 թ. ընթացքում հնարավոր ջրհեղեղների հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման մասին, որոշման նախագիծը հավելվածների հետ միասին, որը հաստատվել է 09 փետրվարի 2015թ. թիվ 27-Ա որոշմամբ:

2015թ. ճգնաժամային կառավարման կենտրոնի եւ '911' տարածքային ահազանգման կենտրոնի ստեղծում

2015 թվականի ընթացքում Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից սպասարկվել են արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման վերաբերյալ 696 ահազանգ, որոնցից՝ 378-ը – տեխնածին, 57-ը – տարերային, 261-ը – սոցիալ - կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Արտակարգ դեպքերի ու պատահարների հետևանքով զոհվել են 49, վիրավորվել 386 մարդ: Նյութական վնասի չափը կազմել է 3.100.400.762 դրամ:

2014 թ-ի ընթացքում ԼՄՓ վարչություն հաղորդագրություններ են ստացվել մարզում գրանցված 648 արտակարգ դեպքերի և պատահարների վերաբերյալ, որոնցից՝ 353-ը - տեխնածին, 54-ը - տարերային և 241-ը - սոցիալ-կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Զոհվել են 37, վիրավորվել 309 մարդ: Նյութական վնասը կազմել է 57.659.388 դրամ:

2014 թ-ի համեմատությամբ ընդհանուր դեպքերը աճել են 48-ով, ընդ որում՝ 25-ով տեխնածին, 3-ով տարերային բնույթի դեպքերը, սոցիալ-կենցաղային բնույթի դեպքերը 20-ով: Զոհվածների թիվը աճել է 12-ով, վիրավորներինը 77-ով: 2014 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ 3.042.741374 դրամով աճել է արտակարգ դեպքերի հետևանքով առաջացած նյութական վնասի չափը:

Դեպքերի արձագանքման և հետևանքների վերացման նպատակով ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների կողմից իրականացվել է՝ 1756 ելք (2014թ.՝ 1458), այդ թվում՝ հրդեհների - 311 (2014թ.՝ 295), վթարների և պատահարների - 177 (2014թ.՝ 173), կեղծ կանչի 23 (2014թ.՝ 28), կենցաղային օգնության - 195 (2014թ.՝ 131), այլ մեկնումներ - 1050 (2014թ.՝ 831):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անց են կացվել՝

❖ **Շտաբային ուսումնավարժություններ**

- ✓ հունիսի 23-ին «Հակառակորդի հարձակման դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով,
- ✓ ուսումնավարժությունից հետո Վանաձորի թիվ 3 հիմնական դպրոցում անցկացվեց գործնական պարապմունք՝ «Տարահանման մարմինների ծավալումը» թեմայով.
- ✓ ապրիլի 10-ից 23-ը «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով Ստեփանավան, Կուրթան, Գյուլագարակ, Գարգառ, Ամրակից, Հոբարձի, Լոռի Բերդ, Լեջան, Վարդաբլուր և Սարատովկա համայնքների կողմից,
- ✓ մայիսի 5-ից 20-ը «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով Խնկոյան, Արևաշող, Շենավան, Ղուրսալ, Լուսաղբյուր, Սարալանջ, Նոր Խաչակապ, Սարահարթ, Շիրակամուտ և Սպիտակ համայնքների կողմից,
- ✓ օգոստոսի 10-ից 24-ը «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը» թեմայով Աքրի, Մեծ Այրում, Օձուն, Ախթալա, Արդվի, Կաճաճկուտ, Ճոճկան, Թումանյան, Նեղոց և Քարկոփ համայնքների կողմից:

❖ **ՄՓՎ փրկարարական ծառայողների հետ անցկացված շտաբային ուսումնավարժություններ**

- ✓ մարտի 19-ին՝ «Հակառակորդի հարձակման դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով,
- ✓ սեպտեմբերի 24-ին՝ «Խոշոր անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպումը» թեմայով:

❖ **Ցուցադրական հատուկ փակփրկական ուսումնավարժություն.**

- ✓ հուլիսի 23-ին Վանաձոր քաղաքում անց է կացվել «Բազմաբնակարան շենքում գազի պայթյունի դեպքում բնակիչների պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն

❖ **Հատուկ տակտիկական ուսումնավարժություններ.**

- ✓ Նոյեմբերի 16-ին Վանաձորի Տիկնիկային թատրոնի կողմից «Հրդեհի դեպքում տարահանման կազմակերպումը և իրականացումը մշակութահաղիսարանային օբյեկտներում» թեմայով,
- ✓ Նոյեմբերի 17-ին Տաշիրի բժշկական կենտրոնի կողմից՝ «Հիվանդների պաշտպանության միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով,
- ✓ Նոյեմբերի 18-ին «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի Ստեփանավանի տարածքային կենտրոնի կողմից՝ «Էներգետիկ համակարգում վթարի հետևանքի վերացում» թեմայով,
- ✓ Նոյեմբերի 19-ին «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից «Ջրամատակարարման համակարգում վթարի դեպքում հետախուզության և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում» թեմայով,
- ✓ Նոյեմբերի 20-ին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի Թումանյանի տարածքային տեղամասի կողմից՝ «Միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով:

❖ **Օբյեկտային վարժանք.**

ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ համաձայն Լոռու ՄՓՎ անձնակազմի մասնակցությամբ մարտի 2-4-ը Հայաստանի Պետական Ազրարային Համալսարանի Վանաձորի մասնաճյուղում և Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջում, Ազրարակի միջնակարգ, Վանաձորի թիվ 25 /ներառական/, Վանաձորի թիվ 4, Վանաձորի թիվ 22 և Սպիտակի թիվ 1 հիմնական, Վանաձորի թիվ 18 միջնակարգ դպրոցներում անց է կացվել օբյեկտային վարժանքներ «Հակառակորդի հարձակման դեպքում տարահանման և փրկարարական միջոցառումների իրականացում» թեմայով, իսկ Վանաձորի պետական համալսարանում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղում, Վանաձորի թիվ 24, Արջուտի, Մեծ Պարնու և Ստեփանավանի թիվ 6 միջնակարգ և Վանաձորի թիվ 28, թիվ 21 հիմնական դպրոցներում անց է կացվել դասախոսություններ «Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությունը», «Մարզի ՔՊ համակարգը, խնդիրները» թեմաներով դասախոսություններ,

ՀՀ ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ սեպտեմբերի 7-10-ը ՄՓՎ անձնակազմի մասնակցությամբ Մխ. Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում, Վանաձորի պետական շինարարական քոլեջում, Վանաձորի թիվ 26 հիմնական, Վանաձորի թիվ 11 ավագ, Վանաձորի թիվ 30 հիմնական, Եղեգնուտի միջնակարգ, Տաշիրի թիվ 4 միջնակարգ, Սպիտակի թիվ 4 միջնակարգ դպրոցներում անցկացվեցին օբյեկտային վարժանքներ՝ «Հրդեհի առաջացման դեպքում հրդեհաշիջման և տարահանման միջոցառումների իրականացում» թեմայով, իսկ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղում, Վանաձորի պոլիտեխնիկական պետական քոլեջում. Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ, Վանաձորի թիվ 17 ավագ, Վանաձորի թիվ 19 հիմնական, Ալավերդու թիվ 5 ավագ, Ամրակիցի միջնակարգ, Սարատովկայի միջնակարգ դպրոցներում անցկացվեցին դասախոսություններ՝ «ՀՀ ԱԻ նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները» թեմայով,

«Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 30.01.2003թ-ի թիվ 134-Ն որոշման համաձայն, ՀՀ Լոռու մարզպետի կողմից 09.01.2015 թ-ին հաստատված պլանի ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների

նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2015թ. ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացներին 2015թ-ի ընթացքում ուսուցման ծրագրով նախատեսված 40 ուսուցանվողներից փաստացի ուսուցում են անցել 34 մասնակիցներ:

Կապի և ազդարարման համակարգ

Մարզում բացակայում է կենտրոնացված ազդարարման համակարգը, քանի որ այն չի սպասարկվում «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից: Բնակչության ազդարարման համար պահանջվող 260 էլ. շջակներից առկա են 31-ը, որոնք անսարք են:

Մեծավանի և Գետիկի ջրամբարների պատվարների փլուզման դեպքում հնարավոր ջրածածկման գոտում գտնվող թվով 6 համայնքների բնակչությանն ազդարարելու նպատակով, ՀՀ ԱԻՆ ՓԾ-ի կողմից մարզում տեղադրվել է վաղ ազդարարման համակարգ, որի ղեկավարումն պետք է իրականացվի ԼՄՓ վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնից: Համակարգում ընդգրկված են 19 էլեկտրաշջակներ՝ Տաշիր-7, Մեծավան-4, Միխայլովկա-2, Շիրականուտ-3, Սարահարթ-2, Գեղասար-1: Ալավերդի, Ախթալա և Տավուշի մարզի Այրում համայնքներում, Դեբեդ գետի ավազանի հնարավոր ջրածածկման գոտում գտնվող տեղամասերում, Գերմանական GTZ ծրագրով 2010թ-ին տեղադրվեցին ևս 7 շջակներ և միացվեցին նույն համակարգին: (Ալավերդի 5, Ախթալա 1, Այրում 1), սակայն համակարգը ներկա պահին չի գործում:

ԶՈՐԱԿՈՉ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում մարզում զորակոչը կազմակերպելու և անցկացնելու նպատակով համակարգվել է մարզային ոստիկանության, դատախազության, տարածաշրջանային զինվորական կոմիսարիատների, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկ-ձեռնարկությունների գործունեությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զորակոչային տարիքի և 16 տարեկանը լրացած պատանիների հաշվառման, կցագրման, զորակոչից խուսափող զինակոչիկների հայտնաբերման և նրանց զորակոչելու ուղղությամբ:


2015թ. զորակոչի պետական առաջադրանքը կատարվել է 103.4 %-ով (2014թ. ձմեռային զորակոչը 101.8%, 2015թ. ամառային՝ 105.1%):

Համակարգվել է այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների հետ տարվող աշխատանքները:

Մարզի տարածքում տեղակայված զինվորական ստորաբաժանումներին ցուցաբերվել է տարաբնույթ օժանդակություն: Տարածաշրջանային զինկոմիսարիատներին աջակցություն է ցույց տրվել վարժական հավաքների կազմակերպման աշխատանքում: Մարզպետարանի կողմից իրականացրած կազմակերպչական միջոցառումների շնորհիվ վերոնշյալ հավաքները կատարվել են բարձր մակարդակով և ժամանակին:

2015թ. սեպտեմբերի 3-ից 6-ը ՀՀ Լոռու մարզում անց է կացվել «ՇԱՆԹ 2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժություն «Պետական և զինվորական կառավարման մարմինների աշխատանքը՝ պաշտպանությանը պետության անմիջական նախապատրաստության և ազդեցիկի հետմղման ընթացքում» թեմայով, որը անց է կացվել պահանջվող մակարդակով:

Զորակոչ




ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ


Լոռու մարզի ոստիկանության վարչության և ենթակա բաժինների կողմից 2015թ. ընթացքում գրանցվել է **1151** հանցագործություն, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 20-ով կամ 1.7%-ով: Բացահայտումը կազմել է **89.0%**, կամ 3.6%-ով պակաս քան 2014թ.-ին:

ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Տնտեսական հանցագործություն - 19 հանցադեպ, 2014թ. համեմատ նվազել է 7-ով կամ 26.9 %-ով

Այլ ծառայությունների գծով - 1132 հանցադեպ, 2014թ. համեմատ նվազել է 13-ով կամ 1.13%-ով:





2015թ. նախորդ տարվա համեմատ փոփոխվել է հետևյալ հանցատեսակների քանակը.
 Սպանություններ 2 հանցադեպ՝ նվազել է 4 դեպքով կամ 66.3%-ով
 Անձնական գույքի հափշտակում 341 հանցադեպ՝ աճել է 47-ով կամ 16.0%-ով
 Հասարակական վայրերում կատ. հանցագործութ. 24 հանցադեպ՝ նվազել է 37-ով դեպքով
 կամ 164.8%-ով

Անչափահասների կողմից կատարված հանցագործությունները.

44 հանցադեպ՝ նախորդ տարվա նկատմամբ աճել է 2-ով կամ 4.5%-ով:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզպետարանում կա 149 հաստիք, որից 133 քաղաքացիական ծառայողների հաստիքներ են (27-ը առանձնացված ստորաբաժանումներում), որից թափուր է 1-ը: 2 պաշտոններ ժամանակավոր (ֆիզ.արձակուրդ) թափուր են:

2015 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 12 մրցույթ, անց է կացվել 11-ը (1 մրցույթի համար դիմորդ չի եղել), ընդհանուր դիմորդների քանակը՝ 37, մասնակիցների քանակը 28 և 6 կրտսեր պաշտոնների մրցույթներ (դիմորդների քանակը՝ 6), իսկ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնելու համար՝ 1 մրցույթ:

Կատարվել է պաշտոնավարման ժամկետի 3 երկարացում:

Վերապատրաստվել են 35 քաղաքացիական ծառայողներ, ատեստավորվել են՝ 31-ը (11-ը գլխավոր, 18-ը առաջատար և կրտսեր, 2 բարձրագույն պաշտոններ):

2015 թվականի ընթացքում աշխատանքից ազատվել են 9 քաղծառայողներ, ընդունվել 12-ը: 4 քաղաքացիական ծառայողներ արտամրցույթային կարգով նշանակվել են նոր պաշտոնի: Քաղաքացիական ծառայության մասով չի խրախուսվել ոչ մի աշխատակից, կարգապահական տույժի է ենթարկվել 2-աշխատակից: 12 քաղծառայողների շնորհվել է իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված դասային աստիճան, 4 քաղծառայողների իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան:

2015թ-ին նախապատրաստվել են՝

- ✓ Լոռու մարզպետի 67 որոշումների և 293 կարգադրությունների նախագծերը,
- ✓ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 343 հրամանների նախագծեր,
- ✓ մրցույթով անցած 8 դպրոցի տնօրենների, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի 9 փոխարինողների աշխատանքային պայմանագրերի նախագծերը,
- ✓ ՔԾԽ-ի 71 գրությունների պատասխանների նախագծեր,
- ✓ 2 քաղաքացիների դիմումների պատասխանների նախագծեր:

Ամփոփվել է աշխատակազմի կիսամյակային և տարեկան կատարողականների գնահատման արդյունքները (բոլոր աշխատակիցները ունեցել են կատարողականի 75%-ից բարձր ցուցանիշ):

ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2015Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


2015թ. ընթացքում մարզպետի կողմից

- ընդունվել է 404 որոշում,
- արձակվել է 338 կարգադրություն:

Մարզպետի որոշումները վերաբերում են հետևյալ հարցերին.


• առողջապահություն և սոց. Ապահովություն	89	22.03%
• կադրային հարցեր	41	10.15%
• կրթություն, մշակույթ և սպորտ	82	20.3%
• ֆինանսական հարցեր	115	28.46%
• այլ	77	19.06%

Ընդունված որոշումներից 2-ը նորմատիվ են և առնչվում են առողջապահական ոլորտին:



Մարզպետի կարգադրությունները վերաբերում են հետևյալ հարցերին.

• կադրային հարցեր	275	81.4%
• ֆինանսական հարցեր	5	1.48%
• առողջապահություն և սոց. ապահովություն	15	4.44%
• կրթություն	7	2.08%
• այլ	36	10.6%



Իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննություն, խմբագրման աշխատանքներ, համարակալում, գրանցում գրանցամատյաններում և էլեկտրոնային առաքում շահագրգիռ ստորաբաժանումներին: Մարզպետի որոշումների և կարգադրությունների պատճենները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից 2015թ. ընթացքում արձակվել է 361 հրաման՝ հիմնականում կադրային հարցերի վերաբերյալ:

2015թ. ընթացքում մարզպետի նախաձեռնությամբ կազմվել է վարչական վարույթի 1 գործ ներմարզային սպասարկման ժամկետը լրացած և թափուր երթուղիները փոխադրողներին հատկացնելու մրցույթի հաղթողներ ճանաչելու վերաբերյալ:

2015թ. ընթացքում «Գումարի բռնագանձման պահանջի մասին» հայցադիմումներ են ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Լուսաղբյուր և Շնող համայնքների ղեկավարների:

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Ստեփանյանի դեմ Լոռու մարզպետարանը հայց է ներկայացրել հետադարձ պահանջի իրավունքով գումարի բռնագանձման պահանջի մասին, որը բավարարվել է և վճիռն ստացել է օրինական ուժ: Վերադարձման ենթակա գումարը կազմում է 7183525 դրամ:

2015թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն Լոռու մարզի 39 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն, որի արդյունքում կազմվել են ակտեր: Կազմված ակտերը քննարկվել են փոխմարզպետների մոտ և հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են մեթոդական ցուցումներ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել է շուրջ 150 քաղաքացիների ընդունելություն, անհրաժեշտության դեպքում՝ իրավական խորհրդատվություն:

2015թ. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2015թ. ընթացքում Լոռու մարզպետարանում մուտք է արվել **16920** գործ (պաշտոնական և ոչ պաշտոնական գրություններ, հանձնարարականներ, դիմումներ և այլն), ընթացք տրված կամ առաքված գործերի քանակը կազմում է ավելի քան **6600**:

2015թ. Մulberri համակարգ է մուտքագրվել **4320** պաշտոնական գրություն, որից **1290**-ը հսկողական գրություններ են: Դրանցից **1205** հանձնարարականի պատասխանվել է սահմանված կարգով և ժամկետներում, մնացած հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակաշրջանում անցանց համակարգով և առձեռն եղանակով մարզպետարան է մուտք եղել շուրջ **2602** դիմում, բողոք, առաջարկություն, տեղեկատվական հարցում, որոնցից **173** -ը ստացվել են Նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովից, ՀՀ Կառավարությունից, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից

Քաղաքացիների ընդունելության կարգի պահանջների համաձայն, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՀՀ Լոռու մարզպետի մոտ ընդունելության գրանցվողների հետ նախնական ընդունելություն /թվով մոտ **821** քաղաքացի/, որոնց պարզաբանվել և մեթոդական ու իրավախորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել, բացատրվել է նրանց իրավունքները, ուղղորդվել ըստ դիմումի բովանդակության, տարբեր մարմիններ ու գերատեսչություններ: Նշված քաղաքացիներից թվով **302** -ը գրանցվել են մարզպետի մոտ ընդունելության, որից **234**-ը Վանաձորում, իսկ **68**-ը տարածաշրջաններում, նրանց բարձրացրած հարցերին տրվել են համապատասխան պարզաբանումներ և ցուցաբերվել համապատասխան աջակցություններ և օժանդակություն: Բավարարվել է **183** խնդրանք, որից **144**-ը Վանաձորում:

Մարզպետարան հասցեագրված դիմումների շարժը հետևյալն է՝

	թվաքանակը	% հարաբերությամբ
Վանաձորից	1002	38.46
Ստեփանավանից	101	3.89
Տաշիրից	87	3.35
Սպիտակից	112	4.31
Ալավերդուց	114	4.39
Թումանյան	71	2.73
Ախթալայից	48	1.85
Երևանից	23	0.87
Սպիտակի տարածաշրջանից	160	6.15
Գուգարքի տարածաշրջանից	189	7.27
Թումանյանի տարածաշրջանից	160	6.15
Ստեփանավանի տարածաշրջանից	170	6.54
Տաշիրի տարածաշրջանից	60	2.31
Մարզպետարան	265	10.19
Այլ	40	1.54

Ըստ բովանդակության դիմումները դասակարգվում են.

	թվաքանակը	%
տնակի և բնակարանային	37	1.42
կոմունալ-կենցաղային	69	2.65
շինարարական	15	0.58
գյուղատնտեսական	10	0.38
առողջապահության	258	9.92
կրթական և մանկ. հիմն	94	3.62
օրինականության/միգրացիա/	650	25
Քաղ.և որդեգր. հաշվառ	11	0.42
աշխ. և աշխատավարձի	50	1.92
ապարատային	265	10.20
այլ հարցեր	50	1.92
սեփականաշնորհում	33	1.27
սոցիալական և նպաստ	902	34.62
տարածքի	38	1.46
բողոքներ	51	1.96
մշակույթի	12	0.46
տեղեկատվություն ստանալու մասին	41	1.58
ավանդների փոխհատուցում	16	0.62

2015թ-ի ընթացքում Լոռու մարզպետարան տարբեր եղանակներով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից մուտքագրվել է շուրջ **10 020** գրություն, որոնց տրվել է համապատասխան ընթացք՝ սահմանված կարգի պահպանմամբ:

2015թ. ընթացքում իրականացվել է Լոռու մարզպետի մոտ կայացած թվով **28** խորհրդակցությունների, ինչպես նաև Լոռու մարզի խորհրդի թվով **4** նիստերի արձանագրում, հանձնարարականների առաքում ըստ հասցեատերերի և այլն:

« ԼՈՌՈՒ ՄԱՐԶԴԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ